

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 17

Ապահովագրության պայմանագրեր

Նպատակը

1. «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՄ 17-ը սկզբունքներ է սահմանում սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող *ապահովագրության պայմանագրերի* ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման համար: ՖՀՄՄ 17-ի նպատակն է՝ ապահովել կազմակերպության կողմից տեղին տեղեկատվության տրամադրումը, որը ճշմարիտ է ներկայացնում այդ պայմանագրերը: Այս տեղեկատվությունը ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հիմք է տալիս՝ գնահատելու ապահովագրության պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա:
2. ՖՀՄՄ 17-ը կիրառելիս կազմակերպությունը պետք է դիտարկի իր իրական իրավունքներն ու պարտականությունները, անկախ այն հանգամանքից, դրանք բխում են պայմանագրից, օրենքից, թե այլ իրավական ակտերից: Պայմանագիրը երկու կամ ավելի կողմերի միջև համաձայնություն է, որն առաջացնում է իրավաբանորեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ: Պայմանագրում իրավունքների և պարտականությունների իրավաբանորեն ամրագրված լինելը երաշխավորված է օրենքով: Պայմանագրերը կարող են լինել գրավոր, բանավոր կամ բխեն կազմակերպության սովորական բիզնես գործելակերպից: Պայմանագրային պայմանները ներառում են պայմանագրի բոլոր պայմանները՝ բացահայտ կամ ենթադրյալ, սակայն կազմակերպությունը չպետք է հաշվի առնի այն պայմանները, որոնք չունեն առևտրային բովանդակություն (այսինքն՝ պայմանագրի տնտեսական կողմի վրա տեսանելի ազդեցություն չունեն): Պայմանագրի ենթադրյալ պայմանները ներառում են պայմաններ, որոնք բխում են օրենքից կամ այլ իրավական ակտերից: Հաճախորդների հետ պայմանագրեր կնքելու գործելակերպն ու գործընթացները տարբերվում են՝ կախված իրավակարգերից, տնտեսության ճյուղերից և կազմակերպություններից: Ավելին, դրանք կարող են տարբերվել անգամ միևնույն կազմակերպության ներսում (օրինակ՝ կարող են կախված լինել հաճախորդի դասից կամ խոստացված ապրանքների կամ ծառայությունների բնույթից):

Գործողության ոլորտը

3. Կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՄ 17-ը՝
 - ա) իր կողմից թողարկվող ապահովագրության պայմանագրերի, ներառյալ *վերաապահովագրության պայմանագրերի* նկատմամբ.
 - բ) իր կողմից պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ. և

գ) իր կողմից թողարկվող *հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերի* նկատմամբ, պայմանով, որ կազմակերպությունը նաև ապահովագրության պայմանագրեր է թողարկում:

4. ՖՀՄՍ 17-ում ապահովագրության պայմանագրերին կատարված բոլոր հղումները նաև կիրառվում են՝

ա) պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ՝

(i) թողարկված ապահովագրության պայմանագրերին կատարված հղումների. և

(ii) 60-70-րդ պարագրաֆներում նկարագրված դեպքերի.

բ) պարագրաֆ 3(գ)-ում սահմանված հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ պարագրաֆ 3(գ)-ում ապահովագրության պայմանագրերին կատարված հղմանը և 71-րդ պարագրաֆում նկարագրված դեպքերի:

5. ՖՀՄՍ 17-ում թողարկված ապահովագրության պայմանագրերին կատարված բոլոր հղումները կիրառվում են նաև ապահովագրության այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կազմակերպության կողմից ձեռք են բերվել ապահովագրության պայմանագրերի փոխանցման կամ բիզնեսի միավորման գործարքի արդյունքում, բացառությամբ պահվող վերաապահովագրության պայմանագրերի:

6. Հավելված Ա-ն սահմանում է ապահովագրության պայմանագիրը, իսկ Հավելված Բ-ի Բ2-Բ30 պարագրաֆները ապահովագրության պայմանագրի սահմանման վերաբերյալ ուղեցույց են տրամադրում:

7. Կազմակերպությունը չպետք է կիրառի ՖՀՄՍ 17-ը՝

ա) արտադրողի, դիլերի կամ մանրածախ վաճառողի կողմից իր ապրանքների կամ ծառայությունների վաճառքի հետ կապված՝ հաճախորդին տրամադրված երաշխիքների նկատմամբ (տե՛ս «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ՖՀՄՍ 15-ը).

բ) աշխատակիցների հատուցումների պլաններից առաջացող գործատուների ակտիվների և պարտավորությունների նկատմամբ (տե՛ս «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՍ 19-ը և «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում» ՖՀՄՍ 2-ը) և սահմանված հատուցումների կենսաթոշակային պլանների շրջանակներում առաջացող՝ կենսաթոշակային հատուցումների գծով պարտականությունների նկատմամբ (տե՛ս «Թոշակային հատուցումների պլանների հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները» ՀՀՄՍ 26-ը).

գ) պայմանագրային իրավունքների կամ պայմանագրային պարտականությունների նկատմամբ՝ պայմանավորված ոչ ֆինանսական հոդվածի ապագա օգտագործումով կամ օգտագործման իրավունքով (օրինակ՝ որոշ

լիցենզիայի վճարներ, ռոյալթիներ, փոփոխուն և այլ պայմանական վարձավճարներ և համանման հոդվածներ. տե՛ս ՖՀՄՍ 15-ը, «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ը և «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ը).

- դ) արտադրողի, դիլերի կամ մանրածախ վաճառողի կողմից տրամադրված մնացորդային արժեքի երաշխիքների և վարձակալի՝ մնացորդային արժեքի երաշխիքների նկատմամբ, երբ դրանք պարունակվում են վարձակալությունում (տե՛ս ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 16-ը).
- ե) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ, երբ դրանց թողարկողը նախկինում բացահայտ կերպով հայտարարել է, որ նման պայմանագրերը դիտարկում է որպես ապահովագրության պայմանագրեր, և կիրառել է ապահովագրության պայմանագրերի նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառումը: Թողարկողը պետք է ընտրություն կատարի՝ ֆինանսական երաշխավորության նման պայմանագրերի նկատմամբ կիրառել կա՛մ ՖՀՄՍ 17-ը կա՛մ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32-ը, «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ՖՀՄՍ 7-ը և «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը: Թողարկողը կարող է այս ընտրությունը կատարել պայմանագիր առ պայմանագիր, սակայն յուրաքանչյուր պայմանագրի համար կատարված ընտրությունը փոփոխման ենթակա չէ.
- զ) բիզնեսի միավորման դեպքում վճարման կամ ստացման ենթակա պայմանական հատուցման նկատմամբ (տե՛ս «Բիզնեսի միավորումներ» ՖՀՄՍ 3-ը).
- է) ապահովագրության պայմանագրերի նկատմամբ, որոնցում տվյալ կազմակերպությունը հանդիսանում է *ապահովադիր*, բացառությամբ, եթե այդ պայմանագրերը իր կողմից պահվող վերաապահովագրության պայմանագրեր են (տես պարագրաֆ 3(բ)):

8. Որոշ պայմանագրեր բավարարում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, բայց իրենց առաջնային նպատակը հաստատուն վճարի դիմաց ծառայությունների մատուցումն է: Կազմակերպությունն իր կողմից թողարկվող նմանատիպ պայմանագրերի նկատմամբ ՖՀՄՍ 17-ի փոխարեն կարող է ընտրել կիրառելու ՖՀՄՍ 15-ը, այն և միայն այն դեպքում, երբ սահմանված պայմանները բավարարված են: Կազմակերպությունը կարող է այդ ընտրությունը կատարել պայմանագիր առ պայմանագիր, սակայն յուրաքանչյուր պայմանագրի համար կատարված ընտրությունը փոփոխման ենթակա չէ: Նշված պայմաններն են՝

- ա) կազմակերպությունը չի դիտարկում առանձին հաճախորդների հետ կապված ռիսկի գնահատումը՝ այդ հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս,
- բ) պայմանագիրը փոխհատուցում է հաճախորդին՝ ծառայություններ մատուցելու, այլ ոչ թե հաճախորդին դրամական վճարումներ կատարելու միջոցով,

- գ) պայմանագրով փոխանցվող *ապահովագրական ռիսկը* գլխավորապես առաջանում է հաճախորդի կողմից ծառայություններից օգտվելուց, այլ ոչ թե այդ ծառայությունների արժեքի գծով անորոշությունից:

Ապահովագրության պայմանագրերի համախմբում

9. Միևնույն կամ կապակցված կոնտրագենտի հետ կնքված ապահովագրության պայմանագրերի փաթեթը կամ շարքը կարող է հետապնդել կամ նախատեսված լինել հետապնդելու ընդհանուր առևտրային արդյունք: Նման պայմանագրերի էությունն արտացոլելու համար կարող է անհրաժեշտ լինի ապահովագրության պայմանագրերի փաթեթը կամ շարքը դիտարկել որպես մեկ ամբողջություն: Օրինակ, եթե մի պայմանագրում իրավունքները կամ պարտականությունները ներառվել են միայն նրա համար, որպեսզի ամբողջությամբ բացառեն միևնույն կոնտրագենտի հետ միևնույն պահին կնքված մեկ այլ պայմանագրի գծով իրավունքների կամ պարտականությունների առկայությունը, այդ պայմանագրերի համախմբված արդյունքը իրավունքների կամ պարտականությունների բացակայությունն է:

Ապահովագրության պայմանագրից բաղադրիչների առանձնացումը (պարագրաֆներ F31-F35)

10. Ապահովագրության պայմանագիրը կարող է պարունակել մեկ կամ մի քանի բաղադրիչներ, որոնք մեկ այլ ստանդարտի գործողության ոլորտում կգտնվեին, եթե առանձին պայմանագրեր լինեին: Օրինակ, ապահովագրության պայմանագիրը կարող է ներառել *ներդրումային բաղադրիչ* կամ ծառայության բաղադրիչ (կամ երկուսը միաժամանակ): Կազմակերպությունը պետք է կիրառի 11-13-րդ պարագրաֆները՝ պայմանագրի բաղադրիչների նույնականացման և դրանց հաշվառման համար:
11. Կազմակերպությունը պետք է՝
- ա) կիրառի ՖՀՄՍ 9-ը որոշելու՝ արդյոք առկա է պարունակվող ածանցյալ գործիք, որը պետք է առանձնացվի և, եթե առկա է՝ ինչպես հաշվառել այդ ածանցյալ գործիքը.
 - բ) հիմնական ապահովագրության պայմանագրից առանձնացնի ներդրումային բաղադրիչը այն և միայն այն դեպքում, եթե այդ ներդրումային բաղադրիչը առանձնացվելի է (տես F31-F32 պարագրաֆները): Կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՍ 9-ը առանձնացված ներդրումային բաղադրիչի հաշվառման համար:
12. 11-րդ պարագրաֆի համաձայն պարունակվող ածանցյալ գործիքներին և առանձնացվելի ներդրումային բաղադրիչներին վերաբերող բոլոր դրամական հոսքերն առանձնացնելուց հետո, կազմակերպությունը հիմնական ապահովագրության պայմանագրից պետք է առանձնացնի ապահովագրիչն առանձնացվելի ապրանքներ կամ ոչ ապահովագրական ծառայություններ փոխանցելու ցանկացած խոստում՝ կիրառելով ՖՀՄՍ 15-ի 7-րդ պարագրաֆը: Նման խոստումները կազմակերպությունը պետք է

հաշվառի՝ կիրառելով ՖՀՄՄ 15-ը: Խոստումն առանձնացնելու նպատակով ՖՀՄՄ 15-ի 7-րդ պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՄ 17-ի Բ33-Բ35 պարագրաֆները և, սկզբնական ճանաչման պահին, պետք է՝

- ա) կիրառի ՖՀՄՄ 15-ը՝ վերագրելու դրամական ներհոսքերը ապահովագրության բաղադրիչին և առանձնացվելի ապրանքներ կամ ոչ ապահովագրական ծառայություններ տրամադրելու ցանկացած խոստմանը, և
- բ) դրամական արտահոսքերը վերագրի ապահովագրության բաղադրիչին և ապրանքներ կամ ոչ ապահովագրական ծառայություններ տրամադրելու ցանկացած խոստմանը, որոնք հաշվառվում են ՖՀՄՄ 15-ի համաձայն, այնպես, որ՝
 - (i) դրամական արտահոսքերը, որոնք անմիջականորեն առնչվում են յուրաքանչյուր բաղադրիչին, վերագրվեն այդ բաղադրիչին, և
 - (ii) ցանկացած մնացորդային դրամական արտահոսքեր վերագրվեն պարբերական և խելամիտ հիմունքով՝ արտացոլելով դրամական արտահոսքերը, որոնց առաջացումը կազմակերպությունը կակնկալեր, եթե այդ բաղադրիչը առանձին պայմանագիր լիներ:

13. 11-12-րդ պարագրաֆները կիրառելուց հետո կազմակերպությունը հիմնական ապահովագրության պայմանագրի բոլոր մնացած բաղադրիչների նկատմամբ պետք է կիրառի ՖՀՄՄ 17-ը: Այնուհետև պարունակվող ածանցյալ գործիքներին ՖՀՄՄ 17-ում կատարված բոլոր հղումները վերաբերում են ածանցյալ գործիքներին, որոնք չեն առանձնացվել հիմնական ապահովագրության պայմանագրից, իսկ ներդրումային բաղադրիչին կատարված բոլոր հղումները վերաբերում են ներդրումային բաղադրիչներին, որոնք չեն առանձնացվել հիմնական ապահովագրության պայմանագրից (բացառությամբ Բ31-Բ32 պարագրաֆներում կատարված հղումների):

Ապահովագրության պայմանագրերի ընդհանրացման մակարդակը

14. Կազմակերպությունը պետք է նույնականացնի *ապահովագրության պայմանագրերի պորտֆելներ*: Պորտֆելը բաղկացած է համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող պայմանագրերից: Ենթադրվում է, որ նույն ապրանքային ուղղությունում ներառված պայմանագրերը կունենան համանման ռիսկեր և, հետևաբար, ակնկալվում է, որ կլինեն միևնույն պորտֆելում, եթե դրանք կառավարվում են միասին: Ենթադրվում է, որ տարբեր ապրանքային ուղղությունում (օրինակ՝ միանվագ ապահովագրական վճարների հաստատուն անուիտետը համեմատած որոշակի ժամկետով կյանքի ապահովագրության հետ) ներառված պայմանագրերը չեն ունենա համանման ռիսկեր և հետևաբար, ակնկալվում է, որ կլինեն տարբեր պորտֆելներում:
15. 16-24-րդ պարագրաֆները կիրառվում են թողարկված ապահովագրության պայմանագրերի նկատմամբ: Պահվող վերաապահովագրության պայմանագրերի

ընդհանրացման մակարդակին ներկայացվող պահանջները սահմանված են 61-րդ պարագրաֆում:

16. Կազմակերպությունը թողարկված ապահովագրության պայմանագրերի պորտֆելը նվազագույնը պետք է բաժանի հետևյալ խմբերում՝
- ա) պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին դասակարգվել են որպես անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են,
 - բ) պայմանագրերի խումբ, որոնց սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ դրանք հետագայում կդառնան անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են, և
 - գ) պորտֆելի մնացած պայմանագրերի խումբ, եթե այդպիսիք առկա են:
17. Եթե կազմակերպությունն ունի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն, եզրակացնելու, որ 16-րդ պարագրաֆի կիրառման արդյունքում պայմանագրերի փաթեթն ամբողջությամբ կներառվի միևնույն խմբում, ապա կարող է գնահատել այդ պայմանագրերի փաթեթը՝ որոշելու, թե արդյոք պայմանագրերն անբարենպաստ են (տես 47-րդ պարագրաֆը) և գնահատել պայմանագրերի փաթեթը, որոշելու՝ արդյոք չկա նշանակալի հավանականություն, որ հետագայում պայմանագրերը կդառնան անբարենպաստ (տես 19-րդ պարագրաֆը): Եթե կազմակերպությունը չունի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն, եզրակացնելու, որ պայմանագրերի փաթեթն ամբողջությամբ կներառվի միևնույն խմբում, ապա պետք է ըստ առանձին պայմանագրերի որոշի, թե որ խմբին են դրանք պատկանում:
18. Թողարկված այն պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կազմակերպությունը կիրառում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը (տես 53-59-րդ պարագրաֆները), կազմակերպությունը պետք է ենթադրի, որ սկզբնական ճանաչման պահին պորտֆելի ոչ մի պայմանագիր անբարենպաստ չէ, քանի դեռ փաստերն ու հանգամանքները հակառակը չեն ցուցադրում: Կազմակերպությունը, կիրառելի փաստերի և հանգամանքների փոփոխության հավանականությունը գնահատելով, պետք է որոշի՝ չկա արդյոք նշանակալի հավանականություն, որ պայմանագրերը, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ չեն, հետագայում կդառնան անբարենպաստ:
19. Թողարկված այն պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կազմակերպությունը չի կիրառում ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը (տես 53-59-րդ պարագրաֆները), պետք է գնահատի՝ չկա արդյոք նշանակալի հավանականություն, որ պայմանագրերը, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ չեն, հետագայում կդառնան անբարենպաստ՝
- ա) հիմնվելով ենթադրություններում փոփոխությունների հավանականության վրա, որոնք, եթե տեղի ունենան, կհանգեցնեն պայմանագրերի անբարենպաստ դառնալուն.

բ) օգտագործելով գնահատումների վերաբերյալ կազմակերպության ներքին հաշվետվական համակարգից ստացված տեղեկատվությունը: Հետևաբար, գնահատելիս, թե չկա արդյոք նշանակալի հավանականություն, որ պայմանագրերը, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ չեն, հետագայում կդառնան անբարենպաստ՝

(i) կազմակերպությունը չպետք է անտեսի իր ներքին հաշվետվական համակարգից ստացված տեղեկատվությունը՝ տարբեր պայմանագրերի անբարենպաստ դառնալու հավանականության վրա դրանց վերաբերյալ ենթադրություններում փոփոխությունների ազդեցության մասին, սակայն

(ii) կազմակերպությունը պարտավոր չէ տարբեր պայմանագրերի վերաբերյալ ենթադրություններում փոփոխությունների ազդեցության մասին իր ներքին հաշվետվական համակարգից ստացված տեղեկատվությունից բացի լրացուցիչ տեղեկատվություն հավաքագրել:

20. Եթե 14-19-րդ պարագրաֆների կիրառման արդյունքում պորտֆելի պայմանագրերը տարբեր խմբերում են ներառվելու միայն այն պատճառով, որ օրենքը կամ այլ իրավական ակտերը հստակ սահմանափակում են տարբեր բնութագրեր ունեցող ապահովադիրների համար տարբեր գներ կամ օգուտների տարբեր մակարդակներ սահմանելու կազմակերպության գործնական կարողությունը, կազմակերպությունը կարող է այդ պայմանագրերը ներառել միևնույն խմբում: Կազմակերպությունը չպետք է սույն պարագրաֆը անալոզիայով կիրառի այլ դեպքերի նկատմամբ:

21. Կազմակերպությունն իրավունք ունի ենթադասակարգել 16-րդ պարագրաֆում նկարագրված խմբերը: Օրինակ, կազմակերպությունը կարող է պորտֆելները բաժանել՝

ա) մի քանի խմբերի, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ չեն, եթե կազմակերպության ներքին հաշվետվական համակարգը տրամադրում է տեղեկատվություն, որը տարբերակում է՝

(i) շահութաբերության տարբեր մակարդակներ, կամ

(ii) սկզբնական ճանաչումից հետո պայմանագրերի՝ անբարենպաստ դառնալու տարբեր հավանականություններ, և

բ) մեկից ավելի պայմանագրերի խմբի, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ են, եթե կազմակերպության ներքին հաշվետվական համակարգը տրամադրում է առավել մանրամասնեցված տեղեկատվություն այդ պայմանագրերի՝ անբարենպաստ լինելու աստիճանի վերաբերյալ:

22. Կազմակերպությունը չպետք է միևնույն խմբում ներառի ավելի քան մեկ տարվա տարբերությամբ թողարկված պայմանագրերը: Այդ կապակցությամբ կազմակերպությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է խմբերը բաժանի ենթախմբերի, ինչպես նկարագրված է 16-21-րդ պարագրաֆներում:

23. *Ապահովագրության պայմանագրերի խումբը* պետք է ներառի մեկ պայմանագիր, եթե դա 14-22-րդ պարագրաֆների կիրառման արդյունք է:
24. Կազմակերպությունը պետք է ՖՀՄՄ 17-ի ճանաչման և չափման պահանջները կիրառի թողարկված պայմանագրերի խմբերի նկատմամբ, որոնք որոշվել են 14-23-րդ պարագրաֆների կիրառմամբ: Կազմակերպությունը խմբերը պետք է ձևավորի սկզբնական ճանաչման պահին և հետագայում խմբերի կազմը չպետք է վերանայի: Պայմանագրերի խումբը չափելու համար կազմակերպությունը կարող է *պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը* գնահատել ընդհանրացման ավելի բարձր մակարդակի վրա, քան խումբը կամ պորտֆելն է, պայմանով, որ կազմակերպությունը ունակ է պայմանագրի կատարման գծով համապատասխան դրամական հոսքերը ներառել խմբի չափման մեջ, կիրառելով 32 (ա), 40 (ա)(i) և 40 (բ) պարագրաֆները՝ նման գնահատումները բաշխելով պայմանագրերի խմբերին:

Ճանաչումը

25. Կազմակերպությունն իր կողմից թողարկվող ապահովագրության պայմանագրերի խումբը պետք է ճանաչի հետևյալներից ամենավաղ ամսաթվին՝
- ա) պայմանագրերի խմբի *ծածկույթի ժամանակահատվածի* սկիզբ,
 - բ) ամսաթիվ, երբ խմբի ապահովադրից առաջին վճարումը դառնում է ստացման ենթակա, և
 - գ) անբարենպաստ պայմանագրերի խմբի համար, երբ խումբը դառնում է անբարենպաստ:
26. Եթե պայմանագրով առաջին վճարման ամսաթիվ սահմանված չէ, այդպիսի ամսաթիվ է համարվում ապահովադրից առաջին վճարումը ստանալու ամսաթիվը: Կազմակերպությունը, կիրառելով 16-րդ պարագրաֆը, պարտավոր է մինչև 25(ա) և 25(բ) պարագրաֆներով սահմանված ամսաթվերից ամենավաղը որոշել, կան արդյոք անբարենպաստ պայմանագրերի խումբ ձևավորող պայմանագրեր, եթե փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ այդպիսի խումբ կա:
27. Կազմակերպությունը պետք է ակտիվ կամ պարտավորություն ճանաչի թողարկված ապահովագրության պայմանագրերի խմբին առնչվող ցանկացած *ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի* գծով, որոնք կազմակերպությունը վճարում կամ ստանում է նախքան այդ խումբը ճանաչելը, բացառությամբ, եթե նախընտրել է դրանք ճանաչել որպես ծախս կամ եկամուտ՝ 59(ա) պարագրաֆի համաձայն: Կազմակերպությունը պետք է ապաճանաչի նմանատիպ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի արդյունքում առաջացած ակտիվներն ու պարտավորությունները, երբ ապահովագրության պայմանագրերի խումբը, որին այդ դրամական հոսքերը վերագրվում են, ճանաչվում է (տես պարագրաֆ 38 (բ)):

28. Հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրության պայմանագրերի խումբ ճանաչելիս կազմակերպությունը դրանում պետք է ներառի միայն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ թողարկված պայմանագրերը և պետք է գնահատումներ կատարի սկզբնական ճանաչման պահին գեղջման դրույքների (տես պարագրաֆ Բ73) և հաշվետու ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի միավորների վերաբերյալ (տես պարագրաֆ Բ119): Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո կարող է լրացուցիչ պայմանագրեր թողարկել և ավելացնել խմբում, հաշվի առնելով 22-րդ պարագրաֆի պահանջները: Կազմակերպությունը պետք է պայմանագրերը խմբում ավելացնի այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այդ պայմանագրերը թողարկվել են: Սա կարող է 73-րդ պարագրաֆի համաձայն սկզբնական ճանաչման պահին գեղջման դրույքի որոշման փոփոխությունների հանգեցնել: Կազմակերպությունը պետք է վերանայված գեղջման դրույքները կիրառի այն հաշվետու ժամանակաշրջանի սկզբից, երբ նոր պայմանագրերն ավելացվել են խմբում:

Զափումը (պարագրաֆներ Բ36-Բ119)

29. Կազմակերպությունը պետք է կիրառի 30-52-րդ պարագրաֆները ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող ապահովագրության պայմանագրերի բոլոր խմբերի համար, հետևյալ բացառություններով՝
- ա) ապահովագրության պայմանագրերի այն խմբերի համար, որոնք բավարարում են 53-րդ պարագրաֆում նշված չափանիշներից որևէ մեկին, կազմակերպությունը կարող է պարզեցնել խմբի չափումը՝ օգտագործելով 55-59-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը.
 - բ) պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբերի համար կազմակերպությունը պետք է կիրառի 32-46-րդ պարագրաֆները, ինչպես պահանջվում է 63-70-րդ պարագրաֆներով: 45-րդ պարագրաֆը (*ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի* մասին) և 47-52-րդ պարագրաֆները (անբարենպաստ պայմանագրերի մասին) պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ կիրառելի չեն.
 - գ) հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերի խմբերի համար կազմակերպությունը պետք է կիրառի 32-52-րդ պարագրաֆները, հաշվի առնելով 71-րդ պարագրաֆում նկարագրված վերափոխումները:
30. Երբ արտարժույթով դրամական հոսքեր գեներացնող ապահովագրության պայմանագրերի խմբի նկատմամբ կիրառվում է «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ը, կազմակերպությունը պետք է այդ

պայմանագրերի խումբը, ներառյալ *պայմանագրային ծառայությունների մարժան*, հաշվառի որպես դրամային հոդված:

31. Ապահովագրության պայմանագրեր թողարկող կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը չպետք է արտացոլեն այդ կազմակերպության պարտավորությունների չկատարման ռիսկը (պարտավորությունների չկատարման ռիսկը սահմանված է *«Իրական արժեքի չափումը»* ՖՀՄՄ 13-ում):

Չափումը սկզբնական ճանաչման պահին (պարագրաֆներ F36-F95)

32. Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ապահովագրության պայմանագրերի խումբը պետք է չափի որպես հետևյալ մեծությունների հանրագումար՝

- ա) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր, որոնք բաղկացած են՝
- (i) ապագա դրամական հոսքերի գնահատումներից (պարագրաֆներ 33-35),
 - (ii) ճշգրտումներից՝ փողի ժամանակային արժեքն ու ապագա դրամական հոսքերի հետ կապված *ֆինանսական ռիսկերն* արտացոլելու համար, այն չափով, որքանով ֆինանսական ռիսկերը չեն ներառվել ապագա դրամական հոսքերի գնահատումներում (պարագրաֆ 36), և
 - (iii) *ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումից* (պարագրաֆ 37).
- բ) պայմանագրային ծառայությունների մարժա, որը չափվում է 38-39-րդ պարագրաֆների համաձայն:

Ապագա դրամական հոսքերի գնահատումներ (պարագրաֆներ F36-F71)

33. Կազմակերպությունը ապահովագրության պայմանագրերի խմբի չափման մեջ պետք է ներառի բոլոր այն ապագա դրամական հոսքերը, որոնք գտնվում են խմբի յուրաքանչյուր պայմանագրի շրջանակներում (տես 34-րդ պարագրաֆը): 24-րդ պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը ապագա դրամական հոսքերը կարող է գնահատել ընդհանրացման ավելի բարձր մակարդակի վրա, այնուհետև դրա արդյունքում առաջացած պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը վերագրել պայմանագրերի առանձին խմբերին: Ապագա դրամական հոսքերի գնահատումները պետք է՝

- ա) անաչառ կերպով հաշվի առնեն ամբողջ հիմնավոր և ողջամիտ տեղեկատվությունը տվյալ ապագա դրամական հոսքերի մեծության, ժամկետների և անորոշությունների վերաբերյալ, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի (տես պարագրաֆներ F37-F41-ը): Նշվածն իրականացնելու համար կազմակերպությունը պետք է գնահատի հնարավոր արդյունքների ամբողջական միջակայքի ակնկալվող արժեքը (այսինքն հավանականություններով կշռված միջինը).

- բ) արտացոլեն կազմակերպության տեսլականը, պայմանով, որ առնչվող շուկայական բոլոր փոփոխականների գնահատումները համապատասխանում են այդ փոփոխականների համար դիտելի շուկայական գներին (տես պարագրաֆներ F42-F53),
- գ) լինեն ընթացիկ. գնահատումները պետք է արտացոլեն չափման ամսաթվի դրությամբ առկա պայմանները, ներառյալ՝ այդ ամսաթվի դրությամբ ապագայի վերաբերյալ ենթադրությունները (տես պարագրաֆներ F54-F60).
- դ) լինեն բացահայտ. կազմակերպությունը ոչ ֆինանսական ռիսկի գծով ճշգրտումը մնացած գնահատումներից առանձին պետք է գնահատի (տես պարագրաֆ F90): Կազմակերպությունը պետք է նաև դրամական հոսքերը փողի ժամանակային արժեքի ու ֆինանսական ռիսկի ճշգրտումներից առանձին գնահատի, բացառությամբ, եթե առավել համապատասխան չափման եղանակը համախմբում է այդ գնահատումները (տես պարագրաֆ F46):

34. Դրամական հոսքերը ապահովագրության պայմանագրի շրջանակներում են գտնվում, եթե դրանք առաջանում են իրական իրավունքներից և պարտականություններից, որոնք գոյություն ունեն այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որում կազմակերպությունը կարող է պարտադրել ապահովադրին վճարելու ապահովագրական վճարներ կամ որում կազմակերպությունն ապահովադրին ծառայություններ մատուցելու իրական պարտականություն ունի (տես պարագրաֆներ F61-F71-ը): Ծառայություններ մատուցելու իրական պարտականությունը դադարում է, երբ՝

- ա) կազմակերպությունը գործնականում հնարավորություն ունի վերանայելու կոնկրետ ապահովադրի ռիսկերը և արդյունքում՝ կարող է սահմանել գին կամ օգուտների մակարդակ, որոնք ամբողջությամբ արտացոլում են այդ ռիսկերը, կամ
- բ) հետևյալ երկու չափանիշները միաժամանակ բավարարված են՝
 - (i) կազմակերպությունը գործնականում հնարավորություն ունի վերանայելու տվյալ պայմանագիրը ներառող ապահովագրության պայմանագրերի պորտֆելի ռիսկերը և արդյունքում՝ կարող է սահմանել գին կամ օգուտների մակարդակ, որոնք ամբողջությամբ արտացոլում են այդ պորտֆելի ռիսկը, կամ
 - (ii) մինչև ռիսկերի վերանայման ամսաթիվը առկա ծածկույթի համար ապահովագրական վճարի գին որոշելիս հաշվի չեն առնվում վերանայման ամսաթվին հաջորդող ժամանակաշրջանների վերաբերող ռիսկերը:

35. Կազմակերպությունը չպետք է որպես պարտավորություն կամ որպես ակտիվ ճանաչի ակնկալվող ապահովագրական վճարների կամ ակնկալվող պահանջների հետ կապված որևէ գումար, որոնք ապահովագրության պայմանագրի շրջանակներից դուրս են: Նմանատիպ գումարները վերաբերում են ապահովագրության ապագա պայմանագրերին:

Զեղչման դրույքներ (պարագրաֆներ F72-F85)

36. Կազմակերպությունը պետք է ճշգրտի ապագա դրամական հոսքերի գնահատումները՝ փողի ժամանակային արժեքն ու այդ դրամական հոսքերի հետ կապված ֆինանսական ռիսկերն արտացոլելու համար, այն չափով, որքանով ֆինանսական ռիսկերը չեն ներառվել ապագա դրամական հոսքերի գնահատումներում: Զեղչման դրույքները, որոնք կիրառվում են 33-րդ պարագրաֆում նկարագրված ապագա դրամական հոսքերի գնահատումների նկատմամբ, պետք է՝
- ա) արտացոլեն փողի ժամանակային արժեքը, դրամական հոսքերի բնութագրերն ու ապահովագրության պայմանագրերի իրացվելիության հատկանիշները,
 - բ) համապատասխանեն այնպիսի դրամական հոսքեր նախատեսող ֆինանսական գործիքների դիտելի ընթացիկ շուկայական գներին (եթե այդպիսիք առկա են), որոնց բնութագրերը համապատասխանում են ապահովագրության պայմանագրի գծով դրամական հոսքերի բնութագրերին, օրինակ ժամկետի, արժույթի և իրացվելիության առումով, և
 - գ) բացառեն այն գործոնների հետևանքը, որոնք ազդեցություն են ունենում այդպիսի դիտելի շուկայական գների վրա, բայց չեն ազդում ապահովագրության պայմանագրի գծով ապագա դրամական հոսքերի վրա:

Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում (պարագրաֆներ F86-F92)

37. Կազմակերպությունը պետք է ճշգրտի ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումը՝ արտացոլելու փոխհատուցումը, որը կազմակերպությունը պահանջում է ոչ ֆինանսական ռիսկի հետևանքով առաջացած՝ դրամական հոսքերի գումարի և ժամկետի վերաբերյալ անորոշությունը կրելու համար:

Պայմանագրային ծառայությունների մարժա

38. Պայմանագրային ծառայությունների մարժան ապահովագրության պայմանագրերի խմբի գծով ակտիվների կամ պարտավորությունների բաղադրիչ է, որն իրենից ներկայացնում է չվաստակած շահույթ, որը կազմակերպությունը ճանաչելու է ապագայում՝ ծառայությունները մատուցելուն զուգընթաց: Բացառությամբ 47-րդ պարագրաֆի կիրառման (անբարենպաստ պայմանագրերի վերաբերյալ) դեպքի, կազմակերպությունը պայմանագրային ծառայությունների մարժան պետք է չափի ապահովագրության պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման պահին՝ այն գումարով, որը չի հանգեցնում եկամուտների կամ ծախսերի առաջացման հետևյալ դեպքերի արդյունքում՝
- ա) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի գումարի սկզբնական ճանաչում, որը չափվում է 32-37-րդ պարագրաֆների համաձայն,

- բ) սկզբնական ճանաչման պահին, 27-րդ պարագրաֆի կիրառման արդյունքում, ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ցանկացած ակտիվի կամ պարտավորության ապաճանաչում, և
- գ) այդ ամսաթվի դրությամբ խմբի պայմանագրերից առաջացող դրամական հոսքեր:

39. Ապահովագրության պայմանագրերի փոխանցման կամ բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված ապահովագրության պայմանագրերի համար կազմակերպությունը պետք է կիրառի 38-րդ պարագրաֆը՝ Բ93-Բ95 պարագրաֆներով սահմանված կարգով:

Հետագա չափումը

40. Ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին պետք է հաշվարկվի որպես հետևյալ մեծությունների հանրագումար՝

- ա) մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն, որը բաղկացած է՝
 - (i) այդ ամսաթվի դրությամբ խմբին բաշխված պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերից, որոնք առնչվում են ապագա ծառայություններին և չափվել են 33-37-րդ և Բ36-Բ92 պարագրաֆների համաձայն,
 - (ii) այդ ամսաթվի դրությամբ խմբի պայմանագրային ծառայությունների մարժայից, որը չափվել է 43-46-րդ պարագրաֆների համաձայն, և
- բ) *կրած պահանջների գծով պարտավորություն*, բաղկացած այդ ամսաթվի դրությամբ խմբին բաշխված պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերից, որոնք առնչվում են անցյալ ծառայություններին և չափվել են 33-37-րդ և Բ36-Բ92 պարագրաֆների համաձայն:

41. Կազմակերպությունը պետք է մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքում կատարված հետևյալ փոփոխությունների գծով եկամուտ և ծախս ճանաչի, մասնավորապես՝

- ա) ապահովագրական հասույթ՝ ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայությունների արդյունքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության նվազման դեպքում, որը չափվել է Բ120-Բ124 պարագրաֆների համաձայն,
- բ) ապահովագրական ծառայության ծախսեր՝ անբարենպաստ պայմանագրերի խմբերի գծով վնասների և այդպիսի վնասների հակադարձումների դեպքում (տես պարագրաֆներ 47-52), և
- գ) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր՝ փողի ժամանակային արժեքի ազդեցության և ֆինանսական ռիսկի ազդեցության դեպքում, ինչպես սահմանված է 87-րդ պարագրաֆում:

42. Կազմակերպությունը պետք է կրած պահանջների գծով պարտավորության հաշվեկշռային արժեքում կատարված հետևյալ փոփոխությունների գծով եկամուտ և ծախս ճանաչի, մասնավորապես՝
- ա) ապահովագրական ծառայության ծախսեր՝ ժամանակաշրջանի ընթացքում կրած պահանջների և ծախսերի հետևանքով պարտավորության աճի դեպքում, բացառելով ցանկացած ներդրումային բաղադրիչներ,
 - բ) ապահովագրական ծառայության ծախսեր՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում հետագա ցանկացած փոփոխությունների դեպքում՝ կապված կրած պահանջների և կրած ծախսերի հետ, և
 - գ) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր՝ փողի ժամանակային արժեքի ազդեցության և ֆինանսական ռիսկի ազդեցության դեպքում, ինչպես սահմանված է 87-րդ պարագրաֆում:

Պայմանագրային ծառայությունների մարժա (պարագրաֆներ Բ96-Բ119)

43. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պայմանագրային ծառայությունների մարժան իրենից ներկայացնում է ապահովագրության պայմանագրերի խմբի գծով շահույթը, որը շահույթում կամ վնասում դեռևս չի ճանաչվել, քանի որ վերաբերում է խմբի պայմանագրերի ներքո մատուցվելիք ապագա ծառայություններին:
44. *Առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի* դեպքում ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքը հավասար է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքին՝ ճշգրտված հետևյալ մեծություններով՝
- ա) խմբում ավելացված նոր պայմանագրերի ազդեցություն (տես պարագրաֆ 28)
 - բ) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ հաշվեգրված տոկոսներ, որոնք չափվել են Բ72(բ) պարագրաֆում սահմանված զեղչման դրույքներով,
 - գ) փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք առնչվում են ապագա ծառայություններին, ինչպես սահմանված է Բ96-Բ100 պարագրաֆներում, բացառությամբ այն դեպքերի, երբ՝
 - (i) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում այդպիսի ավելացումները գերազանցում են պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքը, առաջացնելով վնաս (տես պարագրաֆ 48 (ա)), կամ
 - (ii) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում այդպիսի նվազեցումները բաշխվում են մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին՝ պարագրաֆ 50(բ)-ի համաձայն,

- դ) պայմանագրային ծառայությունների մարժայի վրա արտարժույթի փոխարժեքի տարբերությունների ազդեցություն, և
- ե) ժամանակաշրջանի ընթացքում փոխանցված ծառայությունների արդյունքում որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար, որը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (նախքան բաշխումը) պայմանագրային ծառայությունների մարժայի մնացորդը բաշխելով ընթացիկ և մնացորդային ծածկույթի ժամանակահատվածի վրա՝ պարագրաֆ Բ119-ի համաձայն:

45. Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի դեպքում (տես պարագրաֆներ Բ101-Բ118), ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքը հավասար է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքին՝ ճշգրտված ստորև նշված (ա)–(ե) ենթակետերի գումարներով: Կազմակերպությունից չի պահանջվում առանձին նույնականացնել այդ ճշգրտումները: Փոխարենը, բոլոր կամ որոշ ճշգրտումների գծով կարող է որոշվել ընդհանուր գումար: Ճշգրտումները հետևյալն են՝

- ա) խմբում ավելացված նոր պայմանագրերի ազդեցություն (տես պարագրաֆ 28)
- բ) *հիմքում ընկած հողվածների* իրական արժեքի փոփոխություններում կազմակերպության բաժնեմասը (տես պարագրաֆ Բ104(բ)(i)), բացառությամբ այն դեպքերի, երբ՝
 - (i) կիրառվում է պարագրաֆ Բ115-ը (ռիսկի նվազեցման վերաբերյալ),
 - (ii) հիմքում ընկած հողվածների իրական արժեքի նվազման մեջ կազմակերպության բաժնեմասը գերազանցում է պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքը, առաջացնելով վնաս (տես պարագրաֆ 48), կամ
 - (iii) հիմքում ընկած հողվածների իրական արժեքի ավելացման մեջ կազմակերպության բաժնեմասը վերականգնում է (ii) կետում նշված գումարը.
- գ) փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք առնչվում են ապագա ծառայություններին, ինչպես սահմանված է Բ101-Բ118 պարագրաֆներում, բացառությամբ այն դեպքերի, երբ՝
 - (i) կիրառվում է պարագրաֆ Բ115-ը (ռիսկի նվազեցման վերաբերյալ),
 - (ii) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում այդպիսի ավելացումները գերազանցում են պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքը, առաջացնելով վնաս (տես պարագրաֆ 48), կամ

(iii) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում այդպիսի նվազեցումները բաշխվում են մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին՝ պարագրաֆ 50(բ)-ի համաձայն.

դ) պայմանագրային ծառայությունների մարժայի գծով առաջացած արտարժույթի փոխարժեքի տարբերությունների ազդեցություն, և

ե) ժամանակաշրջանի ընթացքում փոխանցված ծառայությունների հետևանքով որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար, որը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (նախքան բաշխումը) մնացած պայմանագրային ծառայությունների մարժան բաշխելով ընթացիկ և մնացորդային ծածկույթի ժամանակահատվածի վրա՝ պարագրաֆ Բ119-ի համաձայն:

46. Պայմանագրային ծառայությունների մարժայում որոշ փոփոխություններ փոխհատուցում են պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում կատարված փոփոխություններին, որոնք վերաբերում են մնացորդային ծածկույթի գծով պարտավորությանը, որի արդյունքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության ընդհանուր հաշվեկշռային արժեքը չի փոփոխվում: Այն չափով, որքանով պայմանագրային ծառայությունների մարժայում փոփոխությունները չեն փոխհատուցում պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխություններին, որոնք վերաբերում են մնացորդային ծածկույթի գծով պարտավորությանը, կազմակերպությունը այդ փոփոխությունների հետ կապված պետք է ճանաչի եկամուտ և ծախս՝ 41-րդ պարագրաֆի համաձայն:

Անբարենպաստ պայմանագրեր

47. Սկզբնական ճանաչման պահին ապահովագրության պայմանագիրն անբարենպաստ է, եթե պայմանագրին վերագրված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի ձեռքբերման գծով նախկինում ճանաչված դրամական հոսքերի և պայմանագրից առաջացող ցանկացած այլ դրամական հոսքերի՝ սկզբնական ճանաչման պահին ընդհանուր գումարը հանգեցնում է գուտ արտահոսքի: 16(ա) պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը պետք է խմբավորի նմանատիպ պայմանագրերը՝ դրանք առանձնացնելով անբարենպաստ չհանդիսացող պայմանագրերից: Այնքանով, որքանով կիրառվում է 17-րդ պարագրաֆը, կազմակերպությունը կարող է նույնականացնել անբարենպաստ պայմանագրերի խումբը՝ գնահատելով պայմանագրերի փաթեթը, այլ ոչ թե առանձին պայմանագրերը: Կազմակերպությունը անբարենպաստ պայմանագրերի խմբի գծով գուտ արտահոսքերի հետ կապված՝ շահույթում կամ վնասում պետք է ճանաչի կորուստ, որի արդյունքում խմբի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասար կլինի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերին, իսկ խմբի պայմանագրային ծառայությունների մարժան հավասար կլինի զրոյի:

48. Ապահովագրության պայմանագրերի խումբը հետագա չափման պահին դառնում է անբարենպաստ (կամ ավելի անբարենպաստ), եթե ներքոհիշյալ մեծությունները գերազանցում են պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքը՝

ա) ոչ բարենպաստ փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք վերագրվել են խմբին և առաջացել են ապագա ծառայությունների գծով ապագա դրամական հոսքերի գնահատումներում կատարված փոփոխությունների արդյունքում, և

բ) ուղղակի մասնակցության հասկանիշներով ապահովագրության պայմանագրերի խմբի համար՝ հիմքում ընկած հողվածների իրական արժեքի նվազման մեջ կազմակերպության բաժնեմասը:

44(գ)(i), 45(բ)(ii) և 45(գ)(ii) պարագրաֆները կիրառելիս կազմակերպությունը, այն չափով, որքանով գերազանցումն է, պետք է շահույթում կամ վնասում ճանաչի կորուստ:

49. Կազմակերպությունը պետք է ձևավորի (կամ ավելացնի) անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ՝ 47-48-րդ պարագրաֆների կիրառման արդյունքում ճանաչված կորուստներն արտացոլելու համար: Վնասի բաղադրիչն արտացոլում է այն գումարները, որոնք ներկայացված են շահույթում կամ վնասում՝ որպես անբարենպաստ խմբերի գծով վնասների հակադարձումներ և, հետևաբար, ապահովագրական հասույթը որոշելիս՝ բացառվում են:

50. Անբարենպաստ ապահովագրության պայմանագրերի խմբի գծով վնասը ճանաչելուց հետո կազմակերպությունը պետք է բաշխի՝

ա) 51-րդ պարագրաֆում սահմանված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում հետագա փոփոխությունները, որոնք վերաբերում են մնացորդային ծածկույթի գծով պարտավորությանը, պարբերական հիմունքով հետևյալների միջև՝

(i) մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ, և

(ii) մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն՝ բացառելով վնասի բաղադրիչը.

բ) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի հետագա բոլոր նվազեցումները, որոնք վերագրվել են խմբին և հետևանք են ապագա ծառայությունների գծով ապագա դրամական հոսքերի գնահատումներում փոփոխությունների, ինչպես նաև հիմքում ընկած հողվածների իրական արժեքում կազմակերպության բաժնեմասում հետագա բոլոր ավելացումները՝ բացառապես վնասի բաղադրիչին այնքան, մինչև այդ բաղադրիչը հավասարվի զրոյի: 44(գ)(ii), 45(բ)(iii) և 45(գ)(iii) պարագրաֆները կիրառելիս կազմակերպությունը պայմանագրային ծառայությունների մարժան պետք է

Ճշգրտի այն գումարի չափով, որով նվազեցման գումարը գերազանցում է վնասի բաղադրիչին վերագրված գումարին:

51. Մնացորդային ծածկույթի գծով պարտավորությանն առնչվող՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի հետագա փոփոխությունները, որոնք պարագրաֆ 50 (ա)-ի համաձայն ենթակա են բաշխման, հանդիսանում են՝
- ա) ապահովագրական ծախսեր կրելու հետևանքով մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունից նվազեցված՝ պահանջների և ծախսերի գծով ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումները,
 - բ) ռիսկից ազատվելու արդյունքում ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումներում փոփոխությունները՝ ճանաչված շահույթում կամ վնասում, և
 - գ) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը:
52. Պարագրաֆ 50 (ա)-ով պահանջվող պարբերական բաշխումը պետք է հանգեցնի նրան, որ 48-50-րդ պարագրաֆների համաձայն վնասի բաղադրիչին վերագրված ընդհանուր գումարները պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի վերջում հավասարվեն զրոյի:

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցում

53. Կազմակերպությունը կարող է պարզեցնել ապահովագրության պայմանագրերի խմբի չափումը, օգտագործելով 55-59-րդ պարագրաֆներում սահմանված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, այն և միայն այն դեպքում, երբ խմբի գործողության ժամկետի սկզբում՝
- ա) կազմակերպությունը հիմնավոր ակնկալիք ունի, որ այսպիսի պարզեցումը կհանգեցնի խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափմանը, որն էականորեն չի տարբերվի 32-52-րդ պարագրաֆների պահանջների կիրառմամբ ստացված արդյունքից, կամ
 - բ) խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը (ներառյալ պայմանագրի շրջանակներում բոլոր ապահովագրական վճարներից առաջացած ծածկույթը՝ որոշված տվյալ ամսաթվի դրությամբ՝ 34-րդ պարագրաֆի համաձայն) մեկ տարի է կամ ավելի քիչ:
54. Պարագրաֆ 53(ա)-ի չափանիշը չի բավարարվում, երբ կազմակերպությունը խմբի գործողության ժամկետի սկզբի դրությամբ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում ակնկալում է նշանակալի փոփոխականություն, որն ազդելու է ժամանակաշրջանի ընթացքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափման վրա՝ նախքան պահանջի տեղի ունենալը: Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխականությունը ավելանում է՝ պայմանավորված, օրինակ՝

- ա) պայմանագրերում պարունակվող ցանկացած ածանցյալ գործիքներին առնչվող ապագա դրամական հոսքերի մակարդակով, և
- բ) պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի տևողությամբ:

55. Ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը կիրառելիս՝ կազմակերպությունը մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը պետք է չափի հետևյալ կերպ՝

- ա) սկզբնական ճանաչման պահին պարտավորության հաշվեկշռային արժեքը հետևյալն է՝
 - (i) ապահովագրական վճարներ՝ ստացված սկզբնական ճանաչման պահին, եթե այդպիսիք առկա են,
 - (ii) հանած այդ պահի դրությամբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, բացառությամբ, եթե կազմակերպությունը նախընտրել է այդ վճարումները ճանաչել որպես ծախս՝ պարագրաֆ 59 (ա)-ի համաձայն, և
 - (iii) գումարած կամ հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ակտիվի կամ պարտավորության՝ այդ ամսաթվի դրությամբ ապաճանաչումից առաջացող ցանկացած գումար՝ 27-րդ պարագրաֆի համաձայն.
- բ) հետագա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ պարտավորության հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքն է՝
 - (i) գումարած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ապահովագրական վճարները,
 - (ii) հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը; բացառությամբ, եթե կազմակերպությունը նախընտրել է այդ վճարումները ճանաչել որպես ծախս՝ 59 (ա) պարագրաֆի համաձայն.
 - (iii) գումարած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիային առնչվող ցանկացած գումար, որը հաշվետու ժամանակաշրջանում ճանաչվել է որպես ծախս; բացառությամբ, եթե կազմակերպությունը նախընտրել է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչել որպես ծախս՝ 59 (ա) պարագրաֆի համաձայն.
 - (iv) գումարած ֆինանսավորման բաղադրիչի գծով ցանկացած ճշգրտում՝ 56-րդ պարագրաֆի համաձայն.
 - (v) հանած այդ ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի գծով որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար (տես պարագրաֆ F126), և

(vi) հանած ցանկացած ներդրումային բաղադրիչ, որը վճարվել կամ փոխանցվել է կրած պահանջների գծով պարտավորությանը:

56. Եթե խմբում ընդգրկված ապահովագրության պայմանագրերն ունեն նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ, ապա կազմակերպությունը պետք է ճշգրտի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը՝ փողի ժամանակային արժեքն ու ֆինանսական ռիսկի ազդեցությունն արտացոլելու համար՝ կիրառելով 36-րդ պարագրաֆում սահմանված զեղչման դրույքները, որոնք որոշվել են սկզբնական ճանաչման պահին: Կազմակերպությունը պարտավոր չէ ճշգրտել մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը՝ փողի ժամանակային արժեքն ու ֆինանսական ռիսկի ազդեցությունն արտացոլելու համար, եթե սկզբնական ճանաչման պահին ակնկալում է, որ ժամանակահատվածը, որն ընկած է տվյալ ծածկույթի յուրաքանչյուր մասի տրամադրման և դրա գծով ապահովագրական վճարի վճարման ժամկետի միջև, չի գերազանցում մեկ տարին:
57. Եթե ծածկույթի ժամանակահատվածում ցանկացած պահի փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ապահովագրության պայմանագրերի խումբն անբարենպաստ է, կազմակերպությունը պետք է հաշվարկի հետևյալների միջև տարբերությունը՝
- ա) մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեք՝ որոշված 55-րդ պարագրաֆի համաձայն, և
 - բ) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր, որոնք առնչվում են խմբի մնացորդային ծածկույթին՝ կիրառելով 33-37-րդ և Բ36-Բ92 պարագրաֆները: Այնուամենայնիվ, եթե 59(բ) պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը չի ճշգրտում կրած պահանջների գծով պարտավորությունը՝ փողի ժամանակային արժեքի ու ֆինանսական ռիսկի ազդեցությամբ, ապա չպետք է այդպիսի ճշգրտումները ներառի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում:
58. Այն չափով, որքանով 57(բ) պարագրաֆում ներկայացված պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը գերազանցում են 57(ա) պարագրաֆում ներկայացված հաշվեկշռային արժեքը, կազմակերպությունը շահույթում կամ վնասում պետք է վնաս ճանաչի և ավելացնի մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը:
59. Ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը կիրառելիս կազմակերպությունը՝
- ա) կարող է նախընտրել ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչել որպես ծախս, երբ նա կրում է այդ ծախսումները, պայմանով, որ խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը սկզբնական ճանաչման պահին չի գերազանցում մեկ տարին.
 - բ) պետք է ապահովագրության պայմանագրերի խմբի՝ կրած պահանջների գծով պարտավորությունը չափի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի գումարով, որոնք առնչվում են կրած պահանջներին, կիրառելով 33-37-րդ և Բ36-Բ92 պարագրաֆները: Այնուամենայնիվ, կազմակերպությունը

պարտավոր չէ ճշգրտել ապագա դրամական հոսքերը՝ փողի ժամանակային արժեքի ու ֆինանսական ռիսկի ազդեցությամբ, եթե ակնկալվում է, որ այդ դրամական հոսքերը վճարվելու կամ ստացվելու են այդ պահանջներն առաջանալու ամսաթվից սկսած մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Պահվող վերաապահովագրության պայմանագրեր

60. Պահվող վերաապահովագրության պայմանագրերի համար ՖՀՄՍ 17-ի պահանջները վերափոխված են՝ 61-70-րդ պարագրաֆներում սահմանված ձևով:
61. Կազմակերպությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի պորտֆելները պետք է բաժանի՝ կիրառելով 14-24-րդ պարագրաֆները, բացառությամբ, որ այդ պարագրաֆներում անբարենպաստ պայմանագրերին կատարված հղումները պետք է փոխարինվեն այնպիսի պայմանագրերին հղումով, որոնց գծով սկզբնական ճանաչման պահին առկա է զուտ օգուտ: Պահվող վերաապահովագրության որոշ պայմանագրերի համար 14-24-րդ պարագրաֆների կիրառումը կհանգեցնի մեկ պայմանագրից կազմված խմբի առաջացման:

Ճանաչումը

62. 25-րդ պարագրաֆը կիրառելու փոխարեն կազմակերպությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի խումբը պետք է ճանաչի՝
- ա) եթե պահվող վերաապահովագրության պայմանագրերը ապահովում են համամասնական ծածկույթ՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի ծածկույթի ժամանակահատվածի սկզբի դրությամբ կամ հիմքում ընկած ցանկացած պայմանագրի սկզբնական ճանաչման պահին, կախված, թե որն է ավելի ուշ տեղի ունենում, և
- բ) մնացած բոլոր դեպքերում՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի ծածկույթի ժամանակահատվածի սկզբից:

Չափումը

63. 32-36-րդ պարագրաֆների չափման պահանջները պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ կիրառելիս, այն չափով, որքանով հիմքում ընկած պայմանագրերը նույնպես չափվում են այդ պարագրաֆները կիրառելով, կազմակերպությունը պետք է օգտագործի հետևողական ենթադրություններ պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի գծով ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումները և հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի խմբ(եր)ի գծով ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումները չափելիս: Ի լրումն, կազմակերպությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի գծով ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներում պետք է ներառի վերաապահովագրության

պայմանագիր թողարկողի կողմից պարտավորությունների չկատարման ռիսկի ազդեցությունը, ներառյալ՝ գրավի ազդեցությունն ու վեճերից կորուստները:

64. 37-րդ պարագրաֆը կիրառելու փոխարեն, կազմակերպությունը պետք է որոշի ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգտումն այնպես, որ այն ներկայացնի վերաապահովագրության պայմանագրերի խումբը տիրապետողի կողմից այդ պայմանագրերը թողարկողին փոխանցվող ռիսկի մեծությունը:
65. 38-րդ պարագրաֆի պահանջները, որոնք առնչվում են սկզբնական ճանաչման պահին պայմանագրային ծառայությունների մարժայի որոշմանը, վերափոխվել են՝ արտացոլելու այն փաստը, որ պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի համար չվաստակած շահույթ չկա, սակայն առկա է վերաապահովագրության ձեռքբերումից զուտ կորուստ կամ զուտ օգուտ: Հետևաբար, սկզբնական ճանաչման պահին՝
- ա) կազմակերպությունը պահվող վերաապահովագրության պայմանագրի խմբի ձեռքբերումից ցանկացած զուտ կորուստ կամ զուտ օգուտ պետք է ճանաչի որպես պայմանագրային ծառայությունների մարժա՝ չափելով այն հետևյալ մեծությունների հանրագումարին հավասար գումարով. պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր, պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբին առնչվող դրամական հոսքերի գծով նախկինում ճանաչված և այդ ամսաթվի դրությամբ ապաճանաչված ցանկացած ակտիվի կամ պարտավորության գումար և այդ ամսաթվի դրությամբ առաջացող ցանկացած դրամական հոսք. բացառությամբ, երբ՝
 - բ) վերաապահովագրության ծածկույթի ձեռքբերումից զուտ կորուստը վերաբերում է պատահարներին, որոնք տեղի են ունեցել նախքան վերաապահովագրության պայմանագրերի խմբի ձեռքբերումը, որի դեպքում, չնայած Բ5 պարագրաֆի պահանջներին, կազմակերպությունը այդպիսի կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում՝ որպես ծախս:
66. 44-րդ պարագրաֆը կիրառելու փոխարեն, կազմակերպությունը պետք է պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժան հաշվետու ժամանակաշրջանի վերջին չափի հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ որոշված հաշվեկշռային արժեքով՝ ճշգրտելով հետևյալ մեծություններով՝
- ա) խմբում ավելացված նոր պայմանագրերի ազդեցություն (տես պարագրաֆ 28)
 - բ) պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ հաշվեգրված տոկոսներ, որոնք չափվել են Բ72 (բ) պարագրաֆում սահմանված գեղչման դրույքներով,
 - գ) փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, այն չափով, որքանով փոփոխությունը՝

- (i) առնչվում է ապագա ծառայություններին, բացառությամբ այն դեպքերի, երբ՝
 - (ii) փոփոխությունն արդյունք է պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում կատարված փոփոխության՝ բաշխված հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի խմբին, որը չի ճշգրտում հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժան.
- դ) պայմանագրային ծառայությունների մարժայի գծով առաջացած արտարժույթի փոխարժեքի տարբերությունների ազդեցություն, և
- ե) ժամանակաշրջանի ընթացքում ստացված ծառայությունների հետևանքով շահույթում կամ վնասում ճանաչված գումար, որը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (նախքան բաշխումը) պայմանագրային ծառայությունների մարժայի մնացորդը բաշխելով պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի գծով ընթացիկ և մնացորդային ծածկույթի ժամանակահատվածի վրա, կիրառելով պարագրաֆ F119-ը:
67. Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխությունները, որոնք արդյունք են վերաապահովագրության պայմանագրի թողարկողի կողմից պարտավորությունների չկատարման ռիսկի փոփոխության, չեն առնչվում ապագա ծառայություններին և չպետք է ճշգրտեն պայմանագրային ծառայությունների մարժան:
68. Պահվող վերաապահովագրության պայմանագրերը չեն կարող անբարեպաստ լինել: Հետևաբար, 47-52-րդ պարագրաֆների պահանջները կիրառելի չեն:

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը պահվող վերաապահովագրության պայմանագրերի համար

69. Կազմակերպությունը կարող է օգտագործել 55-56-րդ և 59-րդ պարագրաֆներում սահմանված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը (հարմարեցված պահվող վերաապահովագրության պայմանագրերին բնորոշ հատկանիշներն արտացոլելու համար, որոնք տարբերվում են թողարկված ապահովագրության պայմանագրերից, օրինակ ծախսերի գեներացում կամ հասույթի փոխարեն ծախսերի նվազեցում)՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի չափումը պարզեցնելու համար, եթե խմբի գործողության ժամկետի սկզբում՝
- ա) կազմակերպությունը հիմնավոր ակնկալիք ունի, որ չափման արդյունքը էականորեն չի տարբերվի 63-68-րդ պարագրաֆների պահանջների կիրառմամբ ստացված արդյունքից, կամ
 - բ) պահվող վերաապահովագրության խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը (ներառյալ պայմանագրի շրջանակներում բոլոր ապահովագրական վճարներից առաջացած ծածկույթը՝ որոշված տվյալ

ամսաթվի դրությամբ՝ 34-րդ պարագրաֆի համաձայն) մեկ տարի է կամ ավելի քիչ:

70. Կազմակերպությունը չի կարող բավարարել 69(ա) պարագրաֆի պայմանին, եթե խմբի գործողության ժամկետի սկզբի դրությամբ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում ակնկալում է նշանակալի փոփոխականություն, որն ազդելու է ժամանակաշրջանի ընթացքում մնացորդային ծածկույթի գծով ակտիվի չափման վրա՝ նախքան պահանջի տեղի ունենալը: Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխականությունը ավելանում է՝ պայմանավորված, օրինակ՝
- ա) պայմանագրերում պարունակվող ցանկացած ածանցյալ գործիքներին առնչվող ապագա դրամական հոսքերի մակարդակով, և
 - բ) պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի տևողությամբ:

Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրեր

71. Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագիրը չի ենթադրում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Հետևաբար, ապահովագրության պայմանագրերին վերաբերվող ՖՀՄՍ 17-ի պահանջները հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերի համար վերափոխվել են հետևյալ կերպ՝
- ա) սկզբնական ճանաչման ամսաթիվը (տես 25-րդ պարագրաֆը) այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը դառնում է պայմանագրի կողմ.
 - բ) պայմանագրի շրջանակը (տես 34-րդ պարագրաֆը) վերափոխվում է այնպես, որ դրամական հոսքերը համարվում են ապահովագրության պայմանագրի շրջանակում գտնվող, եթե դրանք ներկայում կամ ապագայում դրամական միջոցներ տրամադրելու կազմակերպության իրական պարտականության արդյունք են: Կազմակերպությունը դրամական միջոցներ տրամադրելու իրական պարտականություն չունի, եթե գործնականում հնարավորություն ունի դրամական միջոցներ տրամադրելու խոստման դիմաց գին սահմանել, որն ամբողջությամբ արտացոլում է խոստացված դրամական միջոցների մեծությունն ու դրա հետ կապված ռիսկերը.
 - գ) պայմանագրային ծառայությունների մարժայի բաշխումը (տես 44(ե) և 45(ե) պարագրաֆները) վերափոխվում է այնպես, որ կազմակերպությունը պայմանագրային ծառայությունների մարժան պետք է ճանաչի պայմանագրերի խմբի գործողության ողջ ընթացքում՝ պարբերական հիմունքով, որն արտացոլում է պայմանագրից բխող ներդրումային ծառայությունների փոխանցումը:

Վերափոխում և ապաճանաչում

Ապահովագրության պայմանագրի վերափոխում

72. Եթե ապահովագրության պայմանագրի պայմանները վերափոխվում են, օրինակ պայմանագրային կողմերի միջև համաձայնագրով կամ կարգավորող օրենսդրության փոփոխությամբ, կազմակերպությունը պետք է ապաճանաչի սկզբնական պայմանագիրը և ճանաչի վերափոխված պայմանագիրը որպես նոր պայմանագիր՝ ՖՀՄՍ 17-ի կամ այլ կիրառելի Ստանդարտներին համապատասխան, այն ու միայն այն դեպքում, եթե (ա)-(գ) կետերում նշված պայմաններից որևէ մեկը բավարարված է: Պայմանագրի պայմաններով նախատեսված իրավունքի իրացումը վերափոխում չէ: Նշված պայմանները հետևյալն են՝
- ա) եթե վերափոխված պայմանները պայմանագրում ներառվելին պայմանագրի գործողության սկզբում՝
 - (i) վերափոխված պայմանագիրը կբացառվեր ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտից՝ 3-8-րդ պարագրաֆներին համապատասխան,
 - (ii) կազմակերպությունը 10-13-րդ պարագրաֆների համաձայն հիմնական ապահովագրության պայմանագրից կառանձնացներ տարբեր բաղադրիչներ՝ հանգեցնելով մեկ այլ ապահովագրության պայմանագրի առաջացման, որի նկատմամբ կկիրառվեր ՖՀՄՍ 17-ը,
 - (iii) վերափոխված պայմանագիրը կունենար էականորեն տարբերվող պայմանագրային շրջանակ՝ 34-րդ պարագրաֆի համաձայն, կամ
 - (iv) վերափոխված պայմանագիրը կներառվեր պայմանագրերի այլ խմբում՝ կիրառելով 14-24-րդ պարագրաֆները.
 - բ) սկզբնական պայմանագիրը բավարարում էր *ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրի* սահմանմանը, սակայն վերափոխված պայմանագիրը այլևս չի բավարարում այդ սահմանմանը կամ հակառակը, կամ՝
 - գ) կազմակերպությունը սկզբնական պայմանագրի նկատմամբ կիրառել է 53-59-րդ կամ 69-70-րդ պարագրաֆներում սահմանված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, սակայն վերափոխման արդյունքում պայմանագիրն այլևս չի բավարարում այդ մոտեցումը կիրառելու համար 53-րդ կամ 69-րդ պարագրաֆներում սահմանված չափանիշներին:
73. Եթե պայմանագրի վերափոխումը չի բավարարում 72-րդ պարագրաֆում սահմանված պայմաններից որևէ մեկին, կազմակերպությունը պետք է վերափոխման հետևանքով դրամական հոսքերում տեղի ունեցած փոփոխությունները հաշվառի որպես պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի գնահատումներում փոփոխություններ՝ 40-52-րդ պարագրաֆների համաձայն:

Ապաճանաչում

74. Կազմակերպությունը պետք է ապաճանաչի ապահովագրության պայմանագիրը այն ու միայն այն դեպքում, երբ՝
- ա) այն մարվել է, այսինքն՝ ապահովագրության պայմանագրով սահմանված պարտականության ժամկետը լրացել է, պարտականությունը կատարվել է կամ չեղարկվել է.
 - բ) 72-րդ պարագրաֆում սահմանված պայմաններից որևէ մեկը բավարարվել է:
75. Երբ ապահովագրության պայմանագիրը մարվում է, կազմակերպությունն այլևս ենթակա չէ ռիսկի և, հետևաբար, այլևս պարտավոր չէ որևէ տնտեսական ռեսուրս փոխանցել՝ ապահովագրության պայմանագրի կատարման համար: Օրինակ, երբ կազմակերպությունը ձեռք է բերում վերաապահովագրություն, նա պետք է ապաճանաչի հիմքում ընկած ապահովագրության պայմանագիրը (պայմանագրերը) այն և միայն այն դեպքում, երբ հիմքում ընկած ապահովագրության պայմանագիրը (պայմանագրերը) մարվել է (են):
76. Կազմակերպությունը ապաճանաչում է պայմանագրերի խմբում ներառված ապահովագրության պայմանագիրը՝ կիրառելով ՖՀՄՍ 17-ի հետևյալ պահանջները՝
- ա) խմբին բաշխված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը ճշգրտվում են՝ բացառելու ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը և ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը, որոնք վերաբերում են 40 (ա)(i) և 40 (բ) պարագրաֆների համաձայն խմբից ապաճանաչված իրավունքներին և պարտականություններին,
 - բ) խմբի պայմանագրային ծառայությունների մարժան ճշգրտվում է՝ (ա) կետում նշված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխություններով, այն չափով, որքանով պահանջվում են 44(գ) և 45(գ) պարագրաֆներով, բացառությամբ 77-րդ պարագրաֆի կիրառման դեպքի, և
 - գ) ակնկալվող մնացորդային ծածկույթի գծով ծածկույթի միավորների քանակը ճշգրտվում է՝ խմբից ապաճանաչված ծածկույթի միավորներն արտացոլելու համար, իսկ ժամանակաշրջանի ընթացքում շահույթում կամ վնասում ճանաչված պայմանագրային ծառայությունների մարժայի գումարը հիմնվում է այդ ճշգրտված թվի վրա՝ համաձայն Բ119 պարագրաֆի:
77. Երբ կազմակերպությունն ապաճանաչում է ապահովագրության պայմանագիրը, քանի որ փոխանցում է այն երրորդ կողմին կամ ապաճանաչում է ապահովագրության պայմանագիրը և ճանաչում նոր պայմանագիր՝ 72-րդ պարագրաֆի համաձայն, կազմակերպությունը 76(բ) պարագրաֆը կիրառելու փոխարեն պետք է՝
- ա) ճշգրտի այն խմբի պայմանագրային ծառայությունների մարժան, որի կազմից պայմանագիրն ապաճանաչվել է, կիրառելով 44(գ) և 45(գ) պարագրաֆների պահանջները՝ ստորև նշվածների միջև տարբերության չափով. (i) և (ii)՝ երրորդ

կողմին փոխանցված պայմանագրերի դեպքում կամ՝ (i) և (iii)՝ 72-րդ պարագրաֆի համաձայն ապաճանաչված պայմանագրերի դեպքում՝

- (i) պայմանագրի ապաճանաչման արդյունքում ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի փոփոխություն՝ 76 (ա) պարագրաֆին համապատասխան,
 - (ii) երրորդ կողմից գանձված ապահովագրական վճար,
 - (iii) ապահովագրական վճար, որը կազմակերպությունը կգանձեր, եթե պայմանագրի վերափոխման ամսաթվի դրությամբ կնքեր համարժեք պայմաններով նոր պայմանագիր՝ հանելով վերափոխման համար գանձված ցանկացած լրացուցիչ ապահովագրական վճար,
- բ) չափի 72-րդ պարագրաֆի համաձայն ճանաչված նոր պայմանագիրը՝ ենթադրելով, որ կազմակերպությունը վերափոխման ամսաթվի դրությամբ ստացել է (ա)(iii) կետում նված ապահովագրական վճարը:

Ներկայացում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

78. Կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում առանձին պետք է ներկայացնի հետևյալ խմբերի հաշվեկշռային արժեքները՝

- ա) թողարկված ապահովագրության պայմանագրեր, որոնք ակտիվներ են,
- բ) թողարկված ապահովագրության պայմանագրեր, որոնք պարտավորություններ են,
- գ) պահվող վերաապահովագրության պայմանագրեր, որոնք ակտիվներ են,
- դ) պահվող վերաապահովագրության պայմանագրեր, որոնք պարտավորություններ են:

79. Կազմակերպությունը պարտավոր է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով 27-րդ պարագրաֆի համաձայն ճանաչված ակտիվները կամ պարտավորությունները ներառել թողարկված ապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի հաշվեկշռային արժեքում, իսկ պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվները կամ պարտավորությունները (տես պարագրաֆ 65(ա))՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքում:

Ճանաչում ու ներկայացում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն(ներ)ում (պարագրաֆներ F120-F136)

80. 41-րդ և 42-րդ պարագրաֆների համաձայն կազմակերպությունը պետք է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին

հաշվետվությունում (այսուհետ՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) ճանաչված գումարները բաժանի հետևյալների միջև՝

- ա) ապահովագրական ծառայությունների արդյունք (83-86-րդ պարագրաֆներ)՝ բաղկացած ապահովագրական հասույթից և ապահովագրական ծառայությունների գծով ծախսերից, և
- բ) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր (87-92-րդ պարագրաֆներ):

81. Կազմակերպությունը պարտավոր չէ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման փոփոխությունը բաժանել ապահովագրական ծառայությունների արդյունքի և ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի միջև: Եթե կազմակերպությունն այսպիսի բաժանում չի կատարում, ապա պարտավոր է ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման ողջ փոփոխությունը դիտարկել որպես ապահովագրական ծառայությունների արդյունքի մաս:
82. Կազմակերպությունը պետք է պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներն ու ծախսերը առանձին ներկայացնի թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներից կամ ծախսերից:

Ապահովագրական ծառայությունների արդյունք

83. Կազմակերպությունը շահույթում կամ վնասում պետք է ներկայացնի թողարկված ապահովագրության պայմանագրերից առաջացող ապահովագրական հասույթը: Ապահովագրական հասույթը պետք է ներկայացնի ապահովագրության պայմանագրերի խմբով նախատեսված ծածկույթի և այլ ծառայությունների տրամադրումը հատուցումն արտացոլող այն գումարով, որի նկատմամբ իրավունքը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ծառայությունների դիմաց: Բ120-Բ127 պարագրաֆները սահմանում են, թե ինչպես է կազմակերպությունը չափում ապահովագրական հասույթը:
84. Կազմակերպությունը շահույթում կամ վնասում պետք է ներկայացնի թողարկված ապահովագրության պայմանագրերից առաջացող ապահովագրական ծառայությունների գծով ծախսերը, որոնք բաղկացած են կրած պահանջներից (բացառելով ներդրումային բաղադրիչների գծով վճարումները), ապահովագրական ծառայությունների գծով կրած այլ ծախսերից և այլ գումարներից, ինչպես ներկայացված է 103 (բ) պարագրաֆում:
85. Շահույթում կամ վնասում ներկայացված ապահովագրական հասույթից և ապահովագրական ծառայությունների գծով ծախսերից պետք է բացառվի ներդրումային բաղադրիչը: Կազմակերպությունը չպետք է ապահովագրական վճարների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնի շահույթում կամ վնասում, եթե այդ տեղեկատվությունը չի համապատասխանում 83-րդ պարագրաֆի պահանջներին:

86. Կազմակերպությունը կարող է պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբից ստացվող եկամուտները կամ ծախսերը (տես 60-70-րդ պարագրաֆները), բացառությամբ ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի, ներկայացնել մեկ գումարով, կամ կազմակերպությունը կարող է առանձին ներկայացնել վերաապահովագրողից փոխհատուցված գումարները և վճարված ապահովագրական վճարների բաշխումը, որոնք միասին որպես զուտ գումար հավասար են վերը նշված միասնական գումարին: Եթե կազմակերպությունն առանձին է ներկայացնում վերաապահովագրողից փոխհատուցված գումարները և վճարված ապահովագրական վճարների բաշխումը, ապա պետք է՝
- ա) վերաապահովագրության գծով դրամական հոսքերը, որոնք կախված են հիմքում ընկած պայմանագրերի գծով պահանջներից, հաշվառի որպես պահանջների մաս, որոնք ակնկալվում է, որ կփոխհատուցվեն՝ պահվող վերաապահովագրության պայմանագրի ներքո.
 - բ) գումարները, որոնք նա ակնկալում է ստանալ վերաապահովագրողից, որոնք կախված չեն հիմքում ընկած պայմանագրերի գծով պահանջներից (օրինակ՝ վերաապահովագրության միջնորդավճարների որոշ տեսակներ), հաշվառի որպես վերաապահովագրողին վճարման ենթակա ապահովագրական վճարներից նվազեցում, և
 - գ) վճարված ապահովագրական վճարների բաշխումը չներկայացնի որպես հասույթի նվազեցում:

Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր (տես պարագրաֆներ F128-F136)

87. Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը պայմանավորված են ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի փոփոխությունով, որն առաջանում է՝
- ա) փողի ժամանակային արժեքի և փողի ժամանակային արժեքի փոփոխության ազդեցությունից, և
 - բ) ֆինանսական ռիսկի ու ֆինանսական ռիսկի փոփոխության ազդեցությունից, սակայն
 - գ) բացառելով ցանկացած նմանատիպ փոփոխություն ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի խմբի համար, որոնք կհանգեցնեն պայմանագրային ծառայությունների մարժայի ճշգրտմանը, բայց չեն ճշգրտում, երբ կիրառվում են 45(բ)(ii), 45(բ)(iii), 45(գ)(ii) կամ 45(գ)(iii) պարագրաֆները: Այս ծախսերը ներառվում են ապահովարական ծառայությունների գծով ծախսերում:

88. Բացառությամբ 89-րդ պարագրաֆի կիրառման դեպքի, կազմակերպությունը պետք է որպես հաշվապահական հաշվառման քաղաքականություն ընտրի հետևյալներից մեկը՝
- ա) Ժամանակաշրջանի համար ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի ներառումը շահույթում կամ վնասում, կամ
 - բ) Ժամանակաշրջանի համար ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի բաժանումը՝ շահույթում կամ վնասում ներառելով գումար, որը որոշվում է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի ակնկալվող ընդհանուր մեծությունը պայմանագրերի խմբի գործողության ժամկետի ընթացքում պարբերական հիմունքով բաշխելու միջոցով՝ Բ130-Բ133 պարագրաֆների համաձայն:
89. Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար, որոնց գծով կազմակերպությունում պահվում են հիմքում ընկած հողվածներ, կազմակերպությունը պետք է որպես հաշվապահական հաշվառման քաղաքականություն ընտրի հետևյալներից մեկը՝
- ա) Ժամանակաշրջանի համար ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի ներառումը շահույթում կամ վնասում, կամ
 - բ) Ժամանակաշրջանի համար ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի բաժանումը՝ շահույթում կամ վնասում ներառելով գումար, որը բացառում է պահվող հիմքում ընկած հողվածների գծով շահույթում կամ վնասում ընդգրկված եկամուտների կամ ծախսերի հետ հաշվապահական անհամապատասխանությունները՝ Բ134-Բ136 պարագրաֆների համաձայն:
90. Եթե կազմակերպությունն ընտրում է 88(բ) կամ 89(բ) պարագրաֆներում սահմանված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ապա պետք է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառի այդ պարագրաֆների համաձայն չափված ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի և ժամանակաշրջանի համար ապահովագրության գծով ընդհանուր ֆինանսական եկամուտների կամ ծախսերի միջև տարբերությունը:
91. Եթե կազմակերպությունը 77-րդ պարագրաֆի համաձայն փոխանցում է ապահովագրության պայմանագրերի խումբը կամ ապաճանաչում է ապահովագրության պայմանագիրը, ապա՝
- ա) պետք է որպես վերադասակարգման ճշգրտում (տես «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ը) շահույթին կամ վնասին վերադասակարգի խմբի (կամ պայմանագրի) գծով ցանկացած մնացորդային գումար, որոնք նախկինում ճանաչվել էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, քանի որ կազմակերպությունն ընտրել էր 88(բ) պարագրաֆում սահմանված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

բ) չպետք է որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՄ 1-ը) շահույթին կամ վնասին վերադասակարգի խմբի (կամ պայմանագրի) գծով ցանկացած մնացորդային գումար, որոնք նախկինում ճանաչվել էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, քանի որ կազմակերպությունն ընտրել էր 89(բ) պարագրաֆում սահմանված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

92. 30-րդ պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը ապահովագրության պայմանագիրը ՀՀՄՄ 21-ի համաձայն հաշվառի որպես դրամային հոդված՝ արտարժույթային հոդվածները կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու նպատակով: Ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի գծով արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կազմակերպությունը ներառում է շահույթի կամ վնասի հաշվետվությունում, բացառությամբ, եթե դրանք, 90-րդ պարագրաֆի համաձայն, առնչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված՝ ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի գծով փոփոխություններին, որոնց դեպքում դրանք պետք է ներառվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Բացահայտում

93. Բացահայտման պահանջների նպատակը կազմակերպության կողմից ծանոթագրություններում տեղեկատվություն բացահայտումն է, որը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության հետ միասին ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հիմք է տալիս գնահատելու ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այդ նպատակին հասնելու համար կազմակերպությունը պետք է բացահայտի քանական և որակական տեղեկատվություն՝

ա) ֆինանսական հաշվետվություններում ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի գծով ճանաչված գումարների վերաբերյալ (տես 97-116-րդ պարագրաֆները):

բ) նշանակալի դատողությունների և այդ դատողություններում փոփոխությունների վերաբերյալ, որոնք կատարվել են ՖՀՄՄ 17-ը կիրառելիս (տես 117-120-րդ պարագրաֆները):

գ) ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի հետ կապված ռիսկերի բնույթի և չափի վերաբերյալ (տես 121-132-րդ պարագրաֆները):

94. Կազմակերպությունը պետք է որոշի մանրամասնության աստիճանը, որն անհրաժեշտ է բացահայտման նպատակին հասնելու համար և տարբեր պահանջներից

յուրաքանչյուրի կարևորության աստիճանը: Եթե 97-132-րդ պարագրաֆների համաձայն ներկայացված բացահայտումները բավարար չեն 93-րդ պարագրաֆում սահմանված նպատակին հասնելու համար, կազմակերպությունը պետք է լրացուցիչ տեղեկատվություն բացահայտի, որն անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար:

95. Կազմակերպությունը պետք է միավորի կամ առանձնացնի տեղեկատվությունն այնպես, որ օգտակար տեղեկատվությունը չանտեսվի՝ մեծ քանակությամբ ոչ նշանակալի մանրամասներ ներառելու, կամ տարբեր հատկանիշներ ունեցող հոդվածները միավորելու արդյունքում:
96. ՀՀՄՄ 1-ի 29-31-րդ պարագրաֆները պահանջներ են սահմանում տեղեկատվության էականության և միավորման նկատմամբ: Ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման համար կարող են նպատակահարմար լինել միավորման հիմքերի հետևյալ օրինակները՝
- ա) պայմանագրի տեսակը (օրինակ՝ հիմնական ապրանքային ուղղությունները),
 - բ) աշխարհագրական տարածքը (օրինակ՝ երկիրը կամ տարածաշրջանը) կամ
 - գ) հաշվետու սեզոնները, ինչպես սահմանված է «Գործառնական սեզոններ» ՖՀՄՄ 8-ում:

Ճանաչված գումարների բացատրություն

97. 98-109-րդ պարագրաֆներով պահանջվող բացահայտումներից միայն 98-100-րդ և 102-105-րդ պարագրաֆներով սահմանվածներն են կիրառելի պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կիրառվել է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը: Եթե կազմակերպությունն օգտագործում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, ապա պետք է բացահայտի նաև՝
- ա) 53-րդ և 69-րդ պարագրաֆներում ներկայացված որ չափանիշներին է բավարարում,
 - բ) արդյոք կատարում է փողի ժամանակային արժեքի ու ֆինանսական ռիսկի ազդեցության ճշգրտում՝ 56, 57(բ) և 59(բ) պարագրաֆների համաձայն, և
 - գ) մեթոդը, որն ընտրվել է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչելու համար՝ կիրառելով պարագրաֆ 59(ա)-ն:
98. Կազմակերպությունը պետք է բացահայտի համադրումներ, որոնք ցուցադրում են, թե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ինչպես են փոփոխվել ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի գուտ հաշվեկշռային արժեքները՝ դրամական հոսքերի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն(ներ)ում ճանաչված եկամուտների և ծախսերի արդյունքում: Առանձին համադրումներ պետք է ներկայացվեն թողարկված ապահովագրության պայմանագրերի և պահվող վերաապահովագրության պայմանագրերի համար: Կազմակերպությունը պետք է հարմարեցնի 100-109-րդ պարագրաֆների պահանջները՝ պահվող վերաապահովագ-

րության պայմանագրերին բնորոշ հատկանիշներն արտացոլելու համար, որոնք տարբերվում են թողարկված ապահովագրության պայմանագրերից. օրինակ՝ ծախսերի գներացում կամ հասույթի փոխարեն ծախսերի նվազեցում:

99. Կազմակերպությունը համադրումներում բավարար տեղեկատվություն պետք է ներկայացնի, որպեսզի հնարավորություն ընձեռի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին՝ նույնականացնելու դրամական հոսքերից և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն(ներ)ում ճանաչված գումարներից առաջացող փոփոխությունները: Սույն պահանջի բավարարման նպատակով կազմակերպությունը պետք է՝

- ա) 100-105-րդ պարագրաֆներով սահմանված համադրումները բացահայտի աղյուսակի տեսքով, և
- բ) յուրաքանչյուր համադրման գծով ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ գուտ հաշվեկշռային արժեքները՝ դրանք բաժանելով թողարկված պայմանագրերի գծով ընդհանուր գումարի՝ որպես ակտիվներ և թողարկված պայմանագրերի գծով ընդհանուր գումարի՝ որպես պարտավորություններ, որոնք հավասար են 78-րդ պարագրաֆի համաձայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված գումարներին:

100. Կազմակերպությունը պետք է բացահայտի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումներ՝ ստորև նշվածներից յուրաքանչյուրի համար առանձին՝

- ա) գուտ պարտավորություններ (կամ ակտիվներ)՝ մնացորդային ծածկույթի բաղադրիչի գծով, բացառելով վնասի բաղադրիչը.
- բ) ցանկացած վնասի բաղադրիչ (տես 47-52-րդ և 57-58-րդ պարագրաֆները)
- գ) կրած պահանջների գծով պարտավորություններ: Ապահովագրության այն պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կիրառվել է 53-59-րդ կամ 69-70-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, կազմակերպությունը պետք է բացահայտի առանձին համադրումներ հետևյալների գծով՝
 - (i) ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ, և
 - (ii) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում:

101. Բացի այն պայմանագրերից, որոնց նկատմամբ կիրառվել է 53-59-րդ կամ 69-70-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, ապահովագրության այլ պայմանագրերի համար նույնպես կազմակերպությունը պետք է բացահայտի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումներ՝ ստորև նշվածներից յուրաքանչյուրի համար առանձին

- ա) ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ,
- բ) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում, և

գ) պայմանագրային ծառայությունների մարժա:

102. 100-101-րդ պարագրաֆներում նշված համադրումների նպատակը ապահովագրական ծառայությունների արդյունքի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվության տրամադրումն է:

103. Կազմակերպությունը 100-րդ պարագրաֆով պահանջվող համադրումներում առանձին պետք է բացահայտի ապահովագրական ծառայություններին առնչվող հետևյալ գումարները, եթե կիրառելի է՝

ա) ապահովագրական հասույթ,

բ) ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր, առանձին ցուցադրելով՝

(i) կրած պահանջները (բացառելով ներդրումային բաղադրիչները) և ապահովագրական ծառայությունների գծով կրած այլ ծախսեր,

(ii) ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա,

(iii) փոփոխություններ, որոնք վերաբերում են անցյալ ծառայությանը, այսինքն փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք վերաբերվում են կրած պահանջների գծով պարտավորությանը, և

(iv) փոփոխություններ, որոնք վերաբերում են ապագա ծառայությանը, այսինքն անբարենպաստ պայմանագրերի խմբի գծով վնասներ և այդ վնասների հակադարձումներ.

գ) ապահովագրական հասույթից և ապահովագրական ծառայությունների գծով ծախսերից բացառված ներդրումային բաղադրիչներ:

104. Կազմակերպությունը 101-րդ պարագրաֆով պահանջվող համադրումներում առանձին պետք է բացահայտի ապահովագրական ծառայություններին առնչվող հետևյալ գումարները, եթե կիրառելի է՝

ա) փոփոխություններ, որոնք վերաբերում են ապագա ծառայությանը, կիրառելով F96-F118 պարագրաֆները, առանձին ներկայացնելով՝

(i) գնահատումներում փոփոխությունները, որոնք ճշգրտում են պայմանագրային ծառայությունների մարժան,

(ii) գնահատումներում փոփոխությունները, որոնք չեն ճշգրտում պայմանագրային ծառայությունների մարժան, այսինքն անբարենպաստ պայմանագրերի խմբի գծով վնասները և այդ վնասների հակադարձումները, և

(iii) ժամանակաշրջանի ընթացքում սկզբնապես ճանաչված պայմանագրերի ազդեցությունը.

- բ) փոփոխություններ, որոնք վերաբերում են ընթացիկ ծառայությանը, այսինքն՝
- (i) ծառայությունների փոխանցումն արտացոլելու համար շահույթում կամ վնասում ճանաչված պայմանագրային ծառայությունների մարժայի գումարը,
 - (ii) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման փոփոխությունը, որը չի վերաբերում ապագա կամ անցյալ ծառայությանը, և
 - (iii) *փորձի վրա հիմնված ճշգրտումները* (տես Բ97(գ) և Բ113(ա) պարագրաֆները)
- գ) փոփոխություններ, որոնք վերաբերում են անցյալ ծառայությանը, այսինքն՝ փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք վերաբերում են կրած պահանջներին (տես Բ97(բ) և Բ113(ա) պարագրաֆները)

105. 100-101-րդ պարագրաֆներում նշված համադրումներն ամբողջականացնելու համար կազմակերպությունը պետք է նաև առանձին բացահայտի ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ապահովագրական ծառայություններին չառնչվող հետևյալ գումարները, եթե կիրառելի է՝

- ա) ժամանակաշրջանի դրամական հոսքերը, ներառյալ՝
- (i) թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով ստացված ապահովագրական վճարները (կամ պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով վճարվածները),
 - (ii) ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, և
 - (iii) թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով կրած պահանջների վճարումները և այլ ապահովագրական ծառայությունների հետ կապված ծախսերի վճարումները (կամ պահվող վերաապահովագրության պայմանագրերի ներքո փոխհատուցումները), բացառելով ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը.
- բ) պահվող վերաապահովագրության պայմանագրի թողարկողի կողմից պարտավորությունների չկատարման ռիսկի փոփոխությունների ազդեցությունը,
- գ) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը, և
- դ) այլ լրացուցիչ տողային հոդվածներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովագրության պայմանագրերի գուտ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը հասկանալու համար:

106. Թողարկված ապահովագրության պայմանագրերի համար, բացառությամբ նրանց, որոնց նկատմամբ կիրառվել է 53-59-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագ-

րական վճարի բաշխման մոտեցումը, կազմակերպությունը պետք է բացահայտի ժամանակաշրջանի ընթացքում ճանաչված ապահովագրական հասույթի վերլուծությունը՝ կազմված՝

- ա) մնացորդային ծածկույթի գծով պարտավորության փոփոխությանն առնչվող գումարներից, ինչպես սահմանված է Բ124 պարագրաֆում, առանձին բացահայտելով՝
 - (i) ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական ծառայությունների գծով կրած ծախսերը, ինչպես սահմանված է Բ124(ա) պարագրաֆում,
 - (ii) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման փոփոխությունը, ինչպես սահմանված է Բ124(բ) պարագրաֆում, և
 - (iii) ժամանակաշրջանի ընթացքում ծառայությունների փոխանցման հետևանքով շահույթում կամ վնասում ճանաչված պայմանագրային ծառայությունների մարժայի գումարը, ինչպես սահմանված է Բ124(գ) պարագրաֆում:
- բ) ապահովագրական վճարների մի մասի բաշխումից, որոնք առնչվում են ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի փոխհատուցմանը:

107. Ապահովագրության պայմանագրերի համար, բացառությամբ նրանց, որոնց նկատմամբ կիրառվել է 53-59-րդ կամ 69-70-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, կազմակերպությունը պետք է բացահայտի թողարկված ապահովագրության պայմանագրերի և պահվող վերաապահովագրության պայմանագրերի ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա, որոնք սկզբնապես ճանաչվել են ժամանակաշրջանի ընթացքում՝ ցուցադրելով սկզբնական ճանաչման պահին դրանց ազդեցությունը հետևյալների վրա՝

- ա) ապագա դրամական արտահոսքերի ներկա արժեքի գնահատումներ՝ առանձին ներկայացնելով ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը,
- բ) ապագա դրամական ներհոսքերի ներկա արժեքի գնահատումներ,
- գ) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում, և
- դ) պայմանագրային ծառայությունների մարժա:

108. 107-րդ պարագրաֆով պահանջվող բացահայտումներում կազմակերպությունն առանձին պետք է բացահայտի գումարները, որոնք առաջանում են՝

- ա) ապահովագրության պայմանագրերի փոխանցման կամ բիզնեսի միավորումների գործարքի շրջանակներում այլ կազմակերպությունից ձեռքբերված պայմանագրերից, և

բ) պայմանագրերի խմբերից, որոնք անբարենպաստ են:

109. Ապահովագրության պայմանագրերի համար, բացառությամբ նրանց, որոնց նկատմամբ կիրառվել է 53-59-րդ կամ 69-70-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն, որում բացատրում է, թե երբ է ակնկալում շահույթում կամ վնասում ճանաչել պայմանագրային ծառայությունների մարժայի գծով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ մնացորդը՝ կամ քանակապես՝ համապատասխան ժամանակային միջակայքերով, կամ որակական տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Թողարկված ապահովագրության պայմանագրերի և պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով նշված տեղեկատվությունը պետք է առանձին ներկայացվի:

Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր

110. Կազմակերպությունը պետք է բացահայտի հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի ընդհանուր գումարը և բացատրություն ներկայացնի դրա վերաբերյալ: Մասնավորապես, կազմակերպությունը պետք է բացատրի ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի և իր ակտիվների գծով ներդրումային հատույցի միջև կապը, հնարավորություն ընձեռելով իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին՝ գնահատելու շահույթում կամ վնասում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ֆինանսական եկամուտների կամ ծախսերի աղբյուրները:
111. Ուղղակի մասնակցության հայտանիշներով պայմանագրերի համար կազմակերպությունը պետք է նկարագրի հիմքում ընկած հոդվածների կազմն ու բացահայտի դրանց իրական արժեքները:
112. Եթե կազմակերպությունը ուղղակի մասնակցության հայտանիշներով պայմանագրերի համար, Բ115 պարագրաֆի համաձայն նախընտրում է չճշգրտել պայմանագրային ծառայությունների մարժան՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում որոշ փոփոխությունների հետևանքով, ապա պետք է բացահայտի ընթացիկ ժամանակաշրջանում այդ նախընտրության ազդեցությունը պայմանագրային ծառայությունների մարժայի ճշգրտման վրա:
113. Եթե կազմակերպությունը, ուղղակի մասնակցության հայտանիշներով պայմանագրերի համար, Բ135 պարագրաֆի համաձայն փոխում է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի բաժանման հիմքը՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև, ապա մոտեցումը փոխելու ժամանակաշրջանում պետք է բացահայտի՝

ա) պատճառը, թե ինչու է կազմակերպությունից պահանջվել փոխել բաժանման հիմքը,

- բ) ֆինանսական հաշվետվությունների՝ ազդեցության ենթարկված յուրաքանչյուր հոդվածի ճշգրտման գումարը, և
- գ) փոփոխության ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքը, որի նկատմամբ այդ փոփոխությունը կիրառվել է:

Անցումային գումարներ

114. Կազմակերպությունը պետք է բացահայտումներ ներկայացնի, որոնք հնարավորություն կտան ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին նույնականացնելու հետագա ժամանակաշրջանների պայմանագրային ծառայությունների մարժայի և ապահովագրական հասույթի վրա անցումային ամսաթվի դրությամբ վերափոխված հետընթաց մոտեցմամբ (տես Գ6-Գ19 պարագրաֆները) կամ իրական արժեքի մոտեցմամբ (տես Գ20-Գ24 պարագրաֆները) չափվող ապահովագրության պայմանագրերի խմբերի ազդեցությունը: Հետևաբար կազմակերպությունը ստորև նշվածների համար առանձին պետք է բացահայտի 101(գ) պարագրաֆի համաձայն պայմանագրային ծառայությունների մարժայի համադրումը և 103(ա) պարագրաֆի համաձայն ապահովագրական հասույթի գումարի համադրումը՝
- ա) անցումային ամսաթվի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրեր, որոնց նկատմամբ կազմակերպությունը կիրառել է վերափոխված հետընթաց մոտեցումը,
 - բ) անցումային ամսաթվի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրեր, որոնց նկատմամբ կազմակերպությունը կիրառել է իրական արժեքի մոտեցումը, և
 - գ) մնացած բոլոր ապահովագրության պայմանագրեր:
115. Բոլոր այն ժամանակաշրջանների համար, որոնցում 114(ա) կամ 114(բ) պարագրաֆների համաձայն բացահայտումներ են կատարվել՝ հնարավորություն ընձեռելով ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հասկանալու անցումային գումարները որոշելիս օգտագործված մեթոդների ու կիրառված դատողությունների բնույթն ու նշանակալիությունը, կազմակերպությունը պետք է բացատրի՝ ինչպես է իրականացրել անցումային ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի չափումը:
116. Կազմակերպությունը, որը նախընտրել է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը բաժանել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև, կիրառում է Գ18(բ), Գ19(բ), Գ24(բ) և Գ24(գ) պարագրաֆները՝ որոշելու ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի, որոնք պետք է ճանաչված լինեին շահույթում կամ վնասում և անցումային ամսաթվի դրությամբ ապահովագրության գծով ընդհանուր ֆինանսական եկամուտների կամ ծախսերի միջև կուտակային տարբերությունը՝ այն

ապահովագրության պայմանագրերի խմբի գծով, որի նկատմամբ բաժանումը կիրառվում է: Բոլոր այն ժամանակաշրջանների համար, որոնցում առկա են սույն պարագրաֆի կիրառմամբ որոշված գումարներ, կազմակերպությունը պետք է բացահայտի համադրումներ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված կուտակային գումարների սկզբնական և վերջնական մնացորդների վերաբերյալ, որոնք առնչվում են ապահովագրության պայմանագրերի խմբին: Համադրումը պետք է ներառի, օրինակ, ժամանակաշրջանի ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված օգուտները կամ կորուստները, ինչպես նաև նախորդ ժամանակաշրջաններում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված և ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված օգուտները կամ կորուստները:

Նշանակալի դատողություններ ՖՀՄՄ 17-ը կիրառելիս

117. Կազմակերպությունը պետք է բացահայտի ՖՀՄՄ 17-ը կիրառելիս կատարված նշանակալի դատողություններն ու դատողություններում փոփոխությունները: Մասնավորապես, կազմակերպությունը պետք է բացահայտի օգտագործված ելակետային տվյալները, ենթադրություններն ու գնահատման մեթոդները, ներառյալ՝
- ա) ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող ապահովագրության պայմանագրերը չափելիս օգտագործված մեթոդները և այդ մեթոդներում օգտագործված ելակետային տվյալների գնահատման գործընթացը: Բացառությամբ, երբ գործնականում անհրազորելի է, կազմակերպությունը պետք է նաև քանակական տեղեկատվություն ներկայացնի այդ ելակետային տվյալների վերաբերյալ.
 - բ) պայմանագրերի չափման ժամանակ օգտագործված մեթոդներում և ելակետային տվյալների գնահատման գործընթացում փոփոխությունները, յուրաքանչյուր փոփոխության պատճառը և ազդեցության ենթարկված պայմանագրերի տեսակները.
 - գ) (ա) կետում չներառված դեպքերի համար՝ այն մոտեցումը, որն օգտագործվել է՝
 - (i) տարբերակելու հայեցողության իրագործումից առաջացող ապագա դրամական հոսքերի գնահատումներում փոփոխությունները ապագա դրամական հոսքերի գնահատումներում այլ փոփոխություններից՝ առանց ուղղակի մասնակցության հատկանիշների պայմանագրերի համար (տես պարագրաֆ Բ98),
 - (ii) որոշելու ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը, ներառյալ՝ արդյոք ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումներում փոփոխությունները բաժանվել են ապահովագրական ծառայությունների բաղադրիչի և ապահովագրության գծով ֆինանսական բաղադրիչի միջև,

թե ամբողջությամբ ներկայացվել են ապահովագրական ծառայությունների արդյունքում,

(iii) որոշելու գեղջման դրույքները, և

(iv) որոշելու ներդրումային բաղադրիչները:

118. Եթե 88(բ) կամ 89(բ) պարագրաֆները կիրառելիս կազմակերպությունը նախընտրել է՝ ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը բաժանել շահույթում կամ վնասում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացվող գումարների միջև, կազմակերպությունը պետք է պարզաբանում ներկայացնի շահույթում կամ վնասում ճանաչված ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի որոշման մեթոդների վերաբերյալ:
119. Կազմակերպությունը պետք է բացահայտի ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը որոշելու ժամանակ օգտագործված վստահելիության մակարդակը: Եթե կազմակերպությունը ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը որոշելիս օգտագործում է վստահելիության մակարդակի վրա հիմնված մեթոդից տարբերվող այլ մեթոդ, ապա պետք է բացահայտի օգտագործված մեթոդն ու այդ մեթոդի արդյունքներին համապատասխանող վստահելիության մակարդակը:
120. Կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն դրամական հոսքերի գեղջման ժամանակ օգտագործված եկամտաբերության կորի (կամ եկամտաբերության կորերի միջակայքերի) վերաբերյալ, որոնք չեն տատանվում հիմքում ընկած հողվածների հատույցներից կախված՝ 36-րդ պարագրաֆին համապատասխան: Երբ կազմակերպությունը սույն բացահայտումը ներկայացնում է միավորված՝ ապահովագրության պայմանագրերի մի քանի խմբի համար, ապա պետք է այդ բացահայտումները ներկայացնի միջին կշռված մեծությունների կամ համեմատաբար նեղ միջակայքերի ձևով:

ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող ռիսկերի բնույթը և չափը

121. Կազմակերպությունը պետք է բացահատի տեղեկատվություն, որը հնարավորություն է ընձեռում ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին գնահատել ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող ապագա դրամական հոսքերի բնույթը, մեծությունը, ժամկետները և անորոշությունները: 122-132-րդ պարագրաֆները բացահայտումների համար պահանջներ են պարունակում, որոնք սովորաբար անհրաժեշտ են սույն պահանջը բավարարելու համար:
122. Նշված բացահայտումները կենտրոնանում են ապահովագրության պայմանագրերից առաջացող ապահովագրական և ֆինանսական ռիսկերի վրա, ինչպես նաև՝ թե ինչպես են դրանք կառավարվում: Ֆինանսական ռիսկերը, որպես կանոն, ներառում են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը և շուկայական ռիսկը, սակայն չեն սահմանափակվում դրանցով:

123. Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմակերպության ռիսկին ենթարկվածությունը բացահայտող տեղեկատվությունը չի ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ռիսկին իր ենթարկվածությունը, կազմակերպությունը պետք է բացահայտի այդ փաստը, չներկայացնելու պատճառը և լրացուցիչ տեղեկատվություն, որը կներկայացնի ժամանակաշրջանի ընթացքում իր ռիսկին ենթարկվածությունը:
124. ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող յուրաքանչյուր տեսակի ռիսկի գծով կազմակերպությունը պետք է բացահայտի՝
- ա) ռիսկերին ենթարկվածությունը և ինչպես են դրանք առաջանում,
 - բ) ռիսկերի կառավարման իր նպատակները, քաղաքականությունն ու գործընթացները և ռիսկերի չափման նպատակով օգտագործվող մեթոդները, և
 - գ) (ա) կամ (բ) կետերում նշվածների փոփոխությունները նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ:
125. ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող յուրաքանչյուր տեսակի ռիսկի գծով կազմակերպությունը պետք է բացահայտի՝
- ա) քանակական ամփոփ տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանի վերջին այդ ռիսկին իր ենթարկվածության վերաբերյալ: Այս բացահայտումը պետք է հիմնված լինի այն ներքին տեղեկատվության վրա, որը տրամադրվում է կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմին:
 - բ) 127-132-րդ պարագրաֆներով պահանջվող բացահայտումները, այն չափով, որքանով դրանք չեն բացահայտվել սույն պարագրաֆի (ա) կետի կիրառմամբ:
126. Կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն այն կարգավորող օրենսդրության ազդեցության վերաբերյալ, որի շրջանակներում գործում է օրինակ նվազագույն կապիտալի կամ երաշխավորված տոկոսադրույքի պահանջներ: Եթե կազմակերպությունը կիրառում է 20-րդ պարագրաֆը՝ որոշելու ապահովագրության պայմանագրերի խմբերը, որոնց նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 17-ի ճանաչման ու չափման պահանջները, այդ փաստը պետք է բացահայտվի:

Բոլոր տեսակի ռիսկեր. ռիսկի կենտրոնացումներ

127. Կազմակերպությունը պետք է տեղեկատվություն բացահայտի ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող ռիսկի կենտրոնացումների վերաբերյալ, ներառյալ՝ նկարագրություն, թե ինչպես է կազմակերպությունը որոշում կենտրոնացումները, այն ընդհանուր բնութագրերի նկարագրությունը, որոնք նույնականացնում են յուրաքանչյուր կենտրոնացումը (օրինակ, *ապահովագրական պատահարի* տեսակը, տնտեսության ճյուղը, աշխարհագրական տարածքը կամ արժույթը): Ֆինանսական ռիսկի կենտրոնացումները կարող են առաջանալ, օրինակ, երաշխավորված

տոկոսադրույքից, որը սահմանվում է միննույն մակարդակի վրա՝ մեծ թվով պայմանագրերի համար: Ֆինանսական ռիսկի կենտրոնացումները կարող են առաջանալ նաև ոչ ֆինանսական ռիսկի կենտրոնացումներից, օրինակ, եթե կազմակերպությունը արտադրանքի որակի նկատմամբ պատասխանատվության ապահովագրություն է տրամադրում դեղագործական ընկերություններին և միաժամանակ ներդրումներ է ունենում այդ ընկերություններում:

Ապահովագրական և շուկայական ռիսկ. զգայնության վերլուծություն

128. Կազմակերպությունը պետք է տեղեկատվություն բացահայտի ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող ռիսկի ենթարկվածության փոփոխությունների նկատմամբ զգայունության վերաբերյալ: Այս պահանջին բավարարելու համար կազմակերպությունը պետք է բացահայտի՝
- ա) զգայունության վերլուծություն, որը ցույց է տալիս, թե ինչպես կազդեին շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի վրա ռիսկի ենթարկվածության փոփոխությունները, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ողջամտորեն հնարավոր էին՝
 - (i) ապահովագրական ռիսկի համար՝ ցուցադրելով թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով ազդեցությունը՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի միջոցով ռիսկի նվազեցումից առաջ և դրանից հետո, և
 - (ii) շուկայական ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար՝ այնպես, որ պարզաբանվի ապահովագրության պայմանագրերից առաջացող ռիսկի ենթարկվածության և կազմակերպության կողմից պահվող ֆինանսական ակտիվներից առաջացող ռիսկի ենթարկվածության փոփոխությունների զգայունության միջև կապը.
 - բ) զգայունության վերլուծություն պատրաստելիս կիրառված մեթոդներն ու ենթադրությունները, և
 - գ) նախորդ ժամանակաշրջանի համար զգայունության վերլուծություն պատրաստելիս կիրառված մեթոդների և ենթադրությունների փոփոխությունները և այդպիսի փոփոխությունների պատճառները:
129. Եթե կազմակերպությունը պատրաստում է զգայնության այնպիսի վերլուծություն, որը ցուցադրում է ռիսկի ենթարկվածության փոփոխությունների ազդեցությունը 128(ա) պարագրաֆում նշված գումարներից տարբերվող գումարների վրա և օգտագործում է այդ զգայնության վերլուծությունը ՖՀՄՄ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող ռիսկերի կառավարման նպատակով, ապա կազմակերպությունը կարող է օգտագործել զգայնության այդ վերլուծությունը 128(ա) պարագրաֆում նշված վերլուծության փոխարեն: Կազմակերպությունը պետք է բացահայտի նաև՝

- ա) այդպիսի զգայնության վերլուծություն պատրաստելիս օգտագործված մեթոդի և տրամադրված տեղեկատվության հիմքում ընկած հիմնական պարամետրերի ու ենթադրությունների բացատրություն, և
- բ) բացատրություն օգտագործված մեթոդի նպատակի և սահմանափակումների վերաբերյալ, որոնք կարող են առաջանալ տրամադրված տեղեկատվության գծով:

Ապահովագրական ռիսկ. պահանջների զարգացման ընթացք

130. Կազմակերպությունը պետք է բացահայտի փաստացի պահանջների և պահանջների չգեղջված գումարի նախկին գնահատումների համեմատությունը (այսինքն՝ պահանջների զարգացման ընթացքը): Պահանջների զարգացման ընթացքի բացահայտումը պետք է սկսվի այն ժամանակաշրջանից, երբ առաջացել է ամենավաղ էական պահանջ(ներ)ը և որի դիմաց վճարումների մեծության և ժամկետի առումով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեռևս առկա է անորոշություն. ընդ որում չի պահանջվում, որ բացահատումն ընդգրկի հաշվետու ժամանակաշրջանի վերջից ավելի, քան տասը տարի: Կազմակերպությունից չի պահանջվում բացահայտել տեղեկատվություն այն պահանջների զարգացման ընթացքի վերաբերյալ, որոնց վճարումների մեծության և ժամկետի վերաբերյալ անորոշությունը սովորաբար վերանում է մեկ տարվա ընթացքում: Կազմակերպությունը պետք է համադրի պահանջների զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը ապահովագրության պայմանագրերի խմբի համախառն հաշվեկշռային արժեքի հետ, որոնք կազմակերպությունը բացահայտում է 100 (զ) պարագրաֆի համաձայն:

Պարտքային ռիսկ. այլ տեղեկատվություն

131. ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող պարտքային ռիսկի գծով կազմակերպությունը պետք է բացահայտի՝
- ա) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իր պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը լավագույնս ներկայացնող գումարը, առանձին՝ թողարկված ապահովագրության պայմանագրերի և պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով, և
 - բ) տեղեկատվություն պահվող վերաապահովագրության պայմանագրերի պարտքային ռիսկի որակի մասին, որոնք հանդիսանում են ակտիվներ:

Իրացվելիության ռիսկ. այլ տեղեկատվություն

132. ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող իրացվելիության ռիսկի գծով կազմակերպությունը պետք է բացահայտի՝
- ա) նկարագրություն, թե ինչպես է նա կառավարում իրացվելիության ռիսկը,

- բ) մարման առանձին վերլուծություններ՝ պարտավորություններ հանդիսացող թողարկված ապահովագրության պայմանագրերի խմբերի և պարտավորություններ հանդիսացող պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբերի գծով, որոնք նվազագույնը ցույց են տալիս այդ խմբերի գծով զուտ դրամական հոսքերը հաշվետու ամսաթվից հետո առաջին հինգ տարվա համար՝ ըստ տարիների, և համախմբված՝ առաջին հինգ տարիներից հետո: Կազմակերպությունից չի պահանջվում նշված վերլուծություններում ներառել մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունները՝ չափված 55-59-րդ պարագրաֆների համաձայն: Վերլուծությունները կարող են ներկայացվել հետևյալ ձևով՝
- (i) պայմանագրային չգեղջված զուտ դրամական հոսքերի մնացորդի վերլուծություն՝ ըստ գնահատված ժամկետների, կամ
 - (ii) ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումների վերլուծություն՝ ըստ գնահատված ժամկետների:
- գ) ցպահանջ գումարները, ներկայացնելով այդ գումարների և համապատասխան պայմանագրերի խմբերի հաշվեկշռային արժեքի միջև փոխկապակցվածությունը, եթե սույն պարագրաֆի (բ) կետի համաձայն չի բացահայտվել:

Հավելված Ա

Սահմանված տերմիններ

Սույն հավելվածը Ապահովագրության պայմանագրեր ՖՀՄՄ 17-ի անբաժան մասն է:

**պայմանագրային
ծառայությունների
մարժա**

Ապահովագրության պայմանագրերի խմբի գծով ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի բաղկացուցիչ, որն իրենից ներկայացնում է չվաստակած շահույթ, որը կազմակերպությունը ճանաչելու է ապագայում՝ խմբի **ապահովագրության պայմանագրերի** ներքո ծառայությունները մատուցելուն գուզընթաց:

**ծածկույթի
ժամանակահատված**

Ժամանակաշրջան, որի ընթացքում կազմակերպությունը **ապահովագրական պատահարների** համար ծածկույթ է տրամադրում: Այս ժամանակաշրջանը ընդգրկում է ծածկույթը, որ վերաբերում է **ապահովագրության պայմանագրի** շրջանակներում բոլոր ապահովագրական վճարներին:

**փորձի վրա հիմնված
ճշգրտում**

Տարբերություն՝

- ա) ստացված ապահովագրական վճարների համար (և դրանց առնչվող այլ դրամական հոսքերի, ինչպիսիք են **ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը** և ապահովագրական վճարների հարկերը)՝ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ժամանակաշրջանի ընթացքում ակնկալվող գումարների գնահատականի և ժամանակաշրջանի ընթացքում փաստացի դրամական հոսքերի միջև, կամ
- բ) ապահովագրական ծառայությունների գծով ծախսերի համար (բացառելով ապահովագրության ձեռքբերման ծախսերը)՝ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ գնահատված մեծության, որոնք ակնկալվում է, որ կկրի ժամանակաշրջանի ընթացքում և ժամանակաշրջանի ընթացքում փաստացի կրած մեծության միջև:

Ֆինանսական ռիսկ

Ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, ֆինանսական գործիքի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը

բնորոշ չէ պայմանագրի կողմերից մեկին:

**պայմանագրի
կատարման գծով
դրամական հոսքեր**

Ապագա դրամական արտահոսքերի ներկա արժեքի բացահայտ, անաչառ և հավանականություններով կշռված գնահատում (այսինքն ակնկալվող արժեք)՝ հանած ապագա դրամական ներհոսքերի ներկա արժեքը, որոնք կառաջանան կազմակերպության կողմից **ապահովագրության պայմանագրի կատարմանը զուգընթաց, ներառյալ՝ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը:**

**ապահովագրության
պայմանագրերի խումբ**

Ապահովագրության պայմանագրերի փաթեթ, որն արդյունք է ապահովագրության պայմանագրերի պորտֆելի բաժանման, առնվազն մեկ տարվա ընթացքում կնքված պայմանագրերի, և որոնք սկզբնական ճանաչման պահին՝

- ա) անբարենպաստ են, եթե այդպիսիք առկա են,
- բ) հետագայում անբարենպաստ դառնալու նշանակալի հավանականություն չունեն, եթե այդպիսիք առկա են, կամ
- գ) չեն վերաբերում ոչ «ա», ոչ էլ «բ» կետերին, եթե այդպիսիք առկա են

**ապահովագրության
ձեռքբերման հետ
կապված դրամական
հոսքեր**

Դրամական հոսքեր, որոնք առաջանում են **ապահովագրության պայմանագրերի խմբի վաճառքի, տեղաբաշխման և կնքման հետ կապված ծախսերից, որոնք ուղղակիորեն վերագրելի են այն ապահովագրության պայմանագրերի պորտֆելին, որին այդ խումբը պատկանում է:** Այսպիսի դրամական հոսքերը ներառում են հոսքեր, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն պորտֆելում ընդգրված **ապահովագրության պայմանագրերի խմբին** կամ առանձին պայմանագրերին:

**ապահովագրության
պայմանագիր**

Պայմանագիր, ըստ որի՝ կողմերից մեկը (թողարկողը) պայմանագրի մյուս կողմից (**ապահովադրից**) իր վրա է վերցնում նշանակալի **ապահովագրական ռիսկ**՝ համաձայնվելով փոխհատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (**ապահովագրական պատահարը**) բացասաբար ազդի **ապահովադրի վրա:**

**ուղղակի
մասնակցության
հատկանիշներով
ապահովագրության**

Ապահովագրության պայմանագիր, որի գործողության ժամկետի սկզբում՝

- ա) պայմանագրի պայմանները սահմանում են, որ

պայմանագիր

ապահովադիրը մասնակցություն ունի **հիմքում ընկած հողվածների՝** հստակ նույնականացված համախմբում,

- բ) կազմակերպությունն ակնկալում է **ապահովադիրին** վճարել գումար, որը հավասար է **հիմքում ընկած հողվածների** իրական արժեքի գծով հատույցի նշանակալի մասնաբաժնին, և
- գ) կազմակերպությունն ակնկալում է, որ **ապահովադիրին** վճարվելիք գումարի ցանկացած փոփոխության նշանակալի բաժնեմասը **հիմքում ընկած հողվածների** իրական արժեքի փոփոխությունից կախված փոխվելու է:

առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագիր

Ապահովագրության պայմանագիր, որը չի հանդիսանում **ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագիր:**

ապահովագրական ռիսկ

Ռիսկ, բացառությամբ **Ֆինանսական ռիսկի**, որը փոխանցվում է պայմանագիրը տիրապետողից այն թողարկողին:

ապահովագրական պատահար

Անորոշ ապագա դեպք, որը նախատեսված է **ապահովագրության պայմանագրով** և առաջացնում է **ապահովագրական ռիսկ:**

ներդրումային բաղադրիչ

Գումարներ, որոնք **ապահովագրության պայմանագրով** պահանջվում են կազմակերպությունից վճարել **ապահովադիրին**, նույնիսկ այն դեպքում, եթե **ապահովագրական պատահար** տեղի չի ունեցել:

հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագիր

Ֆինանսական գործիք, որը կոնկրետ ներդրողին պայմանագրային իրավունք է տրամադրում, ի լրումն այն գումարի, որը թողարկողի հայեցողությանը ենթակա չէ, ստանալու լրացուցիչ գումարներ՝

- ա) որոնք, ակնկալվում է, որ կկազմեն ընդհանուր պայմանագրային օգուտների նշանակալի մասը.
- բ) որոնց ժամկետները կամ գումարը պայմանագրորեն կախված են թողարկողի հայեցողությունից.
- գ) որոնք պայմանագրորեն հիմնված են՝
 - (i) պայմանագրերի կոնկրետ համախմբի կամ

պայմանագրի կոնկրետ տեսակի հատույցների վրա.

- (ii) թողարկողի կողմից պահվող ակտիվների կոնկրետ համախմբի գծով իրացված և/կամ չիրացված ներդրումային հատույցների վրա. կամ
- (iii) պայմանագիրը թողարկող կազմակերպության կամ հիմնադրամի շահույթի կամ վնասի վրա:

կրած պահանջների գծով պարտավորություն

Կազմակերպության պարտականությունը հետազոտելու և վճարելու **ապահովագրական պատահարների** գծով վավեր պահանջները, ներառյալ պատահարները, որոնք տեղի են ունեցել, սակայն դրանց գծով պահանջներ դեռևս չեն ներկայացվել և այլ կրած ապահովագրական ծախսերը:

մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն

Գործող **ապահովագրության պայմանագրերի** ներքո կազմակերպության պարտականությունը հետազոտելու և վճարելու **ապահովագրական պատահարների** գծով վավեր պահանջները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել (այսինքն պարտականություն, որը վերաբերում է **ծածկույթի ժամանակահատվածի** մնացած մասին):

ապահովադիր

Կողմ, որն իրավունք ունի ստանալու փոխհատուցում **ապահովագրության պայմանագրի** ներքո, եթե տեղի ունենա **ապահովագրական դեպքը**:

ապահովագրության պայմանագրերի պորտֆել

Ապահովագրության պայմանագրեր, որոնք ենթակա են միանման ռիսկերի և կառավարվում են միասին:

վերաապահովագրության պայմանագիր

Ապահովագրության պայմանագիր, որը թողարկվում է մի կազմակերպության կողմից (վերաապահովագրող)՝ մեկ այլ կազմակերպության կողմից թողարկված մեկ կամ մի քանի **ապահովագրության պայմանագրերի** գծով (հիմքում ընկած պայմանագրեր) պահանջները այդ կազմակերպությանը փոխհատուցելու համար:

ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում

Հատուցում, որը կազմակերպությունը պահանջում է՝ ոչ ֆինանսական ռիսկի հետևանքով առաջացած՝ դրամական հոսքերի գումարի և ժամկետի վերաբերյալ անորոշությունը կրելու համար, պայմանավորված կազմակերպության կողմից **ապահովագրության պայմանագրերի** կատարմամբ:

հիմքում ընկած

Հողվածներ, որոնցով որոշվում են **ապահովադիրին** վճարվելիք

հողվածներ

որոշ գումարներ: **Հիմքում ընկած հողվածները** կարող են բաղկացած լինել ցանկացած հողվածից, օրինակ, ակտիվների բազային պորտֆել, կազմակերպության գուտ ակտիվները կամ կազմակերպության գուտ ակտիվների սահմանված ենթախումբ:

Հավելված Բ

Կիրառման ուղեցույց

Սույն հավելվածը «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՄ 17-ի անբաժան մասն է:

- Բ1. Սույն հավելվածը տրամադրում է ուղեցույց հետևյալների վերաբերյալ՝
- ա) ապահովագրության պայմանագրի սահմանումը (տես Բ2-Բ30 պարագրաֆները),
 - բ) ապահովագրության պայմանագրից բաղադրիչների առանձնացումը (տես Բ31-Բ35 պարագրաֆները),
 - գ) չափումը (տես Բ36-Բ119 պարագրաֆները),
 - դ) ապահովագրական հասույթ (տես Բ120-Բ127 պարագրաֆները),
 - ե) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր (տես Բ128-Բ136 պարագրաֆները) և
 - զ) միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (տես Բ137 պարագրաֆը):

Ապահովագրության պայմանագրի սահմանում (Հավելված Ա)

- Բ2. Սույն բաժինը տրամադրում է ուղեցույց Հավելված Ա-ում ներկայացված ապահովագրության պայմանագրի սահմանման վերաբերյալ: Այն անդրադառնում է հետևյալներին՝
- ա) անորոշ ապագա դեպք (տես Բ3-Բ5 պարագրաֆները),
 - բ) բնափրային տեսքով վճարումներ (տես Բ6 պարագրաֆը),
 - գ) ապահովագրական ռիսկի և այլ ռիսկերի տարբերակումը (տես Բ7-Բ16 պարագրաֆները),
 - դ) նշանակալի ապահովագրական ռիսկ (տես Բ17-Բ23 պարագրաֆները),
 - ե) ապահովագրական ռիսկի մակարդակի փոփոխություններ (տես Բ24-Բ25 պարագրաֆները) և
 - զ) ապահովագրության պայմանագրերի օրինակներ (տես Բ26-Բ30 պարագրաֆները):

Անորոշ ապագա դեպք

- Բ3. Անորոշությունը (կամ ռիսկը) ապահովագրության պայմանագրի էությունն է: Հետևաբար, ստորև բերվածներից առնվազն մեկը ապահովագրության պայմանագրի գործողության սկզբում անորոշ է՝
- ա) ապահովագրական պատահարը տեղի ունենալու հավանականությունը,

- բ) երբ ապահովագրական պատահարը տեղի կունենա, կամ
- գ) որքան պետք է վճարի կազմակերպությունը, եթե ապահովագրական պատահարը տեղի ունենա:

- Բ4. Որոշ ապահովագրության պայմանագրերում ապահովագրական պատահարը պայմանագրի ժամկետի ընթացքում վնասի հայտնաբերումն է, նույնիսկ եթե վնասը առաջացել է նախքան պայմանագրի գործողության սկիզբը տեղի ունեցած դեպքի արդյունքում: Այլ ապահովագրության պայմանագրերում ապահովագրական պատահարը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած դեպքն է, նույնիսկ եթե դրա արդյունքում առաջացող վնասը հայտնաբերվում է պայմանագրի ժամկետի ավարտից հետո:
- Բ5. Որոշ ապահովագրության պայմանագրեր ներառում են արդեն իսկ տեղի ունեցած դեպքեր, որոնց ֆինանսական հետևանքը, սակայն, դեռևս անորոշ է: Նման պայմանագրի օրինակ է ապահովագրության այնպիսի պայմանագիրը, որը ծածկույթ է տրամադրում արդեն իսկ տեղի ունեցած պատահարների բացասական ընթացքի դիմաց: Այդպիսի պայմանագրերում ապահովագրական պատահարը նշված պահանջների գծով վերջնական ծախսումների որոշումն է:

Բնափրային տեսքով վճարումներ

- Բ6. Որոշ ապահովագրության պայմանագրեր պահանջում են կամ թույլ են տալիս վճարումներն իրականացնել բնափրային տեսքով: Նման դեպքերում կազմակերպությունը ապահովադիրին ապրանքներ կամ ծառայություններ է տրամադրում՝ ապահովագրական պատահարների դեպքում ապահովադիրին փոխհատուցելու իր պարտականությունը կատարելու համար: Այդպիսի օրինակ է, երբ կազմակերպությունն ապահովադիրին իր կրած վնասի գումարը հատուցելու փոխարեն փոխարինում է գողացված իրը: Մեկ այլ օրինակ է, երբ կազմակերպությունն ապահովագրության պայմանագրի ծածկույթով նախատեսված բժշկական ծառայությունները տրամադրելու նպատակով օգտագործում է իր սեփական հիվանդանոցները և բժշկական անձնակազմը: Նման պայմանագրերը ապահովագրության պայմանագրեր են, չնայած որ պահանջները մարվում են բնափրային ձևով: 8-րդ պարագրաֆի պայմաններին բավարարող հաստատուն գնով ծառայությունների մատուցման պայմանագրերը նույնպես ապահովագրության պայմանագրեր են, սակայն 8-րդ պարագրաֆի համաձայն, կազմակերպությունն իրավունք ունի ընտրություն կատարել՝ դրանք հաշվառելով կամ ՖՀՄՍ 17-ի կամ «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ՖՀՄՍ 15-ի կիրառմամբ:

Ապահովագրական ռիսկի և այլ ռիսկերի տարբերակում

- Բ7. Ապահովագրության պայմանագրի սահմանումը պահանջում է, որ մի կողմը մյուս կողմից իր վրա վերցնի նշանակալի ապահովագրական ռիսկ: ՖՀՄՍ 17-ը ապահովագրական ռիսկը սահմանում է որպես «պայմանագիրը տիրապետողից

թողարկողին փոխանցված՝ ֆինանսական ռիսկից տարբեր ռիսկ»։ Պայմանագիրը, որը թողարկողին ենթարկում է ֆինանսական ռիսկի՝ առանց նշանակալի ապահովագրական ռիսկի, ապահովագրության պայմանագիր չէ։

Բ8. Հավելված Ա-ում ֆինանսական ռիսկի սահմանումը հղում է կատարում ֆինանսական և ոչ ֆինանսական փոփոխականներին։ Ոչ ֆինանսական փոփոխականների օրինակները, որոնք բնորոշ չեն պայմանագրի կողմերից մեկին, ներառում են որոշակի տարածաշրջանում երկրաշարժի հետևանքով կորուստների ինդեքսը կամ որոշակի քաղաքում ջերմաստիճանների ինդեքսը։ Ֆինանսական ռիսկը բացառում է այն ոչ ֆինանսական փոփոխականներից առաջացող ռիսկը, որոնք բնորոշ են պայմանագրի կողմերից մեկին, ինչպիսին է հրդեհի տեղի ունենալը կամ չուներնալը, որը վնասելու կամ ոչնչացնելու է պայմանագրի այդ կողմի ակտիվը։ Ավելին՝ ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխության ռիսկը ֆինանսական ռիսկ չէ, եթե իրական արժեքն արտացոլում է նման ակտիվների շուկայական գների փոփոխությունները (այսինքն՝ ֆինանսական փոփոխական), և տվյալ ոչ ֆինանսական ակտիվի վիճակը, որը պահվում է պայմանագրի կողմերից մեկի կողմից (այսինքն՝ ոչ ֆինանսական փոփոխական)։ Օրինակ՝ եթե տվյալ ավտոմեքենայի մնացորդային արժեքի երաշխիքը, որում ապահովադիրն ունի ապահովագրական հետաքրքրություն, երաշխավորին ենթարկում է ավտոմեքենայի ֆիզիկական վիճակի փոփոխությունների ռիսկին, ապա այդ ռիսկը ապահովագրական, այլ ոչ թե ֆինանսական ռիսկ է։

Բ9. Որոշ պայմանագրեր, ի լրումն նշանակալի ապահովագրական ռիսկի, թողարկողին ենթարկում են նաև ֆինանսական ռիսկի։ Օրինակ՝ կյանքի ապահովագրության շատ պայմանագրեր ապահովադիրներին և՛ երաշխավորում են նվազագույն հասույցադրույք՝ առաջացնելով ֆինանսական ռիսկ, և՛ միաժամանակ մահվան դեպքում խոստանում են այնպիսի հասուցումներ, որոնք կարող են էականորեն գերազանցել ապահովադրի հաշվի մնացորդը՝ առաջացնելով ապահովագրական ռիսկ՝ մահացության ռիսկի ձևով։ Նման պայմանագրերը ապահովագրության պայմանագրեր են։

Բ10. Որոշ պայմանագրերի ներքո ապահովագրական պատահարը առաջացնում է գումարի վճարում, որը կախված է գնային ինդեքսից։ Նման պայմանագրերը ապահովագրության պայմանագրեր են՝ պայմանով, որ ապահովագրական պատահարով պայմանավորված վճարումը կարող է նշանակալի լինել։ Օրինակ՝ ցմահ անուիտետը, որը կախված է ապրելու արժեքի ինդեքսից, ապահովագրական ռիսկ է փոխանցում, քանի որ վճարումը պայմանավորված է անորոշ ապագա դեպքով, այն է՝ անուիտետ ստացող անձի կյանքի տևողությամբ։ Գնային ինդեքսից կախվածությունը ածանցյալ գործիք է, սակայն այն փոխանցում է նաև ապահովագրական ռիսկ, քանի որ վճարումների քանակը, որի նկատմամբ կիրառվում է ինդեքսը, կախված է անուիտետ ստացողի կյանքի տևողությունից։ Եթե արդյունքում ապահովագրական ռիսկի փոխանցումը նշանակալի է, ապա ածանցյալ գործիքը բավարարում է

ապահովագրության պայմանագրի սահմանմանը, ինչի պարագայում այն չպետք է առանձնացվի հիմնական պայմանագրից (տե՛ս 11(ա) պարագրաֆը):

- Բ11. Ապահովագրական ռիսկը այն ռիսկն է, որը կազմակերպությունն իր վրա է վերցնում ապահովադրից: Դա նշանակում է, որ կազմակերպությունը ապահովադրից պետք է վերցնի ռիսկ, որին ապահովադիրն արդեն ենթարկվել է: Պայմանագրից առաջացած որևէ նոր ռիսկ կազմակերպության կամ ապահովադրի համար ապահովագրական ռիսկ չէ:
- Բ12. Ապահովագրական պայմանագրի սահմանումը հղում է կատարում ապահովադրի վրա բացասական ազդեցությանը: Սահմանումը կազմակերպության կողմից կատարվող վճարման մեծությունը չի սահմանափակում անբարենպաստ դեպքի ֆինանսական ազդեցության չափով: Օրինակ՝ սահմանումը ներառում է «նորը հնի դիմաց» ծածկույթը, ըստ որի՝ ապահովադիրն վճարվում է գումար՝ օգտագործված և վնասված ակտիվը նորով փոխարինելու համար: Նմանապես, այս սահմանումը կյանքի ապահովագրության պայմանագրով նախատեսված վճարումը չի սահմանափակում մահացածի խնամակալների կողմից կրած ֆինանսական վնասի չափով, ոչ էլ բացառում է պայմանագրերը, որոնք սահմանում են նախապես որոշված վճարների մեծություն՝ մահվան կամ դժբախտ պատահարի պատճառած վնասը քանակապես գնահատելու համար:
- Բ13. Որոշ պայմանագրեր պահանջում են վճարում, եթե սահմանված անորոշ ապագա դեպք է տեղի ունենում, սակայն որպես վճարման նախապայման չեն պահանջում ապահովադրի վրա բացասական ազդեցության առկայություն: Նմանատիպ պայմանագիրը ապահովագրության պայմանագիր չէ, նույնիսկ եթե տիրապետողն այն օգտագործում է հիմքում ընկած ռիսկին ենթարկվածությունը մեղմելու նպատակով: Օրինակ՝ եթե տիրապետողն օգտագործում է ածանցյալ գործիք՝ հեջավորելու համար հիմքում ընկած ֆինանսական կամ ոչ ֆինանսական փոփոխականը՝ կոռելացված կազմակերպության ակտիվից ստացվող դրամական հոսքերի հետ, այդ ածանցյալ գործիքը ապահովագրության պայմանագիր չէ, քանի որ վճարումը պայմանավորված չէ նրանով, թե արդյոք ակտիվից ստացվող դրամական հոսքերի նվազումը բացասաբար է ազդում տիրապետողի վրա: Ապահովագրության պայմանագրի սահմանումը հղում է կատարում այնպիսի անորոշ ապագա դեպքի, որի բացասական ազդեցությունը ապահովադրի վրա՝ վճարում կատարելու համար պայմանագրային նախապայման է: Պայմանագրային նախապայմանը կազմակերպությունից չի պահանջում հետաքննել, թե արդյոք դեպքն իրականում բացասական ազդեցություն է ունեցել, սակայն թույլ է տալիս մերժել վճարումը, եթե նա չի հավաստիանում դեպքի բացասական ազդեցության վերաբերյալ:
- Բ14. Պայմանագիրը չեղյալ համարելու կամ երկարացնելու ռիսկը (այսինքն՝ ռիսկը, որ ապահովադիրը պայմանագիրը կդադարեցնի ավելի շուտ կամ ավելի ուշ, քան թողարկողն ակնկալում էր պայմանագրի գինը որոշելիս) ապահովագրական ռիսկ չէ, քանի որ դրա արդյունքում ապահովադիրն կատարվող վճարումներում

փոփոխականությունը պայմանավորված չէ այդ ապահովադրի վրա բացասական ազդեցություն ունեցող անորոշ ապագա դեպքով: Նմանապես, ծախսային ռիսկը (այսինքն՝ պայմանագրի սպասարկման հետ կապված վարչական ծախսումների անսպասելի աճի, այլ ոչ թե ապահովագրական պատահարով պայմանավորված ծախսումների անսպասելի աճի ռիսկը) ապահովագրական ռիսկ չէ, քանի որ նման ծախսերի անսպասելի աճը ապահովադրի վրա բացասական ազդեցություն չի ունենում:

- Բ15. Հետևաբար, պայմանագիրը, որը կազմակերպությանը ենթարկում է պայմանագիրը չեղյալ համարելու ռիսկի, երկարացնելու ռիսկի կամ ծախսային ռիսկի, ապահովագրության պայմանագիր չէ, բացառությամբ, երբ կազմակերպությանը ենթարկում է նաև նշանակալի ապահովագրական ռիսկի: Այնուամենայնիվ, եթե կազմակերպությունը մեղմացնում է իր ռիսկը՝ ոչ ապահովագրական ռիսկի մի մասը այլ կողմին փոխանցելու համար երկրորդ պայմանագիր օգտագործելով, ապա այդ երկրորդ պայմանագիրը մյուս կողմին ենթարկում է ապահովագրական ռիսկի:
- Բ16. Կազմակերպությունը կարող է ապահովադրից իր վրա վերցնել նշանակալի ապահովագրական ռիսկ միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը ապահովադրից առանձնացված է: Փոխադարձ կազմակերպության պարագայում, փոխադարձ կազմակերպությունը իր վրա է վերցնում յուրաքանչյուր ապահովադրի ռիսկը և համախմբում է այդ ռիսկը: Չնայած ապահովադիրները համատեղ են կրում համախմբված ռիսկը, քանի որ կազմակերպությունում ունեն մնացորդային բաժնեմաս, փոխադարձ կազմակերպությունը առանձնացված կազմակերպություն է, որն իր վրա է վերցրել ռիսկը:

Նշանակալի ապահովագրական ռիսկ

- Բ17. Պայմանագիրն ապահովագրության պայմանագիր է միայն այն դեպքում, երբ այն փոխանցում է նշանակալի ապահովագրական ռիսկ: Բ7-Բ16 պարագրաֆները քննարկում են ապահովագրական ռիսկը: Բ18-Բ23 պարագրաֆները քննարկում են ապահովագրական ռիսկի նշանակալի լինելու հանգամանքը:
- Բ18. Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը կարող է հանգեցնել թողարկողի կողմից լրացուցիչ գումարների վճարման, որոնք նշանակալի են ցանկացած առանձին վերցված սցենարի դեպքում, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն առևտրային բովանդակություն (այսինքն՝ ոչ մի նշմարելի ազդեցություն գործարքի տնտեսական կողմի վրա): Եթե ապահովագրական պատահարը կարող է հանգեցնել նրան, որ նշանակալի լրացուցիչ գումարներ վճարման ենթակա կլինեն ցանկացած սցենարի պարագայում, որն ունի առևտրային բովանդակություն, նախորդ նախադասությունում բերված պայմանը կարող է բավարարվել, նույնիսկ եթե ապահովագրական պատահարը չափազանց անհավանական է, կամ նույնիսկ եթե պայմանական դրամական հոսքերի ակնկալվող (այսինքն՝ հավանականություններով կշռված) ներկա

արժեքը կազմում է ապահովագրության պայմանագրի գծով մնացած դրամական հոսքերի ակնկալվող ներկա արժեքի փոքր մասը:

Բ19. Ի լրումն, պայմանագիրը նշանակալի ապահովագրական ռիսկը փոխանցում է միայն այն դեպքում, եթե գոյություն ունի առևտրային բովանդակություն ունեցող սցենար, որի դեպքում թողարկողի մոտ վնասի առաջացման հավանականություն կա՝ ներկա արժեքի հիման վրա կատարված հաշվարկներից ելնելով: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե վերաապահովագրության պայմանագիրը թողարկողին նշանակալի վնասի առաջացման հավանականության չի ենթարկում, այդ պայմանագիրը համարվում է նշանակալի ապահովագրական ռիսկ փոխանցող, եթե այն վերաապահովագրողին է փոխանցում ըստ էության բոլոր ապահովագրական ռիսկերը, որոնք առնչվում են հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի վերաապահովագրված մասերին:

Բ20. Բ18 պարագրաֆում նկարագրված լրացուցիչ գումարները որոշվում են ներկա արժեքի հիմունքով: Եթե անորոշ ժամկետով դեպք տեղի ունենալու պարագայում ապահովագրության պայմանագիրը նախատեսում է վճարում և եթե վճարումը չի ճշգրտվում՝ հաշվի առնելով փողի ժամանակային արժեքը, ապա կարող են լինել սցենարներ, որոնց դեպքում այդ վճարման ներկա արժեքը ավելանում է, նույնիսկ եթե դրա անվանական արժեքը հաստատուն է: Նման օրինակ է ապահովագրությունը, որը տրամադրում է մահվան դեպքում վճարվող հաստատուն հատուցում, երբ ապահովադիրը մահանում է, առանց ծածկույթի գծով ժամկետի սահմանափակման (հաճախ անվանվում է որպես հաստատուն գումարով ողջ կյանքի ապահովագրություն): Անկասկած է, որ ապահովադիրը մահանալու է, բայց մահվան օրն անորոշ է: Վճարումները կարող են կատարվել այն ժամանակ, երբ առանձին ապահովադիրը մահանում է ավելի վաղ, քան ակնկալվում էր: Քանի որ այդ վճարումները չեն ճշգրտվում հաշվի առնելով փողի ժամանակային արժեքը, նշանակալի ապահովագրական ռիսկը կարող է առկա լինել, նույնիսկ եթե ընդհանուր առմամբ պայմանագրերի պորտֆելի գծով վնաս չկա: Նմանապես, պայմանագրի պայմանները, որոնք հետաձգում են ժամկետային փոխհատուցումները ապահովադիրին, կարող են բացառել նշանակալի ապահովագրական ռիսկը: Կազմակերպությունը պետք է օգտագործի 36-րդ պարագրաֆում նշված զեղչման դրույքները՝ լրացուցիչ գումարների ներկա արժեքը որոշելու համար:

Բ21. Բ18 պարագրաֆում նկարագրված լրացուցիչ գումարները վերաբերում են այն գումարների ներկա արժեքին, որոնք գերազանցում են ապահովագրական պատահարը տեղի չունենալու պարագայում վճարվելիք գումարները (բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն առևտրային բովանդակություն): Այդ լրացուցիչ գումարներն ընդգրկում են պահանջների սպասարկման և գնահատման ծախսումները, սակայն չեն ներառում՝

ա) ապագա ծառայությունների դիմաց ապահովադիրից վճարումներ գանձելու հնարավորության կորուստը: Օրինակ՝ ներդրումների հետ կապված կյանքի

ապահովագրության պայմանագրի դեպքում ապահովադրի մահը նշանակում է, որ կազմակերպությունը այլևս չի կարող իրականացնել ներդրումների կառավարման ծառայություններ և դրա դիմաց ստանալ վճար: Այնուամենայնիվ, կազմակերպության այդպիսի տնտեսական վնասը ապահովագրական ռիսկի հետևանք չէ, ճիշտ այնպես, ինչպես փոխադարձ ներդրումային հիմնադրամի կառավարիչը իր վրա չի վերցնում հաճախորդի հնարավոր մահվան հետ կապված ապահովագրական ռիսկը: Հետևաբար, ներդրումների կառավարման դիմաց ապագա վճարների հնարավոր կորուստը տեղին չէ, երբ գնահատվում է պայմանագրի միջոցով փոխանցված ապահովագրական ռիսկի չափը.

- բ) մահվան դեպքում այն վճարների գանձումից հրաժարումը, որոնք կվճարվեին պայմանագրի չեղյալ հայտարարման կամ պայմանագրից հրաժարվելու դեպքում: Քանի որ այդ վճարներն առաջացել են պայմանագրից, դրանցից հրաժարումը չի փոխհատուցում ապահովադրին նախապես գոյություն ունեցող ռիսկի դիմաց: Հետևաբար, դրանք տեղին չեն, երբ գնահատվում է պայմանագրի միջոցով փոխանցված ապահովագրական ռիսկի չափը.
- գ) պայմանագրի տիրապետողին նշանակալի վնաս չպատճառող դեպքով պայմանավորված վճարումը: Օրինակ՝ այնպիսի պայմանագիրը, որը պահանջում է թողարկողից վճարել 1 միլիոն ԱՄ (արժույթի միավոր), եթե ակտիվին պատճառվել է այնպիսի ֆիզիկական վնաս, որը պայմանագրի տիրապետողին հանգեցնում է ոչ նշանակալի տնտեսական կորստի՝ 1ԱՄ-ի չափով: Այս պայմանագրով տիրապետողը 1ԱՄ կորցնելու ոչ նշանակալի ռիսկը փոխանցում է թողարկողին: Միաժամանակ, պայմանագիրն առաջացնում է ոչ ապահովագրական ռիսկ, որ սահմանված դեպքի տեղի ունենալու պարագայում թողարկողը պետք է վճարի 999,999 ԱՄ: Քանի որ չկա սցենար, որի պարագայում ապահովագրական պատահարը պայմանագրի տիրապետողին նշանակալի կորստի չի հանգեցնում, թողարկողը պայմանագրի տիրապետողից իր վրա նշանակալի ապահովագրական ռիսկ չի վերցնում և այս պայմանագիրը ապահովագրության պայմանագիր չէ.
- դ) վերաապահովագրությունից հնարավոր փոխհատուցումները: Կազմակերպությունը նման վերականգնումները հաշվառում է առանձնացված:

F22. Կազմակերպությունը ապահովագրական ռիսկի նշանակալիությունը պետք է գնահատի պայմանագիր առ պայմանագիր: Հետևաբար, ապահովագրական ռիսկը կարող է լինել նշանակալի, նույնիսկ եթե պայմանագրերի պորտֆելի կամ խմբի համար առկա է նշանակալի վնասների նվազագույն հավանականություն:

F23. F18-F22 պարագրաֆներից հետևում է, որ եթե, ըստ պայմանագրի, մահվան դեպքում վճարվող հատուցումը գերազանցում է կենդանի մնալու դեպքում վճարվելիք հատուցումը, այդ պայմանագիրը ապահովագրության պայմանագիր է, բացառությամբ երբ մահվան դեպքում լրացուցիչ հատուցումը ոչ նշանակալի է (որը պետք է որոշել այդ

պայմանագրի, այլ ոչ թե պայմանագրերի ողջ պորտֆելի հիման վրա): Ինչպես նշված է Բ21 (բ) պարագրաֆում, մահվան դեպքում պայմանագրի չեղյալ հայտարարման կամ պայմանագրից հրաժարվելու վճարներից հրաժարումը չի ներառվում այս գնահատման մեջ, եթե այդ հրաժարումը չի հատուցում ապահովադրի՝ նախապես գոյություն ունեցող ռիսկը: Նմանապես, ապահովադրի մնացած կյանքի ընթացում կանոնավոր գումարների վճարում նախատեսող անուիտետի պայմանագիրը ապահովագրության պայմանագիր է, բացառությամբ եթե կյանքի շարունակությամբ պայմանավորված ընդհանուր գումարային վճարները ոչ նշանակալի են:

Ապահովագրական ռիսկի մակարդակի փոփոխություններ

Բ24. Որոշ պայմանագրերի դեպքում ապահովագրական ռիսկի փոխանցումը թողարկողին տեղի է ունենում որոշակի ժամանակ հետո: Օրինակ՝ դիտարկենք այնպիսի մի պայմանագիր, որն ապահովում է սահմանված ներդրումային հատույց և ապահովադրի համար ներառում է հնարավորություն՝ ներդրումների մարման ժամանակ ստացվելիք մուտքերն օգտագործել այն նույն դրույքներով ցմահ անուիտետ գնելու համար, որոնք կազմակերպությունը պահանջում է այլ՝ նոր անուիտետ գնողներից՝ ապահովադրի կողմից հնարավորության իրագործման ժամանակ: Նման պայմանագիրը թողարկողին ապահովագրական ռիսկը փոխանցում է միայն հնարավորության իրագործումից հետո, քանի որ կազմակերպությունը մնում է ազատ՝ անուիտետի գինը այնպիսի հիմունքներով որոշելու համար, որը արտացոլում է այդ ժամանակ կազմակերպությանը փոխանցվող ապահովագրական ռիսկը: Հետևաբար, դրամական հոսքերը, որոնք կառաջանան հնարավորության իրագործման ժամանակ, պայմանագրի շրջանակներից դուրս են և նախքան իրագործումը պայմանագրի շրջանակներում ապահովագրության գծով դրամական հոսքեր չկան: Այնուամենայնիվ, եթե պայմանագիրը սահմանում է անուիտետի դրույքները (կամ շուկայական դրույքներից տարբերվող, անուիտետի դրույքները սահմանելու հիմունք), պայմանագիրը թողարկողին փոխանցում է ապահովագրական ռիսկ, քանի որ թողարկողը ենթակա է այն ռիսկին, որ անուիտետի դրույքներն իր համար կլինեն ոչ բարենպաստ, երբ ապահովադիրն իրագործի հնարավորությունը: Այդ դեպքում, դրամական հոսքերը, որոնք կառաջանան հնարավորության իրագործման ժամանակ, ընդգրկվում են պայմանագրի շրջանակներում:

Բ25. Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են (այսինքն՝ կատարվել են, չեղարկվել են կամ ժամկետը լրացել է), բացառությամբ, եթե պայմանագրի վերափոխման հետևանքով պայմանագիրն ապաճանաչվել է՝ 74-77-րդ պարագրաֆների համաձայն:

Ապահովագրության պայմանագրերի օրինակներ

Բ26. Ստորև բերված պայմանագրերը ապահովագրության պայմանագրերի օրինակներ են, եթե ապահովագրական ռիսկի փոխանցումը նշանակալի է՝

- ա) գողության կամ վնասվածքի ապահովագրությունը.
- բ) արտադրանքն արտադրողի պատասխանատվության, մասնագիտական պատասխանատվության, քաղաքացիական պատասխանատվության կամ դատական ծախսերի ապահովագրությունը.
- գ) կյանքի ապահովագրությունը և հուղարկավորության կանխավճարային պլանները (չնայած մահը որոշակի է՝ մահվան տեղի ունենալու պահն անորոշ է, կամ, կյանքի ապահովագրության որոշ տեսակների համար անորոշ է, թե արդյոք մահը տեղի կունենա ապահովագրությամբ ծածկված ժամկետի ընթացքում).
- դ) ցմահ անուիտետները և կենսաթոշակները, այսինքն՝ պայմանագրեր, որոնք նախատեսում են հատուցում ապագա անորոշ դեպքի (անուիտետը ստացողի կամ թոշակառուի կյանքի տևողության) տեղի ունենալու պարագայում՝ անուիտետ ստացողին կամ թոշակառուին ապահովելու եկամուտների որոշակի մակարդակ, որի վրա նրա կյանքի տևողությունը՝ այլ պարագայում, բացասաբար կազդեր: (Գործատուների պարտավորությունները, որոնք առաջանում են աշխատակիցների հատուցումների պլաններից և կենսաթոշակային հատուցումների պարտավորություններից, որոնք հաշվառվում են որպես սահմանված հատուցումների թոշակային պլաններ, 7(բ) պարագրաֆի համաձայն, ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտից դուրս են):
- ե) անգործունակության և բժշկական ապահովագրությունը.
- զ) իրագործման երաշխիքները, գործատուի երաշխիքները, կատարողական երաշխիքները, մրցութային երաշխիքները, այսինքն՝ պայմանագրեր, որոնք փոխհատուցում են տիրապետողին, եթե մյուս կողմը չի իրականացնում իր պայմանագրային պարտականությունները, օրինակ՝ շենքի կառուցման պարտականությունը.
- է) ապրանքային երաշխիքները: Արտադրողի, դիլերի կամ մանրածախ վաճառողի կողմից վաճառված ապրանքների համար մեկ այլ կողմի տրամադրած ապրանքային երաշխիքները ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում են: Այնուամենայնիվ, ուղղակիորեն արտադրողի, դիլերի կամ մանրածախ վաճառողի կողմից տրամադրված ապրանքային երաշխիքները, 7(ա) պարագրաֆի համաձայն, ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտից դուրս են, փոխարենը գտնվում են ՖՀՄՍ 15-ի կամ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի գործողության ոլորտում.
- ը) տիտղոսային իրավունքների ապահովագրությունը (հողի կամ շենքի նկատմամբ տիտղոսային իրավունքում այնպիսի թերությունների բացահայտումից ապահովագրություն, որոնք ապահովագրության պայմանագրի թողարկման ժամանակ ակնհայտ չէին): Այս դեպքում

ապահովագրական դեպքը տիտղոսային իրավունքում թերությունների բացահայտումն է, այլ ոչ թե թերությունն ինքնին.

- թ) ճանապարհորդության ապահովագրությունը (ապահովադիրների՝ ճանապարհորդության սկզբում կամ դրա ընթացքում կրած կորուստների դիմաց փոխհատուցումը՝ դրամական միջոցներով կամ բնափրային տեսքով).
- ժ) «ադետային» պարտատոմսերը, որոնք նախատեսում են մայր գումարի, տոկոսների կամ ն՛ մայր գումարի, ն՛ տոկոսների նվազեցված վճարումներ, եթե սահմանված դեպքը բացասական ազդեցություն է ունենում պարտատոմսը թողարկողի վրա (բացառությամբ, երբ սահմանված դեպքը չի առաջացնում նշանակալի ապահովագրական ռիսկ, օրինակ՝ եթե այդ դեպքը տոկոսադրույքի կամ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունն է).
- ժա) ապահովագրական սվոպերը և այլ պայմանագրեր, որոնք պահանջում են վճարումներ՝ կախված պայմանագրի կողմերից մեկին բնորոշ կլիմայական, աշխարհագրական կամ այլ ֆիզիկական փոփոխականների փոփոխություններից.

Բ27. Ստորև բերված են օրինակներ, որոնք ապահովագրության պայմանագրեր չեն՝

- ա) ներդրումային պայմանագրեր, որոնք ունեն ապահովագրության պայմանագրի իրավական ձև, սակայն թողարկողին նշանակալի ապահովագրական ռիսկ չեն փոխանցում: Օրինակ՝ կյանքի այնպիսի ապահովագրության պայմանագրերը, որոնցում կազմակերպությունը չի կրում մահացության կամ հիվանդացության նշանակալի ռիսկ, ապահովագրության պայմանագրեր չեն. նման պայմանագրերը ֆինանսական գործիքներ են կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ տե՛ս պարագրաֆ Բ28-ը: Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերը չեն բավարարում ապահովագրության պայմանագրի սահմանմանը. այնուամենայնիվ դրանք 3(գ) պարագրաֆի համաձայն ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում են, պայմանով, որ դրանք թողարկվել են այնպիսի կազմակերպության կողմից, որը նաև ապահովագրության պայմանագրեր է թողարկում.
- բ) պայմանագրեր, որոնք ունեն ապահովագրության իրավական ձև, սակայն ողջ նշանակալի ապահովագրական ռիսկը վերադարձնում են ապահովադիրին՝ չեղարկաման ոչ ենթակա և իրավաբանորեն ամրագրված այնպիսի մեխանիզմների միջոցով, որոնք, որպես ապահովագրված կորուստների ուղղակի արդյունք, ճշգրտում են ապահովադրի կողմից թողարկողին ապագա վճարումները: Օրինակ՝ որոշ ֆինանսական վերաապահովագրության պայմանագրեր և որոշ պայմանագրերի խմբեր ողջ նշանակալի ապահովագրական ռիսկը վերադարձնում են ապահովադիրին. նման

պայմանագրերը, սովորաբար, ֆինանսական գործիքներ են կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր (տե՛ս պարագրաֆ F28-ը)։

- զ) ինքնաապահովագրություն (այսինքն՝ այն ռիսկի կրելը, որը կարող էր ծածկվել ապահովագրությամբ)։ Նման դեպքերում ապահովագրության պայմանագիր գոյություն չունի, քանի որ չկա համաձայնություն այլ կողմի հետ։ Այսպիսով, եթե կազմակերպությունն իր մայր, դուստր կամ միննույն վերահսկողության տակ գտնվող մեկ այլ դուստր կազմակերպության հետ ապահովագրության պայմանագիր է կնքում, համախմբված ֆինանսական հաշվետվություններում ապահովագրության պայմանագիր չի ճանաչվում, քանի որ այլ կողմի հետ պայմանագիր չկա։ Այնուամենայնիվ, թողարկողի կամ տիրապետողի անհատական կամ առանձին ֆինանսական հաշվետվություններում ապահովագրության պայմանագիր ճանաչվում է։
- դ) պայմանագրեր (ինչպիսիք են խաղային պայմանագրերը), որոնք պահանջում են վճարում որոշակի անորոշ ապագա դեպքի տեղի ունենալու պարագայում, սակայն չեն պահանջում, որպես վճարման համար պայմանագրային նախապայման, որ այդ դեպքը բացասաբար ազդի ապահովադրի վրա։ Այնուամենայնիվ, վերջինս ապահովագրության պայմանագրի սահմանումից չի բացառում այն պայմանագրերը, որոնք նախապես որոշված վճարման գումար են սահմանում՝ սահմանված դեպքի, ինչպիսին է մահը կամ դժբախտ պատահարը, պատճառած վնասի քանակական գնահատման նպատակով (տե՛ս F12 պարագրաֆը)։
- ե) ածանցյալ գործիքներ, որոնք մի կողմին ենթարկում են ֆինանսական ռիսկի, բայց ոչ ապահովագրական ռիսկի, քանի որ ածանցյալ գործիքները պահանջում են, որ պայմանագրի կողմը վճարում կատարի (կամ նրանց ստանալու իրավունք տրամադրի) միայն հետևյալ փոփոխականներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունների հիման վրա. սահմանված տոկոսադրույք, ֆինանսական գործիքի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն, վարկային ինդեքս կամ որևէ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը բնորոշ չէ պայմանագրի կողմերից մեկին։
- զ) պարտքի հետ կապված երաշխավորություններ, որը վճարում է պահանջում նույնիսկ այն դեպքում, երբ տիրապետողը պարտապանի ժամանակին չվճարելու պատճառով վնաս չի կրել. նման պայմանագրերը հաշվառվում են «*Ֆինանսական գործիքներ*»ՖՀՄՍ 9-ի (տես F29 պարագրաֆը) համաձայն։
- ե) պայմանագրեր, որոնք պահանջում են վճարումներ՝ կախված կլիմայական, աշխարհագրական կամ այլ ֆիզիկական փոփոխականից, որը պայմանագրերի կողմերից որևէ մեկին բնորոշ չէ (որոնք երբեմն կոչվում են եղանակային ածանցյալ գործիքներ)։

ը) պայմանագրեր, որոնք տրամադրում են մայր գումարի, տոկոսների կամ և մայր գումարի, և տոկոսների նվազեցված վճարումներ՝ կախված կլիմայական, աշխարհագրական կամ այլ ֆիզիկական փոփոխականից, որի ազդեցությունը պայմանագրերի կողմերից որևէ մեկին բնորոշ չէ (երբեմն կոչվում են «աղետային» պարտատոմսեր):

Բ28. Կազմակերպությունը Բ27 պարագրաֆում նկարագրված պայմանագրերի նկատմամբ պետք է կիրառի այլ կիրառելի Ստանդարտներ, ինչպիսիք են ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը:

Բ29. Բ27(գ) պարագրաֆում ներկայացված պարտքի հետ կապված երաշխավորություններն ու պարտքային ապահովագրության պայմանագրերը կարող են ունենալ տարբեր իրավական ձևեր, ինչպիսիք են՝ երաշխավորությունը, ակրեդիտիվի որոշ տեսակները, պարտքի չվճարման պայմանագիրը կամ ապահովագրության պայմանագիրը: Այդ պայմանագրերը ապահովագրության պայմանագրեր են, եթե դրանք թողարկողից պահանջում են սահմանված վճարումների կատարում՝ փոխհատուցելու համար այն վնասը, որը տիրապետողը կրում է, քանի որ սահմանված պարտապանը չի կարողացել վճարում կատարել ապահովադրին՝ այդ պարտքային գործիքի սկզբնական կամ վերափոխված պայմաններով սահմանված ժամկետներում: Այնուամենայնիվ, նման պայմանագրերը բացառվում են ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտից, բացառությամբ, երբ դրանց թողարկողը նախկինում բացահայտ կերպով հայտարարել է, որ նման պայմանագրերը դիտարկում է որպես ապահովագրության պայմանագրեր, և կիրառել է ապահովագրության պայմանագրերի նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառումը (տես 7(ե) պարագրաֆը):

Բ30. Պարտքի հետ կապված երաշխավորություններն ու պարտքային ապահովագրության պայմանագրերը, որոնք պահանջում են վճարումների կատարում նույնիսկ այն դեպքում, եթե ապահովադիրը վնաս չի կրել սահմանված ժամկետում պարտապանի կողմից վճարումներ չկատարելու հետևանքով, ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտից դուրս են, քանի որ դրանք նշանակալի ապահովագրական ռիսկ չեն փոխանցում: Նման պայմանագրերին են վերաբերում այն պայմանագրերը, որոնք վճարումներ են նախատեսում՝

ա) անկախ այն հանգամանից, թե արդյոք կոնտրագենտը տիրապետում է հիմքում ընկած պարտքային գործիքի կամ

բ) վարկունակության կամ վարկային ինդեքսի փոփոխության դեպքում, այլ ոչ թե սահմանված ժամկետում պարտապանի կողմից վճարումներ չկատարելու հետևանքով:

Ապահովագրության պայմանագրից բաղադրիչների առանձնացումը (պարագրաֆներ 10-13)

Ներդրումային բաղադրիչներ (պարագրաֆ 11(բ))

Բ31. 11(բ) պարագրաֆը կազմակերպությունից պահանջում է առանձնացվելի ներդրումային բաղադրիչն առանձնացնել հիմնական ապահովագրության պայմանագրից: Ներդրումային բաղադրիչն առանձնացվելի է այն և միայն այն դեպքում, եթե հետևյալ երկու պայմանները բավարարված են՝

- ա) ներդրումային բաղադրիչն ու ապահովագրության բաղադրիչը սերտորեն փոխկապակցված չեն,
- բ) համարժեք պայմաններով պայմանագիր է վաճառվել կամ կարող է վաճառվել նույն շուկայում կամ նույն իրավակարգում՝ ապահովագրության պայմանագրեր թողարկող կազմակերպությունների կամ այլոց կողմից: Կազմակերպությունը սույն որոշումը կայացնելիս պետք է հաշվի առնի ողջամտորեն հասանելի ամբողջ տեղեկատվությունը: Կազմակերպությունից չի պահանջվում իրականացնել համապարփակ որոնում նույնականացնելու համար՝ արդյոք ներդրումային բաղադրիչը առանձին է վաճառվում:

Բ32. Ներդրումային բաղադրիչն ու ապահովագրության բաղադրիչը սերտորեն փոխկապակցված են այն և միայն այն դեպքում, եթե՝

- ա) կազմակերպությունն անկարող է չափել մի բաղադրիչն առանց մյուսը հաշվի առնելու: Այսպիսով, եթե մի բաղադրիչի արժեքը փոփոխվում է մյուսի արժեքից կախված, կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՍ 17-ը՝ համակցված ներդրումային և ապահովագրության բաղադրիչի հաշվառման համար, կամ՝
- բ) ապահովադիրն անկարող է մի բաղադրիչից օգուտ ստանալ, քանի դեռ մյուսը բացակայում է: Այսպիսով, եթե պայմանագրի մի բաղադրիչի չեղյալ համարումը կամ մարումը հանգեցնում է մյուսի չեղյալ համարվելուն կամ մարվելուն, կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՍ 17-ը՝ համակցված ներդրումային և ապահովագրության բաղադրիչի հաշվառման համար:

Առանձնացվելի ապրանքներ կամ ոչ ապահովագրական ծառայություններ փոխանցելու խոստումներ (պարագրաֆ 12)

Բ33. 12-րդ պարագրաֆը կազմակերպությունից պահանջում է ապահովագրության պայմանագրից առանձնացնել ապահովադիրին առանձնացվելի ապրանքներ կամ ոչ ապահովագրական ծառայություններ փոխանցելու խոստումը: Առանձնացման համար կազմակերպությունը չպետք է հաշվի առնի այն գործողությունները, որոնք կազմակերպությունը պետք է իրականացնի պայմանագրի կատարման համար, բացառությամբ, եթե այդ գործողությունների արդյունքում կազմակերպությունը ապրանք կամ ծառայություն է փոխանցում ապահովադիրին: Օրինակ՝ պայմանագրի

կնքումը նախապատրաստելու համար կազմակերպությունը կարող է կազմակերպչական տարբեր աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն ունենալ: Այդ աշխատանքների իրականացմանը զուգընթաց ապահովադրին ծառայություններ չի փոխանցում :

- Բ34. Ապահովադրին խոստացված ապրանքը կամ ոչ ապահովագրական ծառայությունն առանձնացվելի է, եթե ապահովադիրը կարող է օգուտներ ստանալ այդ ապրանքից կամ ծառայությունից առանձին կամ ապահովադրին հեշտությամբ հասանելի այլ ռեսուրսների հետ համատեղ: Հեշտությամբ հասանելի ռեսուրսները ապրանքներ կամ ծառայություններ են, որոնք առանձին են վաճառվում (տվյալ կամ այլ կազմակերպության կողմից), կամ ռեսուրսներ, որոնք ապահովադիրն արդեն ստացել է (կազմակերպությունից կամ այլ գործարքներից կամ դեպքերից):
- Բ35. Ապահովադրին խոստացված ապրանքը կամ ոչ ապահովագրական ծառայությունն առանձնացվելի չէ, եթե՝
- ա) ապրանքի կամ ծառայության հետ կապված դրամական հոսքերն ու ռիսկերը սերտորեն փոխկապակցված են պայմանագրի ապահովագրության բաղադրիչի հետ կապված դրամական հոսքերի ու ռիսկերի հետ, և
 - բ) կազմակերպությունը նշանակալի ծառայություն է մատուցում ապրանքը կամ ոչ ապահովագրական ծառայությունը ապահովագրության բաղադրիչին ինտեգրելու համար:

Չափում (պարագրաֆներ 29-71)

Ապագա դրամական հոսքերի գնահատումներ (պարագրաֆներ 33-35)

- Բ36. Մույն բաժինն անդրադառնում է հետևյալ հարցերին՝
- ա) ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվության անաչառ կերպով օգտագործում, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի (տես Բ37-Բ41 պարագրաֆները),
 - բ) շուկայական փոփոխականներ և ոչ շուկայական փոփոխականներ (տես Բ42-Բ53 պարագրաֆները),
 - գ) ընթացիկ գնահատումների օգտագործում (տես Բ54-Բ60 պարագրաֆները), և
 - դ) դրամական հոսքեր պայմանագրի շրջանակներում (տես Բ61-Բ71 պարագրաֆները):

Ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվության անաչառ կերպով օգտագործում, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի (պարագրաֆ 33(ա))

- Բ37. Ապագա դրամական հոսքերի գնահատումների նպատակը հնարավոր արդյունքների ամբողջական միջակայքի ակնկալվող արժեքը կամ հավանականություններով կշռված

միջինը որոշելն է, հաշվի առնելով ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը, որը հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը, որը հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, ներառում է տեղեկատվություն անցյալ դեպքերի և ընթացիկ պայմանների վերաբերյալ, ինչպես նաև կանխատեսումներ ապագա պայմանների վերաբերյալ (տես Բ41 պարագրաֆը): Կազմակերպության սեփական տեղեկատվական համակարգերից ստացված տեղեկատվությունը համարվում է հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի:

Բ38. Դրամական հոսքերի գնահատումների մեկնարկային կետը այն սցենարների շարքն է, որոնք արտացոլում են հնարավոր արդյունքների ամբողջական միջակայքը: Յուրաքանչյուր սցենարով սահմանվում է կոնկրետ արդյունքի գծով դրամական հոսքերի մեծությունն ու ժամկետը, և այդ արդյունքի գնահատված հավանականությունը: Ակնկալվող ներկա արժեքը ստանալու համար յուրաքանչյուր սցենարի գծով դրամական հոսքերը զեղչվում են և կշռվում այդ արդյունքի գնահատված հավանականությամբ: Հետևաբար, նպատակը չի հանդիսանում ապագա դրամական հոսքերի հետ կապված առավել հավանական արդյունք կամ «ավելի հավանական, քան ոչ» արդյունք ստանալը:

Բ39. Հնարավոր արդյունքների ամբողջական միջակայք դիտարկելիս, նպատակն առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը անաչառ կերպով հաշվի առնելն է, այլ ոչ թե յուրաքանչյուր հնարավոր սցենարը նույնականացնելը: Գործնականում անհրաժեշտ չէ մշակել մանրամասն սցենարներ, եթե ստացվող գնահատականը համապատասխանում է գնահատման նպատակին, այն է՝ միջինացված արժեքը որոշելիս առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը հաշվի առնելը: Օրինակ, եթե կազմակերպության գնահատմամբ արդյունքների հավանականության բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է այն հավանականության բաշխմանը, որը ամբողջությամբ կարող է ներկայացվել փոքրաթիվ ցուցանիշների կիրառմամբ, բավարար կլինի փոքրաթիվ ցուցանիշների գնահատումը: Նմանապես, որոշ դեպքերում համեմատաբար պարզ մոդելավորումը կարող է ճշգրտության թույլատրելի միջակայքում պատասխան ապահովել, առանց մեծաքանակ մանրամասն սխմույացիաների անհրաժեշտության: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում դրամական հոսքերը կարող են կախված լինել հիմքում ընկած համալիր գործոններից և տնտեսական պայմանների փոփոխություններին կարող են արձագանքել ոչ գծային ձևով: Դա կարող է պատահել, եթե, օրինակ, դրամական հոսքերն արտացոլում են մի շարք փոխկապակցված հնարավորություններ, որոնք բացահայտ կամ ենթադրյալ են: Նման դեպքերում, հավանաբար, գնահատման նպատակին հասնելու համար անհրաժեշտ կլինի կիրառել ավելի բարդ ստոխաստիկ մոդելավորում:

Բ40. Մշակված սցենարները պետք է գործող պայմանագրերի ներքո աղետալի կորուստների առաջացման հավանականության անաչառ գնահատումներ ներառեն: Այդ սցենարները չեն ներառում հնարավոր ապագա պայմանագրերի գծով հնարավոր պահանջերը:

Բ41. Կազմակերպությունը ձեռք բերված տեղեկատվության հիման վրա պետք է գնահատի գործող պայմանագրերի գծով ապագա վճարումների գումարներն ու հավանականությունը, ներառելով՝

ա) տեղեկատվություն ապահովադրի կողմից արդեն ներկայացված պահանջների վերաբերյալ.

բ) այլ տեղեկատվություն ապահովագրության պայմանագրերի հայտնի կամ գնահատված բնութագրերի վերաբերյալ.

գ) պատմական տվյալներ կազմակերպության սեփական փորձի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում լրացված այլ աղբյուրներից պատմական տվյալներով: Պատմական տվյալները ճշգրտվում են ընթացիկ պայմաններն արտացոլելու համար, օրինակ, եթե՝

(i) ապահովագրված բազմության բնութագրերը տարբերվում են (կամ կտարբերվեն, օրինակ, անբարենպաստ ընտրանքի դեպքում) այն բազմության բնութագրերից, որը որպես հիմք է օգտագործվել պատմական տվյալների ստացման համար,

(ii) առկա են վկայություններ, որ պատմական միտումները չեն շարունակվի, որ նոր միտումներ կձևավորվեն կամ որ տնտեսական, ժողովրդագրական և այլ փոփոխություններ կարող են ազդել գործող ապահովագրության պայմանագրերից առաջացող դրամական հոսքերի վրա, կամ

(iii) փոփոխություններ են տեղի ունեցել այնպիսի հարցերում, ինչպիսիք են տեղաբաշխման և պահանջների կառավարման ընթացակարգերը, որոնք կարող են ազդել ապահովագրության պայմանագրերի գծով պատմական տվյալների տեղին լինելու հանգամանքի վրա.

դ) եթե հասանելի է, ընթացիկ գների վերաբերյալ տեղեկատվություն վերաապահովագրության պայմանագրերի և այլ ֆինանսական գործիքների (եթե այդպիսիք առկա են) գծով, որոնք ծածկում են միանման ռիսկեր, ինչպիսիք են «աղետալին» պարտատոմսերն ու «եղանակային» ածանցյալ գործիքները և ապահովագրության պայմանագրերի փոխանցումների համար շուկայական գործող գները: Այս տեղեկատվությունը պետք է ճշգրտվի վերը նշված վերաապահովագրության պայմանագրերից և այլ ֆինանսական գործիքներից առաջացող դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերություններն արտացոլելու համար, որոնք կառաջանան կազմակերպության կողմից ապահովադրի հետ կնքված՝ հիմքում ընկած պայմանագրերի կատարմանը զուգընթաց:

Շուկայական փոփոխականներ և ոչ շուկայական փոփոխականներ

- Բ42. ՖՀՄՍ 17-ը սահմանում է երկու տեսակի փոփոխականներ՝
- ա) շուկայական փոփոխականներ՝ փոփոխականներ, որոնք կարող են դիտվել շուկաներում կամ ուղղակիորեն ստացվել շուկաներից (օրինակ՝ հրապարակայնորեն շրջանառվող արժեթղթերի գներ կամ տոկոսադրույքներ), և
 - բ) ոչ շուկայական փոփոխականներ՝ մնացած բոլոր փոփոխականները (օրինակ՝ ապահովագրական պահանջների հաճախականությունն ու ծանրությունը և մահացության մակարդակը):
- Բ43. Շուկայական փոփոխականները հիմնականում կհանգեցնեն ֆինանսական ռիսկի առաջացման (օրինակ՝ դիտելի տոկոսադրույքները), իսկ ոչ շուկայական փոփոխականները՝ ոչ ֆինանսական ռիսկի առաջացման (օրինակ՝ մահացության մակարդակը): Այնուամենայնիվ, միշտ չէ, որ այդպես է: Օրինակ՝ կարող են լինել ֆինանսական ռիսկերին առնչվող ենթադրություններ, որոնց համար շուկաներում փոփոխականներ չեն կարող դիտվել կամ չեն կարող ուղղակիորեն ստացվել շուկաներից (օրինակ՝ տոկոսադրույքներ, որոնք չեն կարող դիտվել շուկաներում կամ չեն կարող ուղղակիորեն ստացվել շուկաներից):

Շուկայական փոփոխականներ (պարագրաֆ 33(բ))

- Բ44. Շուկայական փոփոխականների գնահատումները պետք է համապատասխանեն գնահատման ամսաթվի դրությամբ դիտելի շուկայական գներին: Կազմակերպությունը պետք է առավելարկի դիտելի ելակետային տվյալների օգտագործումը և չպետք է փոխարինի իր սեփական գնահատումները դիտելի շուկայական տվյալների հետ, բացառությամբ «Իրական արժեքի չափումը» ՖՀՄՍ 13-ի 79-րդ պարագրաֆում նկարագրված դեպքերի: Համաձայն ՖՀՄՍ 13-ի, փոփոխականներ ստանալու անհրաժեշտություն լինելու դեպքում (օրինակ՝ քանի որ դիտելի շուկայական փոփոխականներ առկա չեն) դրանք պետք է հնարավորինս համապատասխանեն դիտելի շուկայական փոփոխականներին:
- Բ45. Շուկայական գներն իրենց մեջ հնարավոր ապագա արդյունքների վերաբերյալ բազմաթիվ կարծիքներ են միավորում և նաև արտացոլում են ռիսկի հետ կապված շուկայի մասնակիցների նախընտրությունները: Հետևաբար, դրանք ապագա արդյունքի մեկ առանձին կանխատեսում չեն: Եթե փաստացի արդյունքը տարբերվում է նախորդ շուկայական գնից, դա չի նշանակում, որ շուկայական գինը «սխալ» էր:
- Բ46. Շուկայական փոփոխականների կիրառման կարևոր ուղղություն է վերաբրտադրող ակտիվների կամ վերաբրտադրող ակտիվների պորտֆելի սահմանումը: Վերաբրտադրող ակտիվը ակտիվ է, որի դրամական հոսքերը բոլոր սցենարներում ճշգրիտ կերպով համընկնում են ապահովագրության պայմանագրերի խմբի հետ կապված պայմանագրային դրամական հոսքերին՝ իրենց մեծությամբ, ժամկետներով և անորոշությամբ: Որոշ դեպքերում վերաբրտադրող ակտիվ կարող է առկա լինել

դրամական հոսքերից որոշների գծով, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագրերի խմբից: Այդ ակտիվների իրական արժեքն արտացոլում է ինչպես ակտիվի գծով դրամական հոսքերի ակնկալվող ներկա արժեքը, այնպես էլ այդ դրամական հոսքերի հետ կապված ռիսկը: Եթե առկա է վերարտադրող ակտիվների պորտֆել որոշ դրամական հոսքերի գծով, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագրերի խմբից, կազմակերպությունը պայմանագրի կատարման գծով համապատասխան դրամական հոսքերը չափելու համար կարող է օգտագործել այդ ակտիվների իրական արժեքը՝ դրամական հոսքերի և զեղչման դրույքի ուղղակիորեն գնահատում կատարելու փոխարեն:

Բ47. ՖՀՄՍ 17-ը կազմակերպությունից չի պահանջում օգտագործել վերարտադրող ակտիվների պորտֆելի մեթոդը: Այնուամենայնիվ, եթե ապահովագրության պայմանագրերից առաջացող դրամական հոսքերից որոշների գծով վերարտադրող ակտիվ կամ պորտֆել առկա չէ, և կազմակերպությունը նախընտրում է օգտագործել այլ մեթոդ, ապա կազմակերպությունը պետք է համոզվի, որ վերարտադրող ակտիվների պորտֆելի մեթոդի կիրառումը հավանաբար չէր հանգեցնի այդ դրամական հոսքերի էականորեն տարբերվող գնահատման արդյունքների:

Բ48. Վերարտադրող ակտիվների պորտֆելի մեթոդից տարբերվող այլ մեթոդներ, ինչպիսիք են ստոխաստիկ մոդելավորման մեթոդը, կարող են կիրառման տեսանկյունից ավելի բարդ կամ պարզ լինել, եթե առկա է նշանակալի փոխկախվածություն դրամական հոսքերի, որոնք տարբերվում են՝ կախված ակտիվների հատույցից և այլ դրամական հոսքերի միջև: Յուրաքանչյուր հատուկ հանգամանքներում դատողություն է անհրաժեշտ՝ որոշելու այն մեթոդը, որը լավագույն կերպով է բավարարում դիտելի շուկայական փոփոխականների հետ համապատասխանության նպատակը: Մասնավորապես, օգտագործվող մեթոդը պետք է հանգեցնի ապահովագրության պայմանագրերում ներառված հնարավորությունների և երաշխավորությունների չափմանը, որը կհամապատասխանի այդ հնարավորությունների և երաշխավորությունների համար դիտելի շուկայական գների (առկայության դեպքում):

Ոչ շուկայական փոփոխականներ

Բ49. Ոչ շուկայական փոփոխականների գնահատումները պետք է արտացոլեն առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին:

Բ50. Ոչ շուկայական արտաքին տվյալները (օրինակ՝ մահացության ազգային վիճակագրությունը) հանգամանքներից կախված կարող են ավելի կամ պակաս տեղին լինել, քան ներքին տվյալները (օրինակ՝ մահացության իր ներքին մշակված վիճակագրությունը): Օրինակ՝ կյանքի ապահովագրության պայմանագրեր թողարկող կազմակերպությունը, իր ապահովագրության պայմանագրերի համար մահացության սցենարների հավանականության անաչառ գնահատումներ մշակելիս, չպետք է

հիմնվի միայն մահացության ազգային վիճակագրության վրա, այլ պետք է հաշվի առնի մնացած ողջ հիմնավոր և ողջամիտ ներքին և արտաքին աղբյուրների տեղեկատվությունը՝ հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Այդ հավանականությունները մշակելիս, կազմակերպությունն ավելի շատ պետք է հիմնվի առավել համոզիչ տեղեկատվության վրա: Օրինակ՝

ա) մահացության ներքին վիճակագրությունը կարող է ավելի համոզիչ լինել, քան մահացության ազգային տվյալները, եթե ազգային տվյալները ստացվել են ավելի մեծ բնակչության բազմությունից, որոնք ներկայացուցչական չեն ապահովագրված բազմության համար: Սա կարող է լինել այն պատճառով, որ, օրինակ, ապահովագրված բազմության ժողովրդագրական բնութագրերը կարող են նշանակալիորեն տարբերվել երկրի բնակչության համապատասխան բնութագրերից, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը կարիք կունենա ավելի շատ հիմնվել ներքին տվյալների, և ավելի պակաս՝ ազգային վիճակագրության տվյալների վրա:

բ) ընդհակառակը, եթե ներքին վիճակագրական տվյալները ստացվել են ավելի փոքր բազմությունից, որոնց բնութագրերը համարվում են մոտ երկրի բնակչության բնութագրերին, իսկ ազգային վիճակագրությունն ընթացիկ է, կազմակերպությունը պետք է ավելի շատ հիմնվի ազգային վիճակագրության վրա:

Բ51. Ոչ շուկայական փոփոխականների գնահատված հավանականությունները չպետք է հակասեն դիտելի շուկայական փոփոխականներին: Օրինակ՝ ապագա ինֆլյացիայի մակարդակի սցենարների գնահատված հավանականությունները հնարավորինս պետք է համապատասխանեն շուկայական տոկոսադրույքներից ենթադրվող հավանականություններին:

Բ52. Որոշ դեպքերում կազմակերպությունը կարող է եզրակացնել, որ շուկայական փոփոխականները փոփոխվում են ոչ շուկայական փոփոխականներից անկախ: Այս դեպքում կազմակերպությունը պետք է դիտարկի սցենարներ, որոնք արտացոլում են ոչ շուկայական փոփոխականների գծով արդյունքների միջակայքը, յուրաքանչյուր սցենարի հետ օգտագործելով շուկայական փոփոխականի միևնույն դիտելի արժեքը:

Բ53. Այլ դեպքերում, շուկայական փոփոխականները և ոչ շուկայական փոփոխականները կարող են փոխկապակցված լինել: Օրինակ՝ վկայություն կարող է լինել, որ պայմանագրի չեղակման մակարդակը (ոչ շուկայական փոփոխական) փոխկապակցված է տոկոսադրույքի (շուկայական փոփոխական) հետ: Նմանապես, վկայություն կարող է լինել, որ գույքի կամ մեքենայի ապահովագրության գծով պահանջների մակարդակները փոխկապակցված են տնտեսական ցիկլերի, հետևաբար նաև տոկոսադրույքների և ծախսերի մեծության հետ: Կազմակերպությունը պետք է ապահովի, որ սցենարների հավանականությունները և ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումները, որոնք առնչվում են շուկայական

փոփոխականներին, համապատասխանեն դիտելի շուկայական գներին, որոնք կախված են այդ շուկայական փոփոխականներից:

Ընթացիկ գնահատումների օգտագործում (պարագրաֆ 33(գ))

Բ54. Դրամական հոսքերի յուրաքանչյուր սցենար և դրա հավանականությունը գնահատելիս կազմակերպությունը պետք է օգտագործի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը: Կազմակերպությունը պետք է վերանայի նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իր գնահատումները և թարմացնի դրանք: Այս դեպքում կազմակերպությունը պետք է հաշվի առնի, թե արդյոք՝

ա) թարմացված գնահատումները ճշմարիտ են ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները,

բ) գնահատումներում փոփոխությունները ճշմարիտ են ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանում պայմանների փոփոխությունները: Օրինակ՝ ենթադրենք գնահատումները կատարվել են ժամանակաշրջանի սկզբի հիմնավորված միջակայքի մի եզրում: Եթե պայմանները չեն փոխվել, ապա ժամանակաշրջանի վերջում գնահատումները միջակայքի մյուս եզրը տեղափոխելը ճշմարիտ չի ներկայացնի, թե ինչ է տեղի ունեցել ժամանակաշրջանի ընթացքում: Եթե կազմակերպության ամենավերջին գնահատումները տարբերվում են նախորդ գնահատումներից, սակայն պայմանները չեն փոխվել, նա պետք է վերլուծի՝ արդյոք նոր հավանականությունները, որոնք օգտագործվել են յուրաքանչյուր սցենարում, հիմնավոր են: Նշված հավանականությունների վերաբերյալ գնահատումները թարմացնելիս, կազմակերպությունը պետք է հաշվի առնի և նախկին գնահատումներին օժանդակած վկայությունները, և բոլոր նոր հասանելիները, առավելություն տալով ավելի համոզիչ վկայություններին:

Բ55. Յուրաքանչյուր սցենարում օգտագործված հավանականությունները պետք է արտացոլեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները: Հետևաբար, «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10-ի համաձայն, հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքը, որը վերացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա անորոշությունը, չի տրամադրում վկայություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վերաբերյալ: Օրինակ՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կարող է լինել 20 տոկոսի հավանականություն, որ ապահովագրության պայմանագրի մնացած վեց ամիսների ընթացքում ուժեղ փոթորիկ կլինի: Հաշվետու ժամանակաշրջանից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացնելը, ուժեղ փոթորիկը տեղի է ունենում: Տվյալ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը չպետք է արտացոլեն փոթորիկի ազդեցությունը, որին հետհայացք անելով, հայտնի է, որ տեղի է ունեցել: Փոխարենը, գնահատման մեջ ներառված դրամական հոսքերը հաշվի են առնում հաշվետու

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ ենթադրվող 20 տոկոսանոց հավանականությունը (ՀՀՄՄ 10-ի համաձայն բացահայտելով, որ հաշվետու ժամանակաշրջանից հետո չճշգրտող դեպք է տեղի ունեցել):

Բ56. Ակնկալվող դրամական հոսքերի ընթացիկ գնահատումները պարտադիր չէ, որ նույնական լինեն ամենավերջին փաստացի ցուցանիշների հետ: Օրինակ, ենթադրենք հաշվետու ժամանակաշրջանում մահացության ցուցանիշը 20 տոկոսով գերազանցել է մահացության նախորդ ցուցանիշին և մահացության գծով նախորդ ակնկալիքներին: Ցուցանիշի անսպասելի փոփոխությունը մի քանի գործոնների հետևանք կարող է լինել, ներառյալ՝

ա) երկարաժամկետ փոփոխություններ մահացության մակարդակում,

բ) փոփոխություններ ապահովագրված բազմության բնութագրերում (օրինակ՝ փոփոխություններ տեղաբաշխման կամ իրացման հետ կապված կամ անսովոր պինդ առողջությամբ ապահովադիրների կողմից պայմանագրերի ընտրանքային դադարեցում),

գ) պատահական տատանումներ, կամ

դ) որոշելի չկրկնվող դեպքեր:

Բ57. Կազմակերպությունը պետք է ուսումնասիրի ցուցանիշների փոփոխության պատճառները և իրականացնի դրամական հոսքերի և հավանականությունների նոր գնահատումներ՝ հաշվի առնելով ամենավերջին փորձը, անցյալ փորձը և այլ տեղեկատվություն: Բ56 պարագրաֆի օրինակի արդյունքը սովորաբար կլինի այնպիսին, որ մահվան դեպքում հատուցումների ակնկալվող ներկա արժեքը կփոխվի, բայց ոչ ավելի քան 20 տոկոսով: Եթե Բ56 պարագրաֆի օրինակում մահացության ցուցանիշը շարունակի մնալ էականորեն բարձր այդ ցուցանիշի նախորդ գնահատումների համեմատությամբ, այն գործոնների պատճառով, որոնք ակնկալվում են, որ կշարունակեն լինել հետագայում, մահացության բարձր մակարդակով սցենարներում օգտագործվող գնահատված հավանականությունը կշարունակի մեծանալ:

Բ58. Ոչ շուկայական փոփոխականների գնահատումները պետք է տեղեկատվություն ներառեն ապահովագրական պատահարների ընթացիկ մակարդակի և միտումների վերաբերյալ: Օրինակ՝ շատ երկրներում երկար ժամանակահատվածի ընթացքում մահացության մակարդակը հետևողականորեն նվազել է: Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի որոշումն արտացոլում է այն հավանականությունները, որոնք օգտագործվելու են յուրաքանչյուր հնարավոր միտման սցենարում, հաշվի առնելով առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը:

Բ59. Նմանապես, եթե ապահովագրության պայմանագրերի խմբին բաշխված դրամական հոսքերը ինֆլյացիայի նկատմամբ զգայուն են, ապա պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի որոշումը պետք է արտացոլի հնարավոր ապագա ինֆլյացիայի

մակարդակների ընթացիկ գնահատումները: Քանի որ հավանական է, որ ինֆլյացիայի մակարդակները փոխկապակցված են տոկոսադրույքների հետ, պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի չափումը պետք է արտացոլի ինֆլյացիայի յուրաքանչյուր սցենարի գծով հավանականություններն այնպես, որ դրանք համապատասխանեն շուկայական տոկոսադրույքներից ենթադրվող հավանականություններին, որոնք օգտագործվել են զեղչման դրույքի հաշվարկման համար (տես պարագրաֆ Բ51):

Բ60. Դրամական հոսքերը գնահատելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի ապագա դեպքերի հետ կապված ընթացիկ ակնկալիքները, որոնք կարող են ազդել այդ դրամական հոսքերի վրա: Կազմակերպությունը պետք է մշակի դրամական հոսքերի սցենարներ, որոնք կարտացոլեն այդ ապագա դեպքերը, ինչպես նաև յուրաքանչյուր սցենարի հավանականության անաչառ գնահատումներ: Այնուամենայնիվ, կազմակերպությունը չպետք է հաշվի առնի օրենսդրությունում կատարվելիք ապագա փոփոխությունների հետ կապված ընթացիկ ակնկալիքները, որոնք կփոխեն կամ կդադարեցնեն ներկա պարտականությունը կամ կստեղծեն նոր պարտականություն գործող ապահովագրության պայմանագրի ներքո՝ այնքան ժամանակ, քանի դեռ օրենսդրական փոփոխությունները փաստացի ուժի մեջ չեն մտել:

Դրամական հոսքեր պայմանագրի շրջանակներում (պարագրաֆ 34)

Բ61. Սցենարի դրամական հոսքերի գնահատումները պետք է ներառեն գործող պայմանագրի շրջանակներում գտնվող բոլոր դրամական հոսքերը և դրանցից բացի այլ դրամական հոսքեր չպետք է ներառեն: Կազմակերպությունը պետք է կիրառի 2-րդ պարագրաֆը գործող պայմանագրի շրջանակները որոշելու համար:

Բ62. Ապահովագրության շատ պայմանագրեր ունեն հատկանիշներ, որոնք ապահովադիրներին հնարավորություն են տալիս այնպիսի գործողություններ ձեռնարկել, որոնք կփոխեն իրենց կողմից ստացվելիք գումարների մեծությունը, ժամկետները, բնույթը և անորոշությունները: Նման հատկանիշները ներառում են նորացման օպցիոնները, հրաժարման օպցիոնները, փոխարկման օպցիոններն ու ապահովագրական վճարների վճարումների դադարեցման, բայց միաժամանակ պայմանագրի ներքո օգուտներ ստանալու օպցիոնները: Ապահովագրության պայմանագրերի խմբի չափումը պետք է արտացոլի ակնկալվող արժեքի հիմունքով կազմակերպության ընթացիկ գնահատումները, թե ինչպես են խմբի ապահովադիրներն իրագործելու հասանելի օպցիոնները, իսկ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը պետք է արտացոլի կազմակերպության ընթացիկ գնահատումները, թե որքանով կարող է ապահովադիրների փաստացի վարքագիծը տարբերվել ակնկալվող վարքագծից: Ակնկալվող արժեքը որոշելու այս պահանջը կիրառելի է՝ անկախ խմբում պայմանագրերի քանակից. օրինակ՝ այն կիրառվում է, եթե նույնիսկ խումբը կազմված է մեկ պայմանագրից: Այսպիսով, ապահովագրության

պայմանագրերի խմբի չափման ժամանակ չպետք է ելնել 100 տոկոս հավանականությունից, որ ապահովադիրները՝

ա) կիրառարվեն իրենց պայմանագրերից, եթե առկա է որոշ հավանականություն, որ ապահովադիրներից ոմանք այդպես չեն վարվի, կամ

բ) կշարունակեն իրենց պայմանագրերը, եթե առկա է որոշ հավանականություն, որ ապահովադիրներից ոմանք այդպես չեն վարվի:

Բ63. Եթե ապահովագրության պայմանագիր թողարկողը պայմանագրով պարտադրված է նորացնելու կամ որևէ այլ կերպ շարունակելու պայմանագրի գործողությունը, ապա պետք է կիրառի 34-րդ պարագրաֆը՝ գնահատելու՝ արդյոք ապահովագրության վճարներն ու առնչվող դրամական հոսքերը, որոնք առաջանում են նորացված պայմանագրից, գտնվում են սկզբնական պայմանագրի շրջանակներում:

Բ64. 34-րդ պարագրաֆը հղում է կատարում ապագա ամսաթվի (նորացման ամսաթիվ) դրությամբ գին սահմանելու՝ կազմակերպության գործնական կարողությանը, որն ամբողջությամբ արտացոլում է այդ պայմանագրի ռիսկերը նշված ամսաթվից սկսած: Կազմակերպությունն այդ գործնական կարողությունն ունի սահմանափակումների բացակայության պայմաններում, որոնք հնարավորություն չեն տալիս կազմակերպությանը՝ սահմանել միևնույն գինը, որը կսահմանվեր այդ ամսաթվին թողարկված և գործող պայմանագրի միևնույն բնութագրերն ունեցող նոր պայմանագրի համար, կամ եթե հնարավորություն ունի փոփոխել օգուտների ծավալը՝ այն սահմանվելիք գնին համարժեք դարձնելու համար: Նմանապես, կազմակերպությունը գործնական կարողություն ունի գին սահմանելու, եթե նա կարող է վերանայել գործող պայմանագրի սահմանված գինը այնպես, որ այն արտացոլի ապահովագրության պայմանագրերի պորտֆելի ռիսկերում ընդհանուր փոփոխությունները, նույնիսկ եթե յուրաքանչյուր առանձին ապահովադրի համար սահմանված գինը չի արտացոլում այդ առանձին ապահովադրի գծով ռիսկի փոփոխությունը: Գնահատելիս, թե արդյոք կազմակերպությունն ունի գին սահմանելու գործնական կարողություն, որն ամբողջությամբ արտացոլում է այդ պայմանագրի կամ պորտֆելի ռիսկերը, նա պետք է հաշվի առնի այն բոլոր ռիսկերը, որոնք հաշվի կառներ, երբ նորացման ամսաթվին մնացորդային ծածկույթի համար համարժեք պայմանագրեր կտեղաբաշխեր: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ապագա դրամական հոսքերի գնահատումներ իրականացնելիս կազմակերպությունը պետք է վերանայի ապահովագրության պայմանագրի շրջանակները՝ կազմակերպության իրական իրավունքներին և պարտականություններին առնչվող հանգամանքներում տեղի ունեցած փոփոխությունները ներառելու համար:

Բ65. Ապահովագրության պայմանագրի շրջանակներում գտնվող դրամական հոսքերն այն դրամական հոսքերն են, որոնք ուղղակիորեն կապված են պայմանագրի կատարման հետ, ներառյալ՝ այն դրամական հոսքերը, որոնց գումարի կամ ժամկետի առումով կազմակերպությունն ունի գործողությունների հայեցողություն: Պայմանագրի շրջանակներում գտնվող դրամական հոսքերը ներառում են՝

- ա) ապահովագրական վճարներ (ներառյալ՝ ապահովագրական վճարների ճշգրտումներն ու ապահովագրական վճարների մաս-մաս վճարումները) ապահովադրից և լրացուցիչ դրամական հոսքեր, որոնք բխում են այդ ապահովագրական վճարներից.
- բ) վճարումներ ապահովադրին (կամ նրա անունից), ներառյալ՝ պահանջներ, որոնք արդեն ներկայացվել են, բայց դեռևս չեն վճարվել (այսինքն՝ ներկայացված պահանջներ), պատահարների գծով կրած պահանջներ, որոնք տեղի են ունեցել, սակայն որոնց գծով պահանջներ դեռ չեն ներկայացվել և ապագա բոլոր պահանջները, որոնց գծով կազմակերպությունն ունի իրական պարտականություն (տես 34-րդ պարագրաֆը).
- գ) վճարումներ ապահովադրին (կամ նրա անունից), որոնք փոփոխվում են՝ հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված.
- դ) վճարումներ ապահովադրին (կամ նրա անունից), որոնք պայմանավորված են ածանցյալ գործիքներով, օրինակ՝ պայմանագրում պարունակվող օպցիոններ և երաշխավորություններ, այն չափով, որքանով այդ օպցիոնները և երաշխավորությունները առանձնացված չեն ապահովագրության պայմանագրից (տես 11(ա) պարագրաֆը).
- ե) ապահովագրության ձեռքբերման հետ կապված այն դրամական հոսքերի բաշխում, որոնք վերագրելի են պորտֆելին, որին պատկանում է տվյալ պայմանագիրը.
- զ) պահանջների մշակման ծախսումներ (այսինքն՝ ծախսումներ, որոնք կրելու է կազմակերպությունը ապահովագրության գործող պայմանագրերի ներքո պահանջների հետազոտման, ընթացքի ապահովման և բավարարման ժամանակ, ներառյալ՝ իրավաբանների և փորձագետ-գնահատողների վճարները, ինչպես նաև պահանջների հետազոտման և պահանջների գծով վճարումների ընթացքի ապահովման հետ կապված ներքին ծախսումները).
- է) ծախսումներ, որոնք կազմակերպությունը կրելու է պայմանագրային հատույցները բնաիրային տեսքով վճարելիս.
- ը) ապահովագրական պոլիսների կառավարման և սպասարկման հետ կապված ծախսումներ, ինչպիսիք են ապահովագրական վճարների գծով հաշիվների դուրսգրման ծախսումները և պոլիսի փոփոխությունների ձևակերպումները (օրինակ՝ վերանայումներն ու վերականգնումները): Այսպիսի ծախսումները ներառում են նաև պարբերական միջնորդավճարները, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն միջնորդներին, եթե կոնկրետ ապահովադիրը ապահովագրության պայմանագրի շրջանակներում շարունակի վճարել ապահովագրական վճարները.
- թ) գործարքի հետ կապված հարկերը (ինչպիսիք են ապահովագրական վճարի հարկը, ավելացված արժեքի հարկը և ապրանքների ու ծառայությունների

հարկերը) և պարտադիր վճարները (ինչպիսիք են հակահրդեհային անվտանգության գծով վճարներն ու երաշխիքային հիմնադրամներին հատկացումները), որոնք ուղղակիորեն առաջանում են գործող ապահովագրության պայմանագրերից կամ կարող են վերագրվել դրանց՝ ողջամիտ և հետևողական հիմունքով.

ժ) վճարումներ ապահովագրողի կողմից՝ որպես ապահովադրի կրած հարկային պարտավորությունների կատարման վստահորդ և դրանց հետ կապված մուտքերը.

ժա) ապագա պահանջների գծով փոխհատուցումներից պոտենցիալ դրամական ներհոսքեր (ինչպիսիք են վթարված գույքի իրացումը կամ սուբրոգացիան (ապահովագրական հատուցումից հետո հետադարձ պահանջի իրավունքով հատուցված գումարը հետ վերադարձնելու պահանջ)), որոնք ծածկվում են առկա ապահովագրության պայմանագրերով, ինչպես նաև անցյալ պահանջների գծով փոխհատուցումներից պոտենցիալ դրամական ներհոսքեր՝ այն չափով, որքանով չեն բավարարում որպես առանձին ակտիվ ճանաչելու չափանիշներին.

ժբ) ուղղակիորեն պայմանագրի կատարմանը վերագրելի հաստատուն և փոփոխուն վերադիր ծախսումների (ինչպիսիք են հաշվապահական հաշվառման վարման, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների և սպասարկման, շենքերի մաշվածության, վարձակալության և տեխնիկական սպասարկման ու կոմունալ ծառայությունների գծով ծախսումները) բաշխումը: Նման վերադիր ծախսումները պայմանագրերի խմբին են բաշխվում պարբերական ու իելամիտ հիմունքով և հետևողականորեն կիրառվում են համանման բնութագրեր ունեցող մնացած բոլոր ծախսումների նկատմամբ.

ժգ) պայմանագրով սահմանված՝ ապահովադրին հատուկ վճարման ենթակա ցանկացած այլ ծախսումներ:

Բ66. Ստորև նշված դրամական հոսքերը չպետք է ներառվեն դրամական հոսքերի գնահատման մեջ, որոնք կառաջանան գործող պայմանագրի կատարմանը գուզրնթաց՝

ա) ներդրումային հատույցները: Ներդրումները ճանաչվում, չափվում և ներկայացվում են առանձին.

բ) դրամական հոսքեր (վճարված կամ ստացված), որոնք առաջանում են պահվող վերաապահովագրության պայմանագրերից: Պահվող վերաապահովագրության պայմանագրերը ճանաչվում, չափվում և ներկայացվում են առանձին.

գ) դրամական հոսքեր, որոնք կարող են առաջանալ ապահովագրության ապագա պայմանագրերից, այսինքն՝ դրամական հոսքեր, որոնք դուրս են ապահովագրության գործող պայմանագրերի շրջանակներից (տես 34-35-րդ պարագրաֆները).

- դ) դրամական հոսքեր, որոնք առնչվում են այնպիսի ծախսումներին, որոնք չեն կարող ուղղակիորեն վերագրվել տվյալ պայմանագիրը ներառող ապահովագրության պայմանագրերի պորտֆելին, ինչպիսիք են արտադրանքի մշակման և վերապատրաստման գծով որոշ ծախսումները: Նման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ դրանք կատարվում են.
- ե) դրամական հոսքեր, որոնք առաջանում են պայմանագրի կատարման նպատակով օգտագործված աշխատուժի և այլ ռեսուրսների գծով գերնորմատիվային ծախսումներից: Նման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ դրանք կատարվում են.
- ե) շահութահարկի գծով վճարումներ և մուտքեր, որն ապահովագրողը չի վճարում կամ ստանում որպես վստահորդ: Նման վճարումները և մուտքերը ճանաչվում, չափվում և ներկայացվում են առանձին՝ «Շահութահարկեր» ՀՀՄՍ 12-ի համաձայն.
- ը) դրամական հոսքեր հաշվետու կազմակերպության տարբեր բաղադրիչների միջև, ինչպիսիք են ապահովադիրների հիմնադրամներն ու բաժնետերերի հիմնադրամները, եթե այդ դրամական հոսքերի արդյունքում չի փոխվում ապահովադիրներին վճարման ենթակա գումարի չափը.
- թ) դրամական հոսքեր, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագրից առանձնացված բաղադրիչներից և հաշվառվում են այլ կիրառելի ստանդարտներին համապատասխան (տես 10-13-րդ պարագրաֆները):

Դրամական հոսքեր ներառող պայմանագրեր, որոնք ազդեցություն են ունենում այլ պայմանագրերի ապահովադիրների օգտին դրամական հոսքերի վրա կամ ենթարկվում են դրանց ազդեցությանը

Բ67. Ապահովագրության որոշ պայմանագրեր ազդեցություն են ունենում այլ պայմանագրերի ապահովադիրների օգտին դրամական հոսքերի վրա, պահանջելով, որ՝

- ա) ապահովադիրը հիմքում ընկած հոդվածների՝ միևնույն որոշակի համախմբից հատույցները կիսի այլ պայմանագրերի ապահովադիրների հետ, և
- բ) հետևյալ երկուսից մեկը՝
 - (i) ապահովադիրը կրի հիմքում ընկած հոդվածներից կախված հատույցների իր մասնաբաժնի նվազեցումը՝ այլ պայմանագրերի ապահովադիրների օգտին վճարումների պատճառով, որոնք մասնաբաժին ունեն այդ համախմբում, ներառյալ վճարումները, որոնք պայմանավորված են վերը նշված այլ պայմանագրերի ապահովադիրներին տրված երաշխավորություններով, կամ
 - (ii) այլ պայմանագրերի ապահովադիրները կրեն հիմքում ընկած հոդվածներից կախված հատույցների իրենց մասնաբաժնի նվազեցումը՝

տվյալ ապահովադրի օգտին վճարումների պատճառով, ներառյալ վճարումները, որոնք պայմանավորված են տվյալ ապահովադրին տրված երաշխավորություններով:

Բ68. Երբեմն նման պայմանագրերն կազդեն այլ խմբերի պայմանագրերի ապահովադիրների օգտին դրամական հոսքերի վրա: Յուրաքանչյուր խմբի՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերն արտացոլում են, թե որքանով են խմբում ներառված պայմանագրերը կազմակերպությանը ենթարկում ակնկալվող դրամական հոսքերի ազդեցությանը, անկախ տվյալ խմբի ապահովադիրների օգտին կամ այլ խմբերի ապահովադիրների օգտին լինելու հանգամանքից: Այսպիսով, խմբի՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը՝

ա) ներառում են վճարումներ այլ խմբերի պայմանագրերի ապահովադիրներին, որոնք պայմանավորված են գործող պայմանագրերի պայմաններով, անկախ այն հանգամանքից՝ արդյոք այդ վճարումների կատարումը ակնկալվում է ներկա կամ ապագա ապահովադիրներին, և

բ) բացառում են վճարումները խմբի այն ապահովադիրներին, որոնք (ա) կետի համաձայն, արդեն իսկ ներառվել են մեկ այլ խմբի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում:

Բ69. Օրինակ՝ այն դեպքում, երբ մի խմբի ապահովադիրների օգտին վճարումները հիմքում ընկած հողվածների գծով հատույցների մասնաբաժնի հաշվին նվազել են 350 ԱՄ-ից 250 ԱՄ՝ պայմանավորված մեկ այլ խմբի ապահովադիրների օգտին վճարված երաշխավորված գումարով, առաջին խմբի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը կներառեն 100 ԱՄ վճարումները (այսինքն՝ կլինեն 350 ԱՄ), իսկ երկրորդ խմբի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերից կբացառվի 100 ԱՄ երաշխավորված գումարը:

Բ70. Տարբեր գործնական մոտեցումներ կարող են կիրառվել խմբի պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերը որոշելիս, որոնք ազդեցություն են ունենում այլ խմբերի պայմանագրերի ապահովադիրների դրամական հոսքերի վրա կամ ենթարկվում են դրանց ազդեցությանը: Որոշ դեպքերում կազմակերպությունը հիմքում ընկած հողվածներում փոփոխությունը և դրա հետևանքով դրամական հոսքերում փոփոխությունը կարող է նույնականացնել ընդհանրացման ավելի բարձր մակարդակում, քան խումբն է: Նման դեպքերում կազմակերպությունը հիմքում ընկած հողվածների փոփոխության ազդեցությունը յուրաքանչյուր խմբին պետք է վերագրի պարբերական և խելամիտ հիմունքով:

Բ71. Խմբի պայմանագրերի գծով ողջ ծածկույթը տրամադրելուց հետո պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը դեռ կարող են ներառել վճարումներ, որոնք ակնկալվում է, որ կկատարվեն այլ խմբերի ներկա ապահովադիրներին կամ ապագա ապահովադիրներին: Կազմակերպությունից չի պահանջվում պայմանագրի կատարման գծով նման դրամական հոսքերը շարունակել վերագրել կոնկրետ

խմբերին, փոխարենը բոլոր խմբերից առաջացող նման դրամական հոսքերի գծով կարող է ճանաչել և չափել պարտավորություն:

Ձեռչման դրույքներ (պարագրաֆ 36)

- Բ72. ՖՀՄՍ 17-ը կիրառելիս կազմակերպությունը պետք է օգտագործի հետևյալ զեղչման դրույքները՝
- ա) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը չափելու համար՝ ընթացիկ զեղչման դրույքները՝ 36-րդ պարագրաֆի համաձայն,
 - բ) 44(բ) պարագրաֆի համաձայն, առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի նկատմամբ հաշվեգրվող տոկոսները որոշելու համար՝ պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ որոշված զեղչման դրույքը 36-րդ պարագրաֆի համաձայն անվանական դրամական հոսքերի նկատմամբ կիրառելով, որոնք հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված չեն փոփոխվում,
 - գ) Բ96(ա)-Բ96(գ) պարագրաֆների համաձայն, առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի փոփոխությունները չափելու համար՝ սկզբնական ճանաչման պահին 36-րդ պարագրաֆի համաձայն որոշված զեղչման դրույքները,
 - դ) նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ ունեցող պայմանագրերի խմբի համար, որոնց նկատմամբ կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, 56-րդ պարագրաֆի համաձայն մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտելու համար՝ սկզբնական ճանաչման պահին 36-րդ պարագրաֆի համաձայն որոշված զեղչման դրույքները,
 - ե) եթե կազմակերպությունը նախընտրել է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը բաշխել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև (տես 88-րդ պարագրաֆը), շահույթում կամ վնասում ներառվող՝ ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի գումարը որոշելու համար՝
 - (i) ապահովագրության պայմանագրերի այն խմբերի դեպքում, որոնց համար ֆինանսական ռիսկի հետ կապված ենթադրություններում փոփոխությունները, Բ131 պարագրաֆի համաձայն, նշանակալի ազդեցություն չունեն ապահովադիրներին վճարված գումարների վրա՝ պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ 36-րդ պարագրաֆի համաձայն որոշված զեղչման դրույքները անվանական

դրամական հոսքերի նկատմամբ կիրառելով, որոնք հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված չեն փոփոխվում,

- (ii) ապահովագրության պայմանագրերի այն խմբերի դեպքում, որոնց համար ֆինանսական ռիսկի հետ կապված ենթադրություններում փոփոխությունները, F132(ա)(i) պարագրաֆի համաձայն, նշանակալի ազդեցություն ունեն ապահովադիրներին վճարված գումարների վրա՝ այնպիսի զեղչման դրույքներ, որոնք ֆինանսական եկամուտների կամ ծախսերի վերանայված ակնկալվող մնացորդը բաշխում է պայմանագրերի խմբի գործողության մնացորդային ժամկետի ընթացքում՝ հաստատուն դրույքով, և
- (iii) պայմանագրերի խմբի համար, որոնց նկատմամբ կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը 59(բ) և F133 պարագրաֆների համաձայն՝ կրած պահանջների ամսաթվի դրությամբ 36-րդ պարագրաֆի համաձայն որոշված զեղչման դրույքները անվանական դրամական հոսքերի նկատմամբ կիրառելով, որոնք հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված չեն փոփոխվում:

F73. F72(բ)- F72(ե) պարագրաֆներում ներկայացված պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ զեղչման դրույքները որոշելու համար կազմակերպությունը կարող է օգտագործել այն ժամանակաշրջանի զեղչման դրույքների միջին կշռված արժեքը, որի ընթացքում խմբի պայմանագրերը թողարկվել են, որը, 22-րդ պարագրաֆի համաձայն, չի կարող գերազանցել մեկ տարին:

F74. Ջեղչման դրույքների գնահատումները պետք է համապատասխանեն այլ գնահատումներին, որոնք օգտագործվել են ապահովագրության պայմանագրերը չափելիս՝ կրկնահաշվարկներից ու բացթողումներից խուսափելու համար, օրինակ՝

- ա) դրամական հոսքերը, որոնք հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված չեն փոփոխվում, պետք է զեղչվեն այնպիսի դրույքներով, որոնք չեն արտացոլում նման փոփոխությունները,
- բ) դրամական հոսքերը, որոնք ցանկացած ֆինանսական՝ հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված փոփոխվում են, պետք է՝
 - (i) զեղչվեն՝ օգտագործելով այնպիսի դրույքներ, որոնք արտացոլում են այդ փոփոխությունները, կամ
 - (ii) ճշգրտվեն այդ փոփոխությունների ազդեցությամբ և զեղչվեն այնպիսի դրույքով, որն արտացոլում է կատարված ճշգրտումը.
- գ) անվանական դրամական հոսքերը (այսինքն՝ այն դրամական հոսքերը, որոնք ներառում են ինֆլյացիայի ազդեցությունը) պետք է զեղչվեն այնպիսի դրույքներով, որոնք ներառում են ինֆլյացիայի ազդեցությունը, և

դ) իրական դրամական հոսքերը (այսինքն՝ այն դրամական հոսքերը, որոնք բացառում են ինֆլյացիայի ազդեցությունը) պետք է զեղչվեն այնպիսի դրույքներով, որոնք բացառում են ինֆլյացիայի ազդեցությունը:

Բ75. Բ74(բ) պարագրաֆը պահանջում է, որ դրամական հոսքերը, որոնք հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված փոփոխվում են, պետք է զեղչվեն՝ օգտագործելով այնպիսի դրույքներ, որոնք արտացոլում են այդ փոփոխականությունը, կամ ճշգրտվեն այդ փոփոխականության ազդեցությամբ և զեղչվեն այնպիսի դրույքով, որն արտացոլում է կատարված ճշգրտումը: Փոփոխականությունը տեղին գործոն է անկախ այն հանգամանքից, թե արդյոք այն բխում է պայմանագրի պայմաններից կամ կազմակերպության կողմից հայեցողության կիրառումից և անկախ նրանից, թե տիրապետում է արդյոք կազմակերպությունը հիմքում ընկած հողվածների:

Բ76. Դրամական հոսքերը, որոնք փոփոխվում են՝ փոփոխական հատույցներով հիմքում ընկած հողվածների գծով հատույցներից կախված, որոնց գծով, սակայն, նվազագույն երաշխավորված հատույց է ապահովվում, չեն փոփոխվում միայն հիմքում ընկած հողվածների հատույցներից կախված, նույնիսկ երբ երաշխավորված գումարն ավելի փոքր է, քան հիմքում ընկած հողվածներից ակնկալվող հատույցը: Հետևաբար, կազմակերպությունը պետք է ճշգրտի դրույքը, որն արտացոլում է հիմքում ընկած հողվածների գծով հատույցների փոփոխականությունը այդ երաշխավորության ազդեցությամբ, նույնիսկ երբ երաշխավորված գումարն ավելի փոքր է, քան հիմքում ընկած հողվածներից ակնկալվող հատույցը:

Բ77. ՖՀՄՍ 17-ը կազմակերպությունից չի պահանջում գնահատված դրամական հոսքերը բաժանել այնպիսի դրամական հոսքերի, որոնք փոփոխվում են՝ կախված է հիմքում ընկած հողվածների հատույցներից և որոնք չեն փոփոխվում՝ կախված հիմքում ընկած հողվածների հատույցներից: Եթե կազմակերպությունը գնահատված դրամական հոսքերի նման բաժանում չի իրականացնում, ապա կազմակերպությունը պետք է գնահատված դրամական հոսքերի՝ որպես ամբողջության նկատմամբ կիրառի դրանց համապատասխանող զեղչման դրույքներ. օրինակ՝ օգտագործելով ստոխաստիկ մոդելավորման մեթոդներ կամ ռիսկի նկատմամբ չեզոք գնահատման մեթոդներ:

Բ78. Ջեղչման դրույքները պետք է ներառեն միայն տեղին գործոնները, այսինքն գործոններ, որոնք պայմանավորված են փողի ժամանակային արժեքով, դրամական հոսքերի բնութագրերով և ապահովագրության պայմանագրերի իրացվելիության հատկանիշներով: Նման զեղչման դրույքները հնարավոր է շուկայում ուղղակիորեն դիտելի չլինեն: Հետևաբար, երբ միևնույն հատկանիշներով գործիքի համար դիտելի շուկայական դրույքները հասանելի չեն կամ համանման գործիքների համար դիտելի շուկայական դրույքները հասանելի են, սակայն հնարավոր չէ առանձին նույնականացել այն գործոնները, որոնք գործիքը տարբերակում են ապահովագրության պայմանագրերից, կազմակերպությունը պետք է գնահատի համապատասխան դրույքները: ՖՀՄՍ 17-ը զեղչման դրույքների գնահատման

կոնկրետ մեթոդ չի պահանջում: Գնահատման մեթոդը կիրառելիս, կազմակերպությունը պետք է՝

- ա) առավելարկի դիտելի ելակետային տվյալների օգտագործումը (տես F44 պարագրաֆը) և արտացոլի ոչ շուկայական փոփոխականների վերաբերյալ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի ողջամիտ և հիմնավոր ամբողջ տեղեկատվությունը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին (տես F49 պարագրաֆը): Մասնավորապես, օգտագործվող զեղչման դրույքները չպետք է հակասեն հասանելի ու տեղին որևէ շուկայական տվյալի, իսկ օգտագործվող ոչ շուկայական փոփոխականները չպետք է հակասեն դիտելի շուկայական փոփոխականներին.
- բ) արտացոլի ընթացիկ շուկայական պայմանները շուկայի մասնակցի տեսանկյունից.
- գ) դատողություն կատարի չափման ենթակա ապահովագրության պայմանագրերի հատկանիշների և այն գործիքի հատկանիշների նմանության աստիճանը գնահատելու նպատակով, որի համար դիտելի շուկայական գները հասանելի են և ճշգրտի այդ գները՝ դրանց միջև առկա տարբերություններն արտացոլելու համար:

F79. Ապահովագրության պայմանագրերի գծով այն դրամական հոսքերի համար, որոնք չեն փոփոխվում հիմքում ընկած հողվածների հատույցներից կախված, զեղչման դրույքն արտացոլում է գործիքի՝ համապատասխան արժույթով արտահայտված եկամտաբերության կորը, որը տիրապետողին պարտքային ռիսկի չի ենթարկում կամ դրա գծով պարտքային ռիսկն աննշան է: Եկամտաբերության նշված կորը ճշգրտվում է՝ ապահովագրության պայմանագրերի խմբի իրացվելիության հատկանիշներն արտացոլելու համար: Այդ ճշգրտումը պետք է արտացոլի ապահովագրության պայմանագրերի խմբի իրացվելիության հատկանիշների և եկամտաբերության կորը որոշելիս օգտագործված ակտիվների իրացվելիության հատկանիշների միջև տարբերությունը: Եկամտաբերության կորերն արտացոլում են ակտիվ շուկայում շրջանառվող ակտիվները, որոնք տիրապետողը սովորաբար կարող է ցանկացած պահի հեշտությամբ վաճառել՝ առանց նշանակալի ծախսեր կրելու: Միևնույն ժամանակ, ապահովագրության որոշ պայմանագրերի ներքո կազմակերպությանը չի կարող պարտադրվել վճարումներ կատարել ավելի վաղ, քան ապահովագրական պատահարի տեղի կունենա կամ ավելի վաղ, քան պայմանագրերում սահմանված ժամկետները:

F80. Այսպիսով, ապահովագրության պայմանագրերի գծով այն դրամական հոսքերի համար, որոնք չեն փոփոխվում հիմքում ընկած հողվածների հատույցներից կախված, կազմակերպությունը կարող է զեղչման դրույքները որոշել իրացվելի ոչ ռիսկային եկամտաբերության կորը ճշգրտելով՝ ֆինանսական գործիքների իրացվելիության հատկանիշների, որոնք ընկած են շուկայում դիտելի դրույքների հիմքում և

ապահովագրության պայմանագրերի իրացվելիության հատկանիշների միջև տարբերությունն արտացոլելու համար («ներքնից վերև» մոտեցում):

Բ81. Որպես այլընտրանք, կազմակերպությունը կարող է ապահովագրության պայմանագրերին համապատասխանող գեղջման դրույքները որոշել՝ հիմնվելով եկամտաբերության կորի վրա, որն արտացոլում է ընթացիկ շուկայական հատույցների դրույքները, որոնք ընկած են ակտիվների բազային պորտֆելի իրական արժեքով չափման հիմքում («վերնից ներքև» մոտեցում): Կազմակերպությունը պետք է ճշգրտի այդ եկամտաբերության կորը՝ վերացնելու ապահովագրության պայմանագրերի համար ոչ տեղին ցանկացած գործոն, սակայն չի պահանջվում եկամտաբերության կորը ճշգրտել ապահովագրության պայմանագրերի և բազային պորտֆելի իրացվելիության հատկանիշների միջև տարբերություններով պայմանավորված:

Բ82. Բ81 պարագրաֆում նկարագրված եկամտաբերության կորը գնահատելիս՝

ա) եթե ակտիվ շուկաներում բազային պորտֆելի ակտիվների համար առկա են դիտելի շուկայական գներ, կազմակերպությունը պետք է օգտագործի այդ գները (ՖՀՄՍ 13-ի 69-րդ պարագրաֆին համապատասխան),

բ) եթե շուկան ակտիվ չէ, կազմակերպությունը պետք է ճշգրտի համանման ակտիվների դիտելի շուկայական գները՝ դրանք համադրելի դարձնելու չափման ենթակա ակտիվների շուկայական գներին (ՖՀՄՍ 13-ի 83-րդ պարագրաֆին համապատասխան),

գ) եթե բազային պորտֆելի ակտիվներ համար շուկա չկա, կազմակերպությունը պետք է կիրառի գնահատման մեթոդ: Նման ակտիվների համար (ՖՀՄՍ 13-ի 89-րդ պարագրաֆին համապատասխան) կազմակերպությունը պետք է՝

(i) մշակի ոչ դիտելի ելակետային տվյալներ՝ օգտագործելով տվյալ հանգամանքներում հասանելի լավագույն տեղեկատվությունը: Այսպիսի ելակետային տվյալները կարող են ներառել կազմակերպության սեփական տվյալները և, ՖՀՄՍ 17-ի համատեքստում, կազմակերպությունը կարող է ավելի շատ հիմնվել երկարաժամկետ գնահատումների, քան կարճաժամկետ տատանումների վրա, և

(ii) ճշգրտի այդ տվյալները՝ արտացոլելու շուկայի մասնակիցների ենթադրությունների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, որը ողջամտորեն հասանելի է:

Բ83. Եկամտաբերության կորը ճշգրտելիս՝ կազմակերպությունը պետք է ճշգրտի շուկայական դրույքները, որոնք դիտվել են համանման բնութագրեր ունեցող գործիքներով վերջերս կատարված գործարքներում՝ պայմանավորված գործարքի ամսաթվից սկսած շուկայական գործոնների փոփոխություններով և պետք է ճշգրտի դիտելի շուկայական դրույքները՝ արտացոլելու տարբերությունների աստիճանը չափման ենթակա գործիքների և այն գործիքների միջև, որոնց գործարքների գները դիտելի են: Ապահովագրության պայմանագրերի գծով այն դրամական հոսքերի

համար, որոնք չեն փոփոխվում բազային պորտֆելի ակտիվների հատույցներից կախված, նման ճշգրտումները ներառում են՝

- ա) պորտֆելի ակտիվների գծով դրամական հոսքերի մեծության, ժամկետների ու անորոշությունների և ապահովագրության պայմանագրերի գծով դրամական հոսքերի մեծության, ժամկետների ու անորոշությունների միջև տարբերությունների գծով ճշգրտումները, և
- բ) պարտքային ռիսկի գծով շուկայական ռիսկի դիմաց վճարի բացառումը, որը տեղին է միայն բազային պորտֆելում ներառված ակտիվների համար:

Բ84. Սկզբունքորեն, ապահովագրության պայմանագրերի գծով այն դրամական հոսքերի համար, որոնք բազային պորտֆելի ակտիվների հատույցներից կախված չեն փոփոխվում, պետք է լինի միասնական ոչ իրացվելի ոչ ռիսկային եկամտաբերության կոր, որը վերացնում է դրամական հոսքերի մեծության ու ժամկետների վերաբերյալ բոլոր անորոշությունները: Այնուամենայնիվ, գործնականում «վերևից ներքև» մոտեցման և «ներքևից վերև» մոտեցման կիրառումը կարող է հանգեցնել եկամտաբերության տարբեր կորերի, նույնիսկ միևնույն արժույթի դեպքում: Դա պայմանավորված է յուրաքանչյուր մոտեցման ներքո կատարված ճշգրտումների գնահատումներին ներհատուկ սահմանափակումներով, և «վերևից ներքև» մոտեցման դեպքում իրացվելիության տարբեր հատկանիշների գծով ճշգրտման հնարավոր բացակայությամբ: Կազմակերպությունը պարտավոր չէ համադրել իր կողմից ընտրված մոտեցմամբ որոշված զեղչման դրույքը այն զեղչման դրույքի հետ, որը որոշված կլինեք մյուս մոտեցմամբ:

Բ85. Բ81 պարագրաֆը կիրառելու ժամանակ օգտագործված ակտիվների բազային պորտֆելի նկատմամբ ՖՀՄՄ 17-ը սահմանափակումներ չի սահմանում: Այնուամենայնիվ, երբ ակտիվների բազային պորտֆելն ունի ապահովագրության պայմանագրերին համանման բնութագրեր, ապահովագրության պայմանագրերի համար ոչ տեղին գործոնները վերացնելու համար փոքրաթիվ ճշգրտումներ կատարելու անհրաժեշտություն կլինի: Օրինակ, եթե ապահովագրության պայմանագրերի գծով դրամական հոսքերը կախված չեն հիմքում ընկած հոդվածների հատույցներից, փոքրաթիվ ճշգրտումների անհրաժեշտություն կլինի, եթե կազմակերպությունը որպես մեկնարկային կետ օգտագործել է պարտքային գործիքներ, այլ ոչ թե բաժնային գործիքներ: Պարտքային գործիքների դեպքում նպատակը կլինի պարտատոմսի ընդհանուր եկամտաբերությունից պարտքային ռիսկի և այլ գործոնների ազդեցության բացառումը, որոնք ապահովագրության պայմանագրերի համար ոչ տեղին են: Պարտքային ռիսկի ազդեցության գնահատման եղանակներից մեկն էլ պարտքային ածանցյալ գործիքների շուկայական գինը որպես ուղենիշ օգտագործելն է:

Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում (պարագրաֆ 37)

Բ86. Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումն առնչվում է այն ռիսկին, որն առաջանում է ապահովագրության պայմանագրերից և չի հանդիսանում ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը ներառվում է ապագա դրամական հոսքերի գնահատումներում կամ դրամական հոսքերը ճշգրտելու համար օգտագործվող գեղջման դրույքում: Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտմամբ ծածկվում են ապահովագրական ռիսկն ու այլ ոչ ֆինանսական ռիսկերը, ինչպիսիք են պայմանագրի չեղարկման ռիսկը և ծախսային ռիսկը (տես պարագրաֆ Բ14):

Բ87. Ապահովագրության պայմանագրերի համար ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը ցույց է տալիս այն փոխհատուցման չափը, որը կազմակերպությունը կպահանջի հետևյալների միջև ընտրություն կատարելիս անտարբեր լինելու համար՝

ա) պարտավորության կատարում, որը ենթադրում է ոչ ֆինանսական ռիսկով պայմանավորված հնարավոր արդյունքների միջակայք, և

բ) պարտավորության կատարում, որը կառաջացնի այնպիսի հաստատուն դրամական հոսքեր, որոնց ակնկալվող ներկա արժեքը նույնն է, ինչ ապահովագրության պայմանագրերի դեպքում:

Օրինակ՝ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը ցույց կտա այն փոխհատուցման չափը, որը կպահանջի կազմակերպությունը իր համար հավասարաչափ նախընտրելի դարձնելու 50 տոկոս հավանականությամբ 90 ԱՄ և 50 տոկոս հավանականությամբ 110 ԱՄ արժեքով (ոչ ֆինանսական ռիսկով պայմանավորված) պարտավորության կատարման և 100 ԱՄ հաստատուն արժեքով պարտավորության կատարման միջև ընտրությունը: Այսպիսով, ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին տեղեկատվություն է տրամադրում՝ դրամական հոսքերի մեծության և ժամկետների գծով, ոչ ֆինանսական ռիսկով պայմանավորված, անորոշությունների համար կազմակերպության կողմից գանձված գումարի վերաբերյալ:

Բ88. Քանի որ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը արտացոլում է այն փոխհատուցումը, որը կազմակերպությունը կպահանջի դրամական հոսքերի մեծության և ժամկետների անորոշություններով պայմանավորված ոչ ֆինանսական ռիսկը կրելու համար, ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումն արտացոլում է նաև՝

ա) դիվերսիֆիկացումից օգուտների մակարդակը, որոնք կազմակերպությունը հաշվի է առնում այդ ռիսկը կրելու համար պահանջվող փոխհատուցումը որոշելիս, և

բ) բարենպաստ և ոչ բարենպաստ արդյունքները, այնպես, որ արտացոլվի կազմակերպության ռիսկից խուսափելու աստիճանը:

Բ89. Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման նպատակը ապահովագրության պայմանագրերից առաջացող դրամական հոսքերում անորոշությունների ազդեցությունը գնահատելն է, որոնք տարբերվում են ֆինանսական ռիսկով պայմանավորված անորոշություններից: Հետևաբար, ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը պետք է արտացոլի բոլոր ոչ ֆինանսական ռիսկերը, որոնք կապված են ապահովագրության պայմանագրերի հետ: Այն չպետք է արտացոլի ռիսկերը, որոնք չեն առաջանում ապահովագրության պայմանագրերից, ինչպիսին է ընդհանուր գործառնական ռիսկը:

Բ90. Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը չափման մեջ պետք է ներառվի բացահայտ կերպով: Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը ապագա դրամական հոսքերի և այդ դրամական հոսքերը ճշգրտող զեղչման դրույքների գնահատումներից սկզբունքորեն առանձին է իրականացվում: Կազմակերպությունը չպետք է ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման կրկնահաշվարկ թույլ տա, օրինակ, երբ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը անուղղակիորեն ներառվում է ապագա դրամական հոսքերի կամ զեղչման դրույքների գնահատումների հաշվարկում: Ձեղչման դրույքները, որոնք բացահայտվում են 120-րդ պարագրաֆին համապատասխան, չպետք է ներառեն ոչ ֆինանսական ռիսկի գծով որևէ ենթադրյալ ճշգրտում:

Բ91. ՖՀՄՍ 17-ը չի սահմանում գնահատման մեթոդ (մեթոդներ), որոնք օգտագործվում են ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը որոշելու համար: Այնուամենայնիվ, կազմակերպության կողմից ոչ ֆինանսական ռիսկը կրելու համար պահանջվող փոխհատուցումն արտացոլելու համար ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը պետք է ունենա հետևյալ բնութագրերը՝

- ա) տեղի ունենալու ցածր հաճախականությամբ և առավել ծանր ռիսկերը կհանգեցնեն ոչ ֆինանսական ռիսկի գծով ավելի բարձր ռիսկի ճշգրտումների, քան բարձր հաճախականությամբ և պակաս ծանր ռիսկերի դեպքում,
- բ) համանման ռիսկերի համար երկարաժամկետ պայմանագրերը կհանգեցնեն ոչ ֆինանսական ռիսկի գծով ավելի բարձր ռիսկի ճշգրտումների, քան կարճաժամկետ պայմանագրերի դեպքում,
- գ) ավելի լայն հավանականությունների բաշխման հորիզոն ունեցող ռիսկերը կհանգեցնեն ոչ ֆինանսական ռիսկի գծով ավելի բարձր ռիսկի ճշգրտումների, քան ավելի նեղ բաշխման դեպքում,
- դ) որքան քիչ տեղեկատվություն է հայտնի ընթացիկ գնահատումների և դրանց միտումների վերաբերյալ, այնքան ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումներն ավելի բարձր կլինեն, և
- ե) այն չափով, որքանով նոր փորձը նվազեցնում է դրամական հոսքերի մեծության և ժամկետների վերաբերյալ անորոշությունները, ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը կնվազի և հակառակը:

Բ92. Կազմակերպությունը պետք է դատողություն կատարի ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման համար համապատասխան գնահատման մեթոդ որոշելիս: Այդ դատողությունները կատարելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի նաև՝ արդյոք այդ մեթոդը հակիրճ և բովանդակային բացահայտում է տրամադրում այնպես, որ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները հնարավորություն ունենան կազմակերպության գործունեության արդյունքները համեմատել այլ կազմակերպությունների գործունեության արդյունքների հետ: 119-րդ պարագրաֆը կազմակերպությունից պահանջում է՝ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը որոշելիս վստահելիության մակարդակի վրա հիմնված մեթոդից տարբերվող այլ մեթոդ օգտագործելու դեպքում բացահայտել օգտագործված մեթոդն ու այդ մեթոդի արդյունքներին համապատասխանող վստահելիության մակարդակը:

Ապահովագրության պայմանագրերի փոխանցումների և բիզնեսի միավորումների սկզբնական ճանաչումը (պարագրաֆ 39)

Բ93. Երբ կազմակերպությունը թողարկված ապահովագրության պայմանագիր կամ պահվող վերաապահովագրության պայմանագիր է ձեռք բերում ապահովագրության պայմանագրերի փոխանցման գործարքի արդյունքում, որը չի հանդիսանում բիզնես, կամ բիզնեսի միավորման արդյունքում, ապա կազմակերպությունը պետք է կիրառի 14-24-րդ պարագրաֆները՝ ձեռք բերված պայմանագրերի խումբը նույնականացնելու համար, կարծես թե այդ պայմանագրերը կնքել է տվյալ գործարքի ամսաթվին:

Բ94. Կազմակերպությունը պայմանագրերի համար ստացված կամ վճարված հատուցումը պետք է օգտագործի որպես ապահովագրության վճարների մոտավոր արժեք: Պայմանագրերի համար ստացված կամ վճարված հատուցումը բացառում է միևնույն գործարքի շրջանակներում ձեռքբերված այլ ակտիվների կամ պարտավորությունների գծով ստացված կամ վճարված հատուցումը: Բիզնեսի միավորման դեպքում ստացված կամ վճարված հատուցումը այդ ամսաթվի դրությամբ պայմանագրերի իրական արժեքն է: Նշված իրական արժեքը որոշելիս կազմակերպությունը չպետք է կիրառի ՖՀՄՍ 13-ի 47-րդ պարագրաֆը (կապված ցպահանջ հատկանիշի հետ):

Բ95. Բացառությամբ այն դեպքերի, երբ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության նկատմամբ 55-59-րդ պարագրաֆների համաձայն կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, սկզբնական ճանաչման պահին թողարկված ապահովագրության պայմանագրերի ձեռք բերման դեպքում պայմանագրային ծառայությունների մարժան հաշվարկվում է 38-րդ պարագրաֆին համապատասխան, իսկ պահվող վերաապահովագրության պայմանագրերի ձեռքբերման դեպքում՝ 65-րդ պարագրաֆին համապատասխան՝ պայմանագրերի համար ստացված կամ վճարված հատուցումն օգտագործելով որպես սկզբնական ճանաչման պահին ստացված կամ վճարված ապահովագրության վճարների մոտավոր արժեք: Եթե թողարկված ապահովագրության պայմանագրերը, որոնք ձեռք են բերվել, 47-րդ պարագրաֆի համաձայն հանդիսանում են անբարենպաստ, կազմակերպությունը պետք է ստացված

կամ վճարված հատուցման նկատմամբ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի գերազանցումը ճանաչի որպես գուղվիլի մաս կամ զեղչով ձեռքբերումից օգուտ՝ բիզնեսի միավորման գործարքի շրջանակներում ձեռքբերված պայմանագրերի համար կամ որպես վնաս՝ շահույթում կամ վնասում՝ փոխանցման գործարքի շրջանակներում ձեռքբերված պայմանագրերի համար: Կազմակերպությունն այդ գերազանցման մասով պետք է ձևավորի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ և 49-52-րդ պարագրաֆները կիրառելով՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում հետագա փոփոխությունները բաշխի այդ վնասի բաղադրիչին:

Փոփոխություններ առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքում (պարագրաֆ 44)

Բ96. Առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի համար 44(գ) պարագրաֆը պահանջում է՝ պայմանագրի կատարման գծով ապագա ծառայություններին առնչվող դրամական հոսքերում փոփոխությունների հետ կապված ճշգրտել ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժան: Այդ փոփոխությունները բաղկացած են հետևյալներից՝

- ա) փորձի վրա հիմնված ճշգրտումներ, որոնք առաջանում են ժամանակաշրջանի ընթացքում ստացված և ապագա ծառայություններին վերաբերող ապահովագրության վճարներից, ինչպես նաև դրանց առնչվող դրամական հոսքերից, ինչպիսիք են ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերն ու ապահովագրական վճարի գծով հարկերը, որոնք չափվում են Բ72(գ) պարագրաֆում նշված զեղչման դրույքներով,
- բ) փոփոխություններ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներում, բացառությամբ Բ97(ա) պարագրաֆում նկարագրվածների, որոնք չափվում են Բ72(գ) պարագրաֆում նշված զեղչման դրույքներով,
- գ) տարբերություններ ժամանակաշրջանի ընթացքում վճարման ենթակա ներդրումային բաղադրիչի ակնկալվող և փաստացի մեծությունների միջև, որոնք չափվում են Բ72(գ) պարագրաֆում նշված զեղչման դրույքներով, և
- դ) փոփոխություններ ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումներում, որոնք վերաբերում են ապագա ծառայություններին:

Բ97. Կազմակերպությունը չպետք է ճշգրտի առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժան՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում

հետևյալ փոփոխությունների հետ կապված, քանի որ դրանք չեն վերաբերում ապագա ծառայություններին՝

- ա) փողի ժամանակային արժեքի ու փողի ժամանակային արժեքի փոփոխության ազդեցություն, ինչպես նաև ֆինանսական ռիսկի ու ֆինանսական ռիսկի փոփոխության ազդեցություն (այսինքն՝ ազդեցություն, եթե առկա է, գնահատված ապագա դրամական հոսքերի վրա և ազդեցություն զեղչման դրույքների փոփոխությունից),
- բ) փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի գնահատումներում, որոնք ներառված են կրած պահանջների գծով պարտավորությունում, և
- գ) փորձի վրա հիմնված ճշգրտումներ, բացառությամբ Բ96(ա) պարագրաֆում նկարագրվածների:

Բ98. Առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության որոշ պայմանագրերի պայմաններ ապահովադիրներին վճարվելիք դրամական հոսքերի հետ կապված կազմակերպությանը գործողությունների հայեցողություն են տրամադրում: Հայեցողական դրամական հոսքերում փոփոխությունը դիտարկվում է որպես ապագա ծառայություններին վերաբերվող, և հետևաբար ճշգրտում է պայմանագրային ծառայությունների մարժան: Որոշելու համար, թե ինչպես նույնականացնել հայեցողական դրամական հոսքերում փոփոխությունը, կազմակերպությունը պայմանագրի գործողության սկզբում պետք է սահմանի այն հիմունքը, որի վրա հիմնվելով նախատեսում է որոշել պայմանագրի գծով իր հանձնառությունը, օրինակ՝ հիմք ընդունելով հաստատուն տոկոսադրույքը կամ հատույցները, որոնք փոփոխվում են կոնկրետ ակտիվների հատույցներից կախված:

Բ99. Կազմակերպությունը պետք է օգտագործի այդ հիմունքը՝ տվյալ հանձնառության գծով ֆինանսական ռիսկի հետ կապված գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը (որոնք չեն ճշգրտում պայմանագրային ծառայությունների մարժան) տարանջատելու տվյալ հանձնառության գծով հայեցողական փոփոխությունների ազդեցությունից (որոնք ճշգրտում են պայմանագրային ծառայությունների մարժան):

Բ100. Եթե կազմակերպությունը պայմանագրի գործողության սկզբում չի կարողանում սահմանել, թե ինչն է դիտարկում որպես պայմանագրի գծով իր հանձնառություն, և ինչը որպես հայեցողություն, նա պետք է որպես իր հանձնառություն դիտարկի պայմանագրի գործողության սկզբում պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի գնահատումների հիմքում դրված հատույցը, որը թարմացվում է՝ ֆինանսական ռիսկին առնչվող ընթացիկ ենթադրություններն արտացոլելու համար:

Փոփոխություններ ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքում (պարագրաֆ 45)

Բ101. Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերը այնպիսի ապահովագրության պայմանագրեր են, որոնք իրենց էությամբ հանդիսանում են ներդրումային ուղղվածությամբ ծառայությունների պայմանագրեր, որոնց ներքո կազմակերպությունը խոստանում է ներդրումային հատույց՝ հիմքում ընկած հոդվածների գծով: Այսպիսով, դրանք սահմանվում են որպես ապահովագրության պայմանագրեր, որոնց համար՝

- ա) պայմանագրի պայմանները սահմանում են, որ ապահովադիրը մասնաբաժին ունի հիմքում ընկած հոդվածների՝ հստակ նույնականացված համախմբում (տես պարագրաֆներ Բ105-Բ106),
- բ) կազմակերպությունն ակնկալում է ապահովադիրին վճարել գումար, որը հավասար է հիմքում ընկած հոդվածների իրական արժեքի գծով հատույցի նշանակալի մասնաբաժնին (տես պարագրաֆ Բ107), և
- գ) կազմակերպությունն ակնկալում է, որ ապահովադիրին վճարվելիք գումարի ցանկացած փոփոխության նշանակալի մասնաբաժինը հիմքում ընկած հոդվածների իրական արժեքի փոփոխությունից կախված փոխվելու է (տես պարագրաֆ Բ107):

Բ102. Կազմակերպությունը պետք է գնահատի՝ արդյոք Բ101 պարագրաֆի պայմանները բավարարվում են՝ օգտագործելով պայմանագրի գործողության սկզբի դրությամբ իր ակնկալիքները և չպետք է հետազայում վերանայի այդ պայմանները, բացառությամբ, երբ պայմանագիրը վերափոխվել է 72-րդ պարագրաֆի համաձայն:

Բ103. Այն դեպքում, երբ խմբի ապահովագրության պայմանագրերը ազդեցություն են ունենում այլ խմբերի պայմանագրերի գծով ապահովադիրների օգտին դրամական հոսքերի վրա (տես պարագրաֆներ Բ67-Բ71), կազմակերպությունը պետք է գնահատի՝ արդյոք Բ101 պարագրաֆի պայմանները բավարարվում են՝ հաշվի առնելով Բ68-Բ70 պարագրաֆների համաձայն որոշված դրամական հոսքերը, որոնք կազմակերպությունն ակնկալում է վճարել ապահովադիրներին:

Բ104. Բ101 պարագրաֆի պայմանները հաստատում են, որ ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերը այնպիսի պայմանագրեր են, որոնց ներքո ապահովադիրն նկատմամբ կազմակերպության պարտականությունն իրենից ներկայացնում է հետևյալների գուտ արդյունքը՝

- ա) ապահովադիրին հիմքում ընկած հոդվածների իրական արժեքին հավասար գումար վճարելու պարտականություն, և

բ) փոփոխական վճար (տես Բ110-Բ118 պարագրաֆները), որը կազմակերպությունը նվազեցնելու է «ա» կետից՝ ապահովագրության պայմանագրի ներքո մատուցվելիք ապագա ծառայության դիմաց, կազմված՝

(i) հիմքում ընկած հողվածների իրական արժեքում կազմակերպության բաժնեմասից, հանած

(ii) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը, որոնք հիմքում ընկած հողվածների հատույցներից կախված չեն փոփոխվում:

Բ105. Բ101(ա) պարագրաֆում նշված մասնաբաժինը չի բացառում ապահովադրին վճարվող գումարներն ըստ հայեցողության փոփոխելու կազմակերպության իրավունքի առկայությունը: Այնուամենայնիվ, հիմքում ընկած հողվածների հետ կապը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի (տես 2-րդ պարագրաֆը):

Բ106. Բ101(ա) պարագրաֆում նշված՝ հիմքում ընկած հողվածների համախումբը կարող է կազմված լինել ցանկացած հողվածներից, օրինակ՝ ակտիվների բազային պորտֆել, կազմակերպության զուտ ակտիվներ կամ կազմակերպության զուտ ակտիվների սահմանված ենթախումբ, պայմանով, որ դրանք պայմանագրով հստակ նույնականացված են: Կազմակերպությունը պարտավոր չէ տիրապետել հիմքում ընկած հողվածների նույնականացված համախումբի: Այնուամենայնիվ, հիմքում ընկած հողվածների՝ հստակ նույնականացված համախումբ գոյություն չունի, երբ՝

ա) կազմակերպությունը կարող է հետընթաց եղանակով փոփոխել հիմքում ընկած հողվածները, որոնք որոշում են կազմակերպության պարտականության մեծությունը, կամ

բ) հիմքում ընկած նույնականացված հողվածներ չկան, նույնիսկ եթե ապահովադրին կարող է տրամադրվել հատույց, որն ընդհանուր առմամբ արտացոլում է կազմակերպության գործունեության ընդհանուր արդյունքներն ու ակնկալիքները կամ կազմակերպության կողմից տիրապետվող ակտիվների սահմանված ենթախումբի գծով գործունեության արդյունքներն ու ակնկալիքները: Այսպիսի հատույցի օրինակ են հաշվեգրման դրույքը կամ շահաբաժնի վճարումը՝ սահմանված այն ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որին դրանք վերաբերում են: Այս դեպքում, ապահովադրի նկատմամբ պարտականությունն արտացոլում է կազմակերպության կողմից սահմանված՝ հաշվեգրման դրույքը կամ շահաբաժնի գումարները, և չի արտացոլում հիմքում ընկած նույնականացված հողվածները:

Բ107. Բ101(բ) պարագրաֆի համաձայն կազմակերպությունը պետք է ակնկալի հիմքում ընկած հողվածների իրական արժեքի գծով հատույցների նշանակալի մասնաբաժին, որը կվճարվի ապահովադրին, իսկ Բ101(գ) պարագրաֆի համաձայն կազմակերպությունը պետք է ակնկալի, որ ապահովադրին վճարվելիք գումարի ցանկացած փոփոխության նշանակալի մասնաբաժինը հիմքում ընկած հողվածների

իրական արժեքի փոփոխությունից կախված փոխվելու է: Կազմակերպությունը պետք է՝

- ա) երկու պարագրաֆների «նշանակալի» տերմինը մեկնաբանի ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի նպատակի համատեքստում, ըստ որի, դրանք ապահովագրության պայմանագրեր են, որոնց ներքո կազմակերպությունը մատուցում է ներդրումային ուղղվածությամբ ծառայություններ և այդ ծառայությունների դիմաց փոխհատուցվում է վճարով, որը որոշվում է հիմնվելով հիմքում ընկած հողվածների վրա, և
- բ) գնահատի Բ101(բ) և Բ101(գ) պարագրաֆներում նշված գումարների փոփոխականությունը՝
 - (i) ապահովագրության պայմանագրերի խմբի գործողության ժամկետի ընթացքում, և
 - (ii) ներկա արժեքի հավանականություններով կշռված միջինի հիմունքով, ոչ թե լավագույն կամ վատագույն արդյունքի հիմունքով (տես պարագրաֆներ Բ37-Բ38):

Բ108. Օրինակ, եթե կազմակերպությունն ակնկալում է որպես նվազագույն հատույցի երաշխավորություն վճարել հիմքում ընկած հողվածների իրական արժեքի գծով հատույցի նշանակալի մասնաբաժինը, ապա կլինեն հետևյալ սցենարները, որոնցում՝

- ա) դրամական հոսքերը, որոնք կազմակերպությունն ակնկալում է վճարել ապահովադրին, փոփոխվում են հիմքում ընկած հողվածների իրական արժեքի փոփոխության հետ, քանի որ երաշխավորված հատույցը կամ այլ դրամական հոսքերը, որոնք չեն փոփոխվում հիմքում ընկած հողվածների գծով հատույցից կախված, չեն գերազանցում հիմքում ընկած հողվածների իրական արժեքի գծով հատույցը, և
- բ) դրամական հոսքերը, որոնք կազմակերպությունն ակնկալում է վճարել ապահովադրին, չեն փոփոխվում հիմքում ընկած հողվածների իրական արժեքի փոփոխության հետ, քանի որ երաշխավորված հատույցը կամ այլ դրամական հոսքերը, որոնք չեն փոփոխվում հիմքում ընկած հողվածների գծով հատույցից կախված, գերազանցում են հիմքում ընկած հողվածների իրական արժեքի գծով հատույցը:

Այս օրինակի համար Բ101(գ) պարագրաֆում նշված փոփոխականության կազմակերպության գնահատումը կարտացոլի նշված բոլոր սցենարների ներկա արժեքի հավանականությունով կշռված միջինը:

Բ109. Թողարկված վերաապահովագրության պայմանագրերը և պահվող վերաապահովագրության պայմանագրերը չեն կարող ՖՀՄՍ 17-ի կիրառման

իմաստով հանդիսանալ ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր:

- Բ110. Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի դեպքում պայմանագրային ծառայությունների մարժան ճշգրտվում է վճարի փոփոխական բնույթն արտացոլելու համար: Այսպիսով, Բ104 պարագրաֆում սահմանված գումարների փոփոխությունները հաշվառվում են Բ111-Բ114 պարագրաֆների համաձայն:
- Բ111. Ապահովադրին հիմքում ընկած հողվածների իրական արժեքին հավասար գումար վճարելու պարտականությունում փոփոխությունները (պարագրաֆ Բ104(ա)) չեն առնչվում ապագա ծառայություններին և չպետք է ճշգրտեն պայմանագրային ծառայությունների մարժան:
- Բ112. Հիմքում ընկած հողվածների իրական արժեքում կազմակերպության բաժնեմասում փոփոխություններն (պարագրաֆ Բ104(բ)(i)) առնչվում են ապագա ծառայություններին և պետք է ճշգրտեն պայմանագրային ծառայությունների մարժան՝ 45(բ) պարագրաֆի համաձայն:
- Բ113. Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխությունները, որոնք չեն փոփոխվում հիմքում ընկած հողվածների հատույցներից կախված (պարագրաֆ Բ104(բ)(ii)), բաղկացած են՝
- ա) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում փոփոխություններից, բացառությամբ «բ» կետում նշվածների: Առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի հետ կապված կազմակերպությունը պետք է կիրառի Բ96-Բ97 պարագրաֆները, որոշելու, թե ինչ չափով են դրանք առնչվում ապագա ծառայություններին և, 45(գ) պարագրաֆի համաձայն ճշգրտի պայմանագրային ծառայությունների մարժան: Բոլոր ճշգրտումները չափվում են՝ օգտագործելով ընթացիկ զեղչման դրույքները:
 - բ) փոփոխություն փողի ժամանակային արժեքի և հիմքում ընկած հողվածներին չվերաբերվող ֆինանսական ռիսկի ազդեցություններում, օրինակ՝ ֆինանսական երաշխավորությունների ազդեցությունը: Նշվածներն առնչվում են ապագա ծառայություններին և, 45(գ) պարագրաֆի համաձայն ճշգրտում են պայմանագրային ծառայությունների մարժան, բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում է Բ115 պարագրաֆը:
- Բ114. Կազմակերպությունը պարտավոր չէ առանձին նույնականացնել Բ112 և Բ113 պարագրաֆների համաձայն պայմանագրային ծառայությունների մարժայում կատարված ճշգրտումները: Փոխարենը, բոլոր կամ որոշ ճշգրտումների գծով կարող է որոշվել ընդհանուր գումար:

Ռիսկի նվազեցում

Բ115. Այն դեպքերում, երբ կազմակերպությունը բավարարում է Բ116 պարագրաֆի պայմաններին, նա կարող է որոշում կայացնել չճանաչել պայմանագրային ծառայությունների մարժայում փոփոխությունը, որպեսզի արտացոլի ֆինանսական ռիսկի ազդեցության որոշ կամ բոլոր փոփոխությունները հիմքում ընկած հոդվածներում կազմակերպության մասնաբաժնի (տես պարագրաֆ Բ112) կամ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի վրա՝ Բ113(բ) պարագրաֆի համաձայն:

Բ116. Բ115 պարագրաֆը կիրառելու համար կազմակերպությունը պետք է ունենա նախկինում փաստաթղթավորված ռիսկերի կառավարման նպատակ և ածանցյալ գործիքների օգտագործման ռազմավարություն՝ ապահովագրության պայմանագրերից առաջացող ֆինանսական ռիսկը նվազեցնելու համար և այդ նպատակի ու ռազմավարության կիրառմամբ՝

ա) կազմակերպությունն օգտագործում է ածանցյալ գործիքը ապահովագրության պայմանագրերից առաջացող ֆինանսական ռիսկը նվազեցնելու համար,

բ) ապահովագրության պայմանագրերի և տվյալ ածանցյալ գործիքի միջև առկա է տնտեսական փոխհատուցման ազդեցություն, այսինքն՝ ապահովագրության պայմանագրերի և ածանցյալ գործիքի արժեքները որպես կանոն փոխվում են հակառակ ուղղությամբ, քանի որ դրանք միանման են արձագանքում այն ռիսկի փոփոխություններին, որը ենթակա է նվազեցման: Կազմակերպությունը տնտեսական փոխհատուցման ազդեցությունը գնահատելիս չպետք է հաշվի առնի հաշվապահական նպատակով չափման մոտեցումներում տարբերությունները:

գ) պարտքային ռիսկը չի գերակայում տնտեսական փոխհատուցման ազդեցության նկատմամբ:

Բ117. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունը հետևողական կերպով պետք է որոշի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը խմբում ներառված պայմանագրերի համար, որի նկատմամբ կիրառվում է Բ115 պարագրաֆը:

Բ118. Եթե Բ116 պարագրաֆի պայմաններից որևէ մեկը դադարում է բավարարվել, կազմակերպությունը պետք է՝

ա) այդ ամսաթվից սկսած դադարեցնի Բ115 պարագրաֆի կիրառումը, և

բ) որևէ ճշգրտում չկատարի նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված փոփոխությունների գծով:

Պայմանագրային ծառայությունների մարժայի ճանաչումը շահույթում կամ վնասում

Բ119. Ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի գումարը ճանաչվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի շահույթում կամ

վնասում՝ արտացոլելու տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրության պայմանագրերի խմբի ներքո մատուցված ծառայությունները (տես 44(ե), 45(ե) և 66(ե) պարագրաֆները): Այդ գումարը որոշվում է հետևյալ կերպ՝

- ա) նույնականացնելով խմբում ծածկույթի միավորները: Խմբում ծածկույթի միավորների թիվը խմբի պայմանագրերի ներքո տրամադրված ծածկույթների քանակն է, որը որոշվում է ըստ յուրաքանչյուր պայմանագրի՝ հաշվի առնելով դրա գծով տրամադրված հատուցումների քանակն և ծածկույթի ակնկալվող տևողությունը.
- բ) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պայմանագրային ծառայությունների մարժան (նախքան որևէ գումար շահույթում կամ վնասում ճանաչելը՝ արտացոլելու ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայությունները) հավասարապես բաշխելով ընթացիկ ժամանակաշրջանում տրամադրված և ապագայում տրամադրվելիք յուրաքանչյուր ծածկույթի միավորի վրա.
- գ) ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված ծածկույթի միավորներին բաշխված գումարը ճանաչելով շահույթում կամ վնասում:

Ապահովագրական հասույթ (պարագրաֆներ 83 և 85)

Բ120. Ապահովագրության պայմանագրերի խմբի ընդհանուր ապահովագրական հասույթը պայմանագրերի գծով հատուցումն է, այսինքն՝ կազմակերպությանը վճարված ապահովագրական վճարների գումարը՝

- ա) ճշգրտված ֆինանսավորման ազդեցությամբ, և
- բ) բացառելով ցանկացած ներդրումային բաղադրիչ:

Բ121. 83-րդ պարագրաֆը պահանջում է, որ հաշվետու ժամանակաշրջանում ճանաչված ապահովագրական հասույթի գումարը ներկայացնի խոստացված ծառայությունների փոխանցումն այն գումարով, որն արտացոլում է հատուցումը, որի նկատմամբ իրավունքը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ծառայությունների դիմաց: Պայմանագրերի խմբի գծով ընդհանուր հատուցումը ներառում է հետևյալ գումարները՝

- ա) ծառայությունների մատուցման հետ կապված գումարները, բաղկացած հետևյալներից՝
 - (i) ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր՝ բացառելով մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին բաշխված ցանկացած գումար,
 - (ii) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում՝ բացառելով մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին բաշխված ցանկացած գումար,

(iii) պայմանագրային ծառայությունների մարժա.

բ) ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերին վերաբերող գումարներ:

Բ122. Ժամանակաշրջանի ապահովագրական հասույթը, որն առնչվում է Բ121(ա) պարագրաֆում նկարագրված գումարներին, որոշվում է Բ123-Բ124 պարագրաֆներով սահմանված կարգով: Ժամանակաշրջանի ապահովագրական հասույթը, որն առնչվում է Բ121(բ) պարագրաֆում նկարագրված գումարներին, որոշվում է Բ125 պարագրաֆով սահմանված կարգով:

Բ123. ՖՀՄՍ 15-ի համաձայն, երբ կազմակերպությունը ծառայություններ է մատուցում, նա ապաճանաչում է այդ ծառայությունների գծով կատարման պարտականությունը և ճանաչում է հասույթ: Հետևաբար, ՖՀՄՍ 17-ը կիրառելիս, երբ կազմակերպությունը ժամանակաշրջանի ընթացքում ծառայություններ է մատուցում, նա մատուցված ծառայությունների չափով նվազեցնում է մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը և ճանաչում է ապահովագրական հասույթ: Մնացորդային ծածկույթի գծով պարտավորության նվազեցումը, որը հանգեցնում է ապահովագրական հասույթի առաջացման, բացառում է պարտավորության այն փոփոխությունները, որոնք կապված չեն ծառայությունների հետ, որոնք ակնկալվում է, որ կծածկվեն կազմակերպության ստացած հատուցմամբ: Այդ փոփոխություններն են՝

ա) փոփոխություններ, որոնք կապված չեն ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայությունների հետ, օրինակ՝

(i) փոփոխություններ՝ ստացված ապահովագրական վճարների գծով դրամական ներհոսքերի արդյունքում,

(ii) փոփոխություններ, որոնք առնչվում են ժամանակաշրջանի ներդրումային բաղադրիչներին,

(iii) փոփոխություններ, որոնք առնչվում են գործարքի հետ կապված հարկերին՝ հավաքագրված երրորդ անձանց անունից (ինչպիսիք են ապահովագրական վճարի հարկը, ավելացված արժեքի հարկը և ապրանքների ու ծառայությունների հարկերը) (տես Բ65(թ) պարագրաֆը),

(iv) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր,

(v) ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր (տես Բ125 պարագրաֆը), և

(vi) երրորդ կողմին փոխանցված պարտավորությունների ապաճանաչում.

բ) փոփոխություններ՝ կապված այն ծառայությունների հետ, որոնց գծով կազմակերպությունը հատուցում չի ակնկալում, այսինքն՝ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչի ավելացումներ և նվազեցումներ (տես 47-52-րդ պարագրաֆները):

Բ124. Հետևաբար, ժամանակաշրջանի ապահովագրական հասույթը կարող է նաև որոշվել որպես տվյալ ժամանակաշրջանի ընթացքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության ընդհանուր փոփոխություն՝ կապված այն ծառայությունների հետ, որոնց գծով կազմակերպությունն ակնկալում է հատուցում ստանալ: Այդ փոփոխություններն են՝

ա) ժամանակաշրջանում կրած՝ ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր (չափված՝ ժամանակաշրջանի սկզբին ակնկալվող գումարով), բացառելով՝

(i) մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին բաշխված գումարները՝ 51(ա) պարագրաֆի համաձայն,

(ii) ներդրումային բաղադրիչների գծով վճարումները,

(iii) գումարներ, որոնք առնչվում են գործարքի հետ կապված հարկերին՝ հավաքագրված երրորդ անձանց անունից (ինչպիսիք են ապահովագրական վճարի հարկը, ավելացված արժեքի հարկը և ապրանքների ու ծառայությունների հարկերը) (տես Բ65(թ) պարագրաֆը),

(iv) ապահովագրության ձեռքբերման հետ կապված ծախսերը (տես Բ125 պարագրաֆը),

բ) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման փոփոխությունը, բացառելով՝

(i) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներում կամ ծախսերում ներառված փոփոխությունները, 87-րդ պարագրաֆին համապատասխան,

(ii) փոփոխությունները, որոնք ճշգրտում են պայմանագրային ծառայությունների մարժան, քանի որ դրանք առնչվում են ապագա ծառայություններին, համաձայն 44(գ) և 45(գ) պարագրաֆների, և

(iii) մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին բաշխված գումարները՝ 51(բ) պարագրաֆի համաձայն,

գ) ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում ճանաչված պայմանագրային ծառայությունների մարժայի գումարը, 44(ե) և 45(ե) պարագրաֆներին համապատասխան:

Բ125. Կազմակերպությունը պետք է որոշի ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերին առնչվող ապահովագրական հասույթը՝ այդ դրամական հոսքերի վերականգնման հետ կապված անհրաժեշտ ապահովագրական վճարների մասնաբաժինը ժամանակի անցմանը համամասնորեն, պարբերական հիմունքով վերագրելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին: Կազմակերպությունը նույն գումարի չափով պետք է ճանաչի ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր:

Բ126. Երբ կազմակերպությունը կիրառում է 55-58-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, ժամանակաշրջանի ապահովագրական հասույթը տվյալ ժամանակաշրջանին վերագրված ապահովագրական վճարների ակնկալվող մուտքերն են (բացառելով ցանկացած ներդրումային բաղադրիչ և ճշգրտված՝ արտացոլելու փողի ժամանակային արժեքն ու ֆինանսական ռիսկի ազդեցությունը, եթե կիրառելի է, համաձայն 56-րդ պարագրաֆի): Կազմակերպությունը պարտավոր է ապահովագրական վճարների ակնկալվող մուտքերը բաշխել ծածկույթի յուրաքանչյուր ժամանակաշրջանի վրա՝

- ա) ժամանակի անցմանը համամասնորեն, սակայն՝
- բ) եթե ծածկույթի ժամանակահատվածի ընթացքում ռիսկի ազատման ակնկալվող սխեման նշանակալիորեն տարբերվում է ժամանակի անցումն արտացոլող վերը նշված սխեմայից, ապա՝ ապահովագրական ծառայությունների գծով ծախսերը կրելու ակնկալվող ժամկետի հիման վրա:

Բ127. Կազմակերպությունն անհրաժեշտության դեպքում պետք է փոփոխի բաշխման հիմունքը Բ126(ա) և Բ126(բ) պարագրաֆների միջև, եթե փաստերն ու հանգամանքները փոխվում են:

Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր (պարագրաֆներ 87-92)

Բ128. 87-րդ պարագրաֆը կազմակերպությունից պահանջում է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներում կամ ծախսերում ներառել ֆինանսական ռիսկին առնչվող ենթադրություններում փոփոխությունների ազդեցությունը: ՖՀՄՍ 17-ի կիրառման նպատակով՝

- ա) ինֆլյացիայի վերաբերյալ ենթադրությունները, որոնք հիմնված են գների կամ դրույքների ինդեքսի կամ ակտիվների գների վրա, որոնց գծով հատույցը կախվածություն ունի ինֆլյացիայից, ֆինանսական ռիսկին առնչվող ենթադրություններ են, և
- բ) ինֆլյացիայի վերաբերյալ ենթադրությունները, որոնք հիմնված են որոշակի գների փոփոխությունից կազմակերպության ակնկալիքների վրա, ֆինանսական ռիսկին առնչվող ենթադրություններ չեն:

Բ129. 88-89-րդ պարագրաֆները կազմակերպությունից պահանջում են կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն՝ կապված, թե ցանկանում է արդյոք ժամանակաշրջանի համար ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը բաշխել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև: Կազմակերպությունը պետք է իր ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառի ապահովագրության պայմանագրերի պորտֆելների նկատմամբ: «Հաշվապահական

հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8-ի 13-րդ պարագրաֆի համաձայն ապահովագրության պայմանագրերի պորտֆելի համար հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականություն որոշելիս կազմակերպությունը պետք է յուրաքանչյուր պորտֆելի գծով դիտարկի իր կողմից պահվող ակտիվները և թե ինչպես է հաշվառում այդ ակտիվները:

Բ130. Եթե կիրառվում է 88(բ) պարագրաֆը, կազմակերպությունը պետք է շահույթում կամ վնասում ներառի գումար, որը որոշվել է ակնկալվող ընդհանուր ֆինանսական եկամուտները կամ ծախսերը ապահովագրության պայմանագրերի խմբի գործողության ժամկետի ընթացքում պարբերական հիմունքով բաշխելու միջոցով: Այս համատեքստում, պարբերական բաշխումը ապահովագրության պայմանագրերի խմբի գծով ակնկալվող ընդհանուր ֆինանսական եկամուտների կամ ծախսերի՝ այդ խմբի գործողության ժամկետի ընթացքում բաշխումն է, որը՝

ա) հիմնված է պայմանագրերի բնութագրերի վրա, առանց հաշվի առնելու գործոնները, որոնք չեն ազդում պայմանագրերի ներքո ակնկալվող դրամական հոսքերի վրա: Օրինակ, ֆինանսական եկամուտների կամ ծախսերի բաշխումը չպետք է հիմնված լինի ակտիվներից ակնկալվող ճանաչված հատույցների վրա, եթե այդ ակնկալվող ճանաչված հատույցները չեն ազդում խմբի պայմանագրերի գծով դրամական հոսքերի վրա,

բ) հանգեցնում է նրան, որ պայմանագրերի խմբի գործողության ժամկետի ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարները կազմում են զրո: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ցանկացած ամսաթվի դրությամբ ճանաչված կուտակային գումարն իրենից ներկայացնում է պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի և այն գումարի միջև տարբերությունը, որով պարբերական բաշխումը կիրառելու դեպքում կչափվեր խումբը:

Բ131. Ապահովագրության պայմանագրերի այն խմբերի դեպքում, որոնց համար ֆինանսական ռիսկի հետ կապված ենթադրություններում փոփոխությունները նշանակալի ազդեցություն չունեն ապահովադրին վճարվող գումարների վրա, պարբերական բաշխումը որոշվում է՝ օգտագործելով Բ72(ե)(i) պարագրաֆում ներկայացված զեղչման դրույքները:

Բ132. Ապահովագրության պայմանագրերի այն խմբերի դեպքում, որոնց համար ֆինանսական ռիսկի հետ կապված ենթադրություններում փոփոխությունները նշանակալի ազդեցություն ունեն ապահովադրին վճարվող գումարների վրա՝

ա) ապագա դրամական հոսքերի գնահատումներից առաջացող ֆինանսական եկամուտների կամ ծախսերի պարբերական հիմունքով բաշխումը կարող է որոշվել հետևյալ եղանակներից մեկով՝

- (i) օգտագործելով դրույք, որը ֆինանսական եկամուտների կամ ծախսերի վերանայված ակնկալվող մնացորդը հաստատուն դրույքով բաշխում է պայմանագրերի խմբի գործողության մնացորդային ժամկետի ընթացքում, կամ
 - (ii) այն պայմանագրերի համար, որոնք ապահովադիրներին վճարման ենթակա գումարները որոշելու համար կիրառում են հաշվեգրման դրույք՝ օգտագործելով բաշխում, որը հիմնված է ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված և ապագա ժամանակաշրջաններում հաշվեգրվելիք գումարների վրա.
- բ) ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտմամբ պայմանավորված ֆինանսական եկամուտների կամ ծախսերի պարբերական հիմքունով բաշխումը, 81-րդ պարագրաֆի համաձայն ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման այլ փոփոխություններից առանձին ներկայացվելու դեպքում, որոշվում է՝ օգտագործելով բաշխման այն մեթոդը, որը համապատասխանում է ապագա դրամական հոսքերից առաջացող ֆինանսական եկամուտները կամ ծախսերը պարբերական հիմունքով բաշխելիս կիրառված մեթոդին:
- գ) պայմանագրային ծառայությունների մարժայով պայմանավորված ֆինանսական եկամուտների կամ ծախսերի պարբերական հիմունքով բաշխումը որոշվում է՝
- (i) ուղղակի մասնակցության հատկանիշներ չունեցող ապահովագրության պայմանագրերի համար՝ օգտագործելով F72(բ) պարագրաֆում ներկայացված զեղչման դրույքները. և
 - (ii) ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար՝ օգտագործելով բաշխման այն մեթոդը, որը կիրառվել է ապագա դրամական հոսքերից առաջացող ֆինանսական եկամուտները կամ ծախսերը պարբերական հիմքունով բաշխելիս:

F133. Ապահովագրության պայմանագրերի նկատմամբ 53-59-րդ պարագրաֆներում նկարագրված ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը կիրառելիս, կազմակերպությունը կարող է պարտավորված լինել կամ կարող է նախընտրել զեղչելու կրած պահանջների գծով պարտավորությունը: Այսպիսի դեպքերում, նա կարող է նախընտրել՝ ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը բաժանել 88(բ) պարագրաֆի համաձայն: Եթե կազմակերպությունն նախընտրում է այս տարբերակը, ապա պետք է շահույթում կամ վնասում արտացոլման ենթակա ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը որոշի՝ օգտագործելով F72(ե)(iii) պարագրաֆում ներկայացված զեղչման դրույքը:

F134. 89-րդ պարագրաֆը կիրառվում է, եթե կազմակերպությունն իր ընտրությամբ կամ պարտավորված լինելով տիրապետում է ուղղակի մասնակցության հատկանիշներով

ապահովագրության պայմանագրերի գծով հիմքում ընկած հողվածների: Եթե կազմակերպությունը պարագրաֆ 89(բ)-ի համաձայն նախընտրել է բաժանել ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը, ապա պետք է շահույթում կամ վնասում ներառի ծախսեր կամ եկամուտներ, որոնք ճշգրիտ կերպով համընկնում են հիմքում ընկած հողվածների գծով շահույթում կամ վնասում ներառված եկամուտներին կամ ծախսերին, ինչի արդյունքում առանձին ներկայացված երկու հողվածների գուտ գումարը հավասար կլինի զրոյի:

Բ135. Կազմակերպությունը որոշ ժամակաշրջաններում կարող է բավարարել 89-րդ պարագրաֆով սահմանված հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության պայմաններին, իսկ որոշներում՝ չբավարարել, կախված այն հանգամանքից՝ արդյոք տիրապետում է հիմքում ընկած հողվածների, թե ոչ: Եթե այդ փոփոխությունը տեղի է ունենում, կազմակերպությունը հասանելի հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը 88-րդ պարագրաֆում ներկայացված տարբերակից փոխվում է 89-րդ պարագրաֆում ներկայացվածին և հակառակը: Այսպիսով, կազմակերպությունն իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կարող է փոխել պարագրաֆ 88(բ)-ում և պարագրաֆ 89(բ)-ում ներկայացված տարբերակների միջև: Այդպիսի փոփոխություն կատարելիս կազմակերպությունը պետք է՝

ա) մինչև փոփոխության ամսաթիվը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային գումարը, որպես վերադասակարգման ճշգրտում, ներառի փոփոխման ժամանակաշրջանի և ապագա ժամանակաշրջանների շահույթում կամ վնասում, հետևյալ կերպ՝

(i) եթե կազմակերպությունը նախկինում կիրառել է 88(բ) պարագրաֆը՝ կազմակերպությունը պետք է շահույթում կամ վնասում ներառի մինչև փոփոխությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային գումարը այնպես, կարծես թե կազմակերպությունը շարունակել է կիրառել 88(բ) պարագրաֆում ներկայացված մոտեցումը՝ հիմք ընդունելով անմիջականորեն մինչև փոփոխությունը կիրառված ենթադրությունները, և

(ii) եթե կազմակերպությունը նախկինում կիրառել է 89(բ) պարագրաֆը՝ կազմակերպությունը պետք է շահույթում կամ վնասում ներառի մինչև փոփոխությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային գումարն այնպես, կարծես թե կազմակերպությունը շարունակել է կիրառել 89(բ) պարագրաֆում ներկայացված մոտեցումը՝ հիմք ընդունելով անմիջականորեն մինչև փոփոխությունը կիրառված ենթադրությունները.

բ) չվերաներկայացնի նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը:

Բ136. Բ135(ա) պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը չպետք է վերահաշվարկի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային գումարը, կարծես թե նոր բաժանումը միշտ կիրառվել է, իսկ ապագա ժամանակաշրջաններում վերադասակարգումների համար օգտագործված ենթադրությունները փոփոխության ամսաթվից հետո չպետք է թարմացվեն:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

Բ137. Չնայած «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՍ 34-ի պահանջին, որ կազմակերպության հաշվետվությունների հաճախականությունը չպետք է ազդի իր տարեկան արդյունքների չափման վրա, կազմակերպությունը չպետք է փոփոխի նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների հաշվառման կարգը, երբ հետագա միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կամ տարեկան հաշվետու ժամանակաշրջանում կիրառում է ՖՀՄՍ 17-ը:

Հավելված Գ

Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

Սույն հավելվածը «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՍ 17-ի անբաժան մասն է:

Ուժի մեջ մտնելը

- Գ1. Կազմակերպությունը պետք է ՖՀՄՍ 17-ը կիրառի 2021թ.-ի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը ՖՀՄՍ 17-ը կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա պետք է բացահայտի այդ փաստը: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է այն կազմակերպությունների համար, որոնք նախքան ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ամսաթիվը կամ այդ ամսաթվից սկսած կիրառում են «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը և «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ՖՀՄՍ 15-ը:
- Գ2. Անցումային դրույթների կիրառման նպատակով Գ1 և Գ3-Գ33 պարագրաֆներում՝
- ա) սկզբնական կիրառման ամսաթիվը ՖՀՄՍ 17-ի առաջին անգամ կիրառման տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկիզբն է,
 - բ) անցումային ամսաթիվը սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկիզբն է:

Անցումային դրույթներ

- Գ3. Կազմակերպությունը ՖՀՄՍ 17-ը պետք է կիրառի հետընթաց, քանի դեռ անհրազոր չէ, բացառությամբ, երբ՝
- ա) կազմակերպությունից չի պահանջվում ներկայացնել «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8-ի պարագրաֆ 28(զ)-ով պահանջվող քանակական տեղեկատվությունը, և
 - բ) կազմակերպությունը չի կարող կիրառել F115 պարագրաֆով սահմանված հնարավորությունը նախքան ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ամսաթիվը ընկած ժամանակաշրջանների համար:
- Գ4. ՖՀՄՍ 17-ը հետընթաց կիրառելու համար կազմակերպությունը անցումային ամսաթվի դրությամբ պետք է՝
- ա) ապահովագրության պայմանագրերի յուրաքանչյուր խումբ նույնականացնի, ճանաչի և չափի այնպես, կարծես ՖՀՄՍ 17-ը միշտ կիրառվել է,
 - բ) ապաճանաչի առկա այն մնացորդները, որոնք չէին լինի, եթե ՖՀՄՍ 17-ը միշտ կիրառվեր, և

գ) առաջացող ցանկացած զուտ տարբերություն ճանաչի սեփական կապիտալում:

Գ5. Այն և միայն այն դեպքում, եթե կազմակերպության համար ապահովագրության պայմանագրերի խմբի նկատմամբ Գ3 պարագրաֆի կիրառումն անհրազործելի է, կազմակերպությունը պարագրաֆ Գ4(ա)-ի փոխարեն պետք է կիրառի հետևյալ մոտեցումները՝

ա) վերափոխված հետընթաց մոտեցումը՝ Գ6-Գ19 պարագրաֆների համաձայն, հաշվի առնելով Գ6(ա) պարագրաֆի պահանջները, կամ

բ) իրական արժեքի մոտեցումը՝ Գ20-Գ24 պարագրաֆների համաձայն:

Վերափոխված հետընթաց մոտեցում

Գ6. Վերափոխված հետընթաց մոտեցման նպատակը հետընթաց կիրառմանը հնարավոր ամենամոտ արդյունք ապահովելն է՝ օգտագործելով ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Հետևաբար, այս մոտեցումը կիրառելիս, կազմակերպությունը պետք է՝

ա) օգտագործի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն: Եթե կազմակերպությունը չի կարող ձեռք բերել ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն, որն անհրաժեշտ է վերափոխված հետընթաց մոտեցման կիրառման համար, ապա պետք է կիրառի իրական արժեքի մոտեցումը:

բ) առավելագույնի հասցնի այն տեղեկատվության օգտագործումը, որը կօգտագործվեր հետընթաց մոտեցման ամբողջական կիրառման դեպքում, սակայն օգտագործի միայն այնպիսի տեղեկատվություն, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի:

Գ7. Գ9-Գ19 պարագրաֆները սահմանում են հետընթաց կիրառման թույլատրելի վերափոխումներ հետևյալ ասպեկտներում՝

ա) ապահովագրության պայմանագրերի կամ ապահովագրության պայմանագրերի խմբերի գնահատումներ, որոնք կիրականացվեին պայմանագրի գործողության սկզբում կամ սկզբնական ճանաչման ամսաթվին:

բ) պայմանագրային ծառայությունների մարժայի կամ վնասի բաղադրիչի հետ կապված գումարներ՝ առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով:

գ) պայմանագրային ծառայությունների մարժայի կամ վնասի բաղադրիչի հետ կապված գումարներ՝ ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի գծով:

դ) ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր:

Գ8. Վերափոխված հետընթաց մոտեցման նպատակին հասնելու համար կազմակերպությանը թույլատրված է օգտագործել Գ9-Գ19 պարագրաֆներով ներկայացված վերափոխումներից յուրաքանչյուրը միայն այն դեպքում, եթե

կազմակերպությունը չունի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն հետընթաց մոտեցումը կիրառելու համար:

Գնահատումներ պայմանագրի գործողության սկզբում կամ սկզբնական ճանաչման ամսաթվին

Գ9. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, կազմակերպությունը պետք է որոշի հետևյալ հարցերը, օգտագործելով անցումային ամսաթվի դրությամբ առկա տեղեկատվությունը՝

- ա) ինչպես նույնականացնել ապահովագրության պայմանագրերի խմբերը, կիրառելով 14-24-րդ պարագրաֆները,
- բ) արդյոք ապահովագրության պայմանագիրը բավարարում է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրի սահմանմանը, կիրառելով Բ101-Բ109 պարագրաֆները, և
- գ) ինչպես նույնականացնել առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով հայեցողական դրամական հոսքերը, կիրառելով Բ98-Բ100 պարագրաֆները:

Գ10. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, կազմակերպությունը չպետք է կիրառի 22-րդ պարագրաֆը՝ խմբերը այնպիսի ենթախմբերի բաժանելու, որոնք չեն ներառի ավելի քան մեկ տարվա տարբերությամբ թողարկված պայմանագրեր:

Առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի կամ վնասի բաղադրիչի որոշում

Գ11. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի համար կազմակերպությունն անցումային ամսաթվին պետք է որոշի պայմանագրային ծառայությունների մարժան կամ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչը (տես 49-52-րդ պարագրաֆները)՝ կիրառելով Գ12-Գ16 պարագրաֆները:

Գ12. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, կազմակերպությունն ապագա դրամական հոսքերը պետք է գնահատի ապահովագրության պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվին՝ որպես անցումային ամսաթվի դրությամբ ապագա դրամական հոսքերի գումար (կամ ավելի վաղ ամսաթվին, եթե ապագա դրամական հոսքերն այդ վաղ ամսաթվին կարող են որոշվել հետընթաց՝ կիրառելով Գ4(ա) պարագրաֆը), ճշգրտված այն դրամական հոսքերով, որոնք հայտնի են, որ առաջացել են ապահովագրության պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի և անցումային ամսաթվի (կամ ավելի վաղ ամսաթվի) միջև ընկած ժամանակահատվածում: Դրամական հոսքերը, որոնք հայտնի են, որ առաջացել են,

ներառում են այն դրամական հոսքերը, որոնք մինչև անցումային ամսաթիվը իրենց գործողությունը դադարեցրած պայմանագրերի արդյունք են:

Գ13. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, կազմակերպությունը պետք է որոշի գեղչման դրույքները, որոնք կիրառվել են ապահովագրության պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվին (կամ հետագայում)

ա) օգտագործելով դիտելի եկամտաբերության կորը, որը, անցումային ամսաթվին անմիջապես նախորդող նվազագույնը երեք տարվա ընթացքում մոտարկում է 36-րդ և Բ72-Բ85 պարագրաֆների համաձայն գնահատված եկամտաբերության կորին, եթե այդպիսի դիտելի եկամտաբերության կոր գոյություն ունի.

բ) եթե «ա» կետում նշված դիտելի եկամտաբերության կորը գոյություն չունի, գնահատի գեղչման դրույքները, որոնք կիրառվել են սկզբնական ճանաչման ամսաթվին (կամ հետագայում)՝ դիտելի եկամտաբերության կորի և 36-րդ ու Բ72-Բ85 պարագրաֆների համաձայն գնահատված եկամտաբերության կորի միջև ընկած միջին տիրույթը որոշելով և կիրառելով այդ տիրույթը տվյալ դիտելի եկամտաբերության կորի նկատմամբ: Տվյալ տիրույթը պետք է իրենից ներկայացնի անցումային ամսաթվին անմիջապես նախորդող նվազագույնը երեք տարվա համար միջին մեծություն:

Գ14. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, կազմակերպությունը ապահովագրության պայմանագրերի խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ (կամ հետագայում) պետք է որոշի ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը՝ անցումային ամսաթվին ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումը նախքան անցումային ամսաթիվը ռիսկի ակնկալվող ազատման չափով ճշգրտելու միջոցով: Ռիսկի ակնկալվող ազատումը պետք է որոշվի հղում կատարելով համանման ապահովագրության պայմանագրերի գծով ռիսկի ազատմանը, որոնք անցումային ամսաթվի դրությամբ թողարկվել են կազմակերպության կողմից:

Գ15. Եթե Գ12-Գ14 պարագրաֆների կիրառումը հանգեցնում է սկզբնական ճանաչման պահին պայմանագրային ծառայությունների մարժայի առաջացման, ապա պայմանագրային ծառայությունների մարժան անցումային ամսաթվին որոշելու համար կազմակերպությունը պետք է՝

ա) եթե կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին կիրառված գեղչման դրույքները գնահատելու համար կիրառում է Գ13 պարագրաֆը, այդ դրույքներն օգտագործի պայմանագրային ծառայությունների մարժայի գծով տոկոսները հաշվեգրելու համար. և

բ) այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, նախքան անցումային ամսաթիվը ծառայությունների փոխանցման հետևանքով շահույթում կամ վնասում ճանաչված պայմանագրային ծառայությունների մարժայի մեծությունը որոշի՝ այդ ամսաթվի դրությամբ մնացորդային ծածկույթի միավորները

համեմատելով նախքան անցումային ամսաթիվը պայմանագրերի խմբի ներքո տրամադրված ծածկույթի միավորների հետ (տես Բ119 պարագրաֆը):

Գ16. Եթե Գ12-Գ14 պարագրաֆների կիրառումը սկզբնական ճանաչման պահին հանգեցնում է մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչի առաջացման, ապա կազմակերպությունը պետք է նախքան անցումային ամսաթիվը վնասի բաղադրիչին բաշխված ցանկացած գումար որոշի՝ կիրառելով Գ12-Գ14 պարագրաֆները և օգտագործելով բաշխման պարբերական հիմունք:

Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի կամ վնասի բաղադրիչի որոշում

Գ17. Այն չափով, որքանով թույլատրված է Գ8 պարագրաֆով, ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի գծով կազմակերպությունն անցումային ամսաթվին պետք է որոշի պայմանագրային ծառայությունների մարժան կամ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչը որպես՝

ա) այդ ամսաթվի դրությամբ հիմքում ընկած հոդվածների ընդհանուր իրական արժեք, հանած

բ) այդ ամսաթվի դրությամբ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր, գումարած կամ հանած

գ) ճշգրտումներ հետևյալների գծով՝

(i) գումարներ, որոնք կազմակերպությունը գանձել է ապահովադիրներից (ներառյալ՝ հիմքում ընկած հոդվածներից նվազեցված գումարները) նախքան այդ ամսաթիվը.

(ii) գումարներ, վճարված նախքան այդ ամսաթիվը, որոնց փոփոխականությունը կախված չէր լինի հիմքում ընկած հոդվածներից,

(iii) փոփոխությունն ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման մեջ, որն առաջացել է նախքան այդ ամսաթիվը ռիսկի ազատումից: Կազմակերպությունն այս գումարը պետք է գնահատի՝ հղում կատարելով անցումային ամսաթվի դրությամբ կազմակերպության կողմից թողարկված համանման ապահովագրության պայմանագրերի գծով ռիսկի ազատմանը.

դ) եթե «ա»-«գ» կետերը հանգեցնում են պայմանագրային ծառայությունների մարժայի առաջացման, ապա՝ հանած նախքան այդ ամսաթիվը մատուցված ծառայությունների գծով պայմանագրային ծառայությունների մարժան: «ա»-«գ» կետերի հանրագումարը պայմանագրի խմբի ներքո մատուցվելիք բոլոր ծառայությունների գծով ընդհանուր պայմանագրային ծառայությունների մարժայի մոտավոր չափն է, այսինքն՝ նախքան մատուցված ծառայությունների գծով շահույթում կամ վնասում գումարներ կճանաչվեին: Մատուցված ծառայությունների գծով գումարները, որոնք ճանաչված կլինեին շահույթում

կամ վնասում, կազմակերպությունը պետք է որոշի՝ անցումային ամսաթվի դրությամբ մնացորդային ծածկույթի միավորները համեմատելով նախքան անցումային ամսաթիվը պայմանագրերի խմբի ներքո տրամադրված ծածկույթի միավորների հետ, կամ

- ե) եթե «ա»-«գ» կետերի հանրագումարը հանգեցնում է վնասի բաղադրիչի առաջացման՝ վնասի բաղադրիչը ճշգրտի մինչև զրո և վնասի բաղադրիչը բացառող նույն գումարի չափով ավելացնի մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը:

Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր

Գ18. Ապահովագրության պայմանագրերի այն խմբերի համար, որոնք, Գ10 պարագրաֆի համաձայն, ներառում են ավելի քան մեկ տարվա տարբերությամբ թողարկված պայմանագրեր՝

- ա) կազմակերպությանը թույլատրված է Բ72(բ)-Բ72(ե)(ii) պարագրաֆներով սահմանված խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ զեղչման դրույքները և Բ72(ե)(iii) պարագրաֆով սահմանված՝ կրած պահանջների ամսաթվի դրությամբ զեղչման դրույքները սկզբնական ճանաչման ամսաթվի կամ կրած պահանջների ամսաթվի փոխարեն որոշել անցումային ամսաթվին.

- բ) եթե կազմակերպությունը նախընտրել է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը 88(բ) կամ 89(բ) պարագրաֆների համաձայն բաշխել շահույթում կամ վնասում ներառվող գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառվող գումարների միջև, կազմակերպությանը պետք է որոշի ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի կուտակային գումարը, որն անցումային ամսաթվի դրությամբ ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 91(ա) պարագրաֆն ապագա ժամանակաշրջաններում կիրառելու համար: Կազմակերպությանը թույլատրված է այդ կուտակային գումարը որոշել կամ Գ19 (բ) պարագրաֆը կիրառելով կամ՝

- (i) որպես զրո, բացառությամբ, եթե կիրառվում է (ii) ենթակետը, և

- (ii) ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կիրառվում է Բ134 պարագրաֆը, որպես հիմքում ընկած հողվածների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային գումարին հավասար գումար:

Գ19. Ապահովագրության պայմանագրերի այն խմբերի համար, որոնք չեն ներառում ավելի քան մեկ տարվա տարբերությամբ թողարկված պայմանագրեր՝

- ա) եթե կազմակերպությունը կիրառում է Գ13 պարագրաֆը որոշելու զեղչման դրույքները, որոնք կիրառվել են սկզբնական ճանաչման ամսաթվին (կամ

հետագայում), պետք է նաև որոշի Բ72(բ)-Բ72(ե) պարագրաֆներով սահմանված զեղչման դրույքները՝ կիրառելով Գ13 պարագրաֆը. և

- բ) եթե կազմակերպությունը նախընտրել է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը 88(բ) կամ 89(բ) պարագրաֆների համաձայն բաշխել շահույթում կամ վնասում ներառվող գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառվող գումարների միջև, կազմակերպությանը պետք է որոշի ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի կուտակային գումարը, որն անցումային ամսաթվի դրությամբ ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 91(ա) պարագրաֆն ապագա ժամանակաշրջաններում կիրառելու համար: Կազմակերպությանը պետք է այդ կուտակային գումարը որոշի՝
- (i) ապահովագրության այն պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կազմակերպությունը կիրառելու է Բ131 պարագրաֆում նշված պարբերական բաշխման մեթոդները (եթե կազմակերպությունը սկզբնական ճանաչման ամսաթվին զեղչման դրույքները գնահատում է կիրառելով Գ13 պարագրաֆը)՝ օգտագործելով սկզբնական ճանաչման ամսաթվին կիրառված զեղչման դրույքները, կիրառելով նաև Գ13 պարագրաֆը,
 - (ii) ապահովագրության այն պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կազմակերպությունը կիրառելու է Բ132 պարագրաֆում նշված պարբերական բաշխման մեթոդները՝ այն հիմունքով, որ ֆինանսական ռիսկին առնչվող և սկզբնական ճանաչման ամսաթվին կիրառված ենթադրությունները անցումային ամսաթվին կիրառված ենթադրություններն են, այսինքն՝ հավասար են զրոյի,
 - (iii) ապահովագրության այն պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կազմակերպությունը կիրառելու է Բ133 պարագրաֆում նշված պարբերական բաշխման մեթոդները (եթե կազմակերպությունը սկզբնական ճանաչման ամսաթվին (կամ հետագայում) զեղչման դրույքները գնահատում է կիրառելով Գ13 պարագրաֆը)՝ օգտագործելով կրած պահանջների ամսաթվին կիրառված զեղչման դրույքները, կիրառելով նաև Գ13 պարագրաֆը, և
 - (iv) ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կիրառվում է Բ134 պարագրաֆը՝ որպես հիմքում ընկած հոդվածների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային գումարին հավասար գումար:

Իրական արժեքի մոտեցում

- Գ20. Իրական արժեքի մոտեցումը կիրառելու համար կազմակերպությունը պետք է որոշի անցումային ամսաթվի դրությամբ պայմանագրային ծառայությունների մարժան կամ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչը՝ որպես այդ ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի խմբի իրական արժեքի և նույն ամսաթվի դրությամբ չափված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի միջև տարբերություն: Նշված իրական արժեքը որոշելիս, կազմակերպությունը չպետք է կիրառի «Իրական արժեքի չափումը» ՖՀՄՄ 13-ի 47-րդ պարագրաֆը (կապված ցպահանջ հատկանիշի հետ):
- Գ21. Իրական արժեքի մոտեցումը կիրառելիս կազմակերպությունը կարող է կիրառել Գ22 պարագրաֆը, որոշելու՝
- ա) ինչպես նույնականացնել ապահովագրության պայմանագրերի խմբերը, կիրառելով 14-24-րդ պարագրաֆները,
 - բ) արդյոք ապահովագրության պայմանագիրը բավարարում է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրի սահմանմանը, կիրառելով Բ101-Բ109 պարագրաֆները, և
 - գ) ինչպես նույնականացնել առանց ուղղակի մասնակցության հատկանիշների ապահովագրության պայմանագրերի գծով հայեցողական դրամական հոսքերը, կիրառելով Բ98-Բ100 պարագրաֆները:
- Գ22. Կազմակերպությունը կարող է նախընտրել լուծում տալ Գ21 պարագրաֆի հարցերին, օգտագործելով՝
- ա) ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն կապված նրա հետ, թե կազմակերպությունը ինչ կորոշեր՝ ըստ անհրաժեշտության պայմանագրի գործողության ժամկետի սկզբում կամ սկզբնական ճանաչման ամսաթվին պայմանագրի և շուկայական պայմանները հաշվի առնելով, կամ
 - բ) անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը:
- Գ23. Իրական արժեքի մոտեցումը կիրառելիս կազմակերպությունը պարտավոր չէ կիրառել 22-րդ պարագրաֆը և կարող է պայմանագրերի խմբում ներառել ավելի քան մեկ տարվա տարբերությամբ թողարկված պայմանագրերը: Կազմակերպությունը պետք է խմբերը բաժանի միայն մեկ տարվա ընթացքում (կամ ավելի քիչ ժամկետով) թողարկված պայմանագրեր ներառող խմբերի միայն այն դեպքում, եթե այդ բաժանումն իրականացնելու համար ունի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն: Անկախ 22-րդ պարագրաֆը կիրառելու հանգամանքից, կազմակերպությանը թույլատրված է Բ72(բ)-Բ72(ե)(ii) պարագրաֆներով սահմանված՝ խմբի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ զեղչման դրույքները և Բ72(ե)(iii) պարագրաֆով սահմանված՝ կրած պահանջների ամսաթվի դրությամբ զեղչման դրույքները որոշել

անցումային ամսաթվին՝ սկզբնական ճանաչման ամսաթվի կամ կրած պահանջների ամսաթվի փոխարեն:

- Գ24. Եթե իրական արժեքի մոտեցումը կիրառելիս կազմակերպությունը նախընտրել է ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը բաշխել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև, ապա թույլատրվում է անցումային ամսաթվի դրությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի կուտակային գումարը որոշել՝
- ա) հետընթաց, սակայն միայն այն դեպքում, եթե դրա համար առկա է ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն, կամ
 - բ) որպես զրո՝ բացառությամբ, եթե կիրառվում է «գ» ենթակետը, և
 - գ) ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար, որոնց նկատմամբ կիրառվում է Բ134 պարագրաֆը՝ որպես հիմքում ընկած հողվածների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային գումարին հավասար գումար:

Համադրելի տեղեկատվություն

- Գ25. Չնայած Գ2(բ) պարագրաֆում սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանին կատարված հղմանը, կազմակերպությունը ՖՀՄՍ 17-ը կիրառելիս կարող է, սակայն պարտավոր չէ, ներկայացնել ճշգրտված համադրելի տեղեկատվություն ներկայացված ավելի վաղ ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը ներկայացնում է ճշգրտված համադրելի տեղեկատվություն ավելի վաղ ժամանակաշրջանների համար, ապա Գ2(բ) պարագրաֆում կատարված՝ «սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ» հղումը պետք է ընթերցվի որպես «ներկայացված ամենավաղ ճշգրտված համադրելի ժամանակաշրջանի սկիզբ»:
- Գ26. Կազմակերպությունից չի պահանջվում ներկայացնել 93-132-րդ պարագրաֆներով սահմանված բացահայտումները ցանկացած այն ժամանակաշրջանի համար, որը ներկայացվել է նախքան սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը:
- Գ27. Եթե կազմակերպությունը չճշգրտված համադրելի տեղեկատվություն և բացահայտումներ է ներկայացնում ցանկացած ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա պարտավոր է հստակ նույնականացնել չճշգրտված տեղեկատվությունը, բացահայտել, որ այն պատրաստվել է այլ հիմունքով և բացատրել այդ հիմունքը:
- Գ28. Անհրաժեշտություն չկա, որ կազմակերպությունը նախկինում չհրապարակված տեղեկատվություն բացահայտի պահանջների զարգացման ընթացքի վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել ավելի քան հինգ տարի առաջ, նախքան ՖՀՄՍ 17-ի առաջին անգամ կիրառման հաշվետու ժամանակաշրջանի ավարտը: Այնուամենայնիվ, եթե

կազմակերպությունը չի բացահայտում այդ տեղեկատվությունը, այդ փաստը պետք է բացահայտի:

Ֆինանսական ակտիվների վերանախորոշում

Գ29. Կազմակերպությունը, որը մինչև ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառումն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառել է ՖՀՄՍ 9-ը, ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ամսաթվին՝

ա) կարող է վերանայել՝ արդյոք համապատասխանող ֆինանսական ակտիվը բավարարում է ՖՀՄՍ 9-ի 4.1.2(ա) կամ 4.1.2Ա(ա) պարագրաֆների պայմանին: Ֆինանսական ակտիվը համապատասխանող է, եթե ֆինանսական ակտիվը չի պահվում այն գործունեության գծով, որը կապված չէ ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի հետ: Ֆինանսական ակտիվների օրինակներ, որոնք վերանայման ենթակա չեն լինի, այն ֆինանսական ակտիվներն են, որոնք պահվում են բանկային գործունեության հետ կապված կամ ֆինանսական ակտիվներ, որոնք պահվում են ֆոնդերում՝ կապված ներդրումային պայմանագրերի հետ, որոնք դուրս են ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտից:

բ) պետք է չեղյալ համարի ֆինանսական ակտիվի համար իր նախկին նախորոշումը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այդ ֆինանսական ակտիվը ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ պայմանավորված այլևս չի բավարարում ՖՀՄՍ 9-ի 4.1.5 պարագրաֆի պայմանին.

գ) կարող է նախորոշել ֆինանսական ակտիվը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե ՖՀՄՍ 9-ի 4.1.5 պարագրաֆի պայմանը բավարարված է.

դ) կարող է նախորոշել բաժնային գործիքում ներդրումը որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ կիրառելով ՖՀՄՍ 9-ի 5.7.5 պարագրաֆը.

ե) կարող է չեղյալ համարել բաժնային գործիքում ներդրման իր նախկին նախորոշումը, որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ կիրառելով ՖՀՄՍ 9-ի 5.7.5 պարագրաֆը:

Գ30. Կազմակերպությունը պետք է կիրառի Գ29 պարագրաֆը հիմնվելով փաստերի ու հանգամանքների վրա, որոնք առկա են ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ամսաթվին: Կազմակերպությունն այդ նախորոշումներն ու դասակարգումները պետք է կիրառի հետընթաց: Այդ դեպքում կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՍ 9-ի անցումային համապատասխան պահանջները: Այդ նպատակով սկզբնական կիրառման ամսաթիվ պետք է համարվի ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ամսաթիվը:

Գ31. Կազմակերպությունը, որը կիրառում է Գ29 պարագրաֆը, պարտավոր չէ վերաներկայացնել նախորդ ժամանակաշրջանները՝ նախորոշումներում կամ

դասակարգումներում նման փոփոխություններն արտացոլելու համար: Կազմակերպությունը կարող է վերաներկայացնել նախորդ ժամանակաշրջանները միայն այն դեպքում, երբ դա հնարավոր է առանց ավելի ուշ ստացված տեղեկատվության օգտագործման: Եթե կազմակերպությունը վերաներկայացնում է նախորդ ժամանակաշրջանները, վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունները պետք է արտացոլեն ՖՀՄՍ 9-ի բոլոր պահանջները՝ դրա ազդեցությունը կրած ֆինանսական ակտիվների վրա: Եթե կազմակերպությունը չի վերաներկայացնում նախորդ ժամանակաշրջանները, ապա պետք է սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում (կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչում, եթե տեղին է) ճանաչի ցանկացած տարբերություն, որն առաջանում է՝

- ա) այդ ֆինանսական ակտիվների նախկին հաշվեկշռային արժեքի և
- բ) այդ ֆինանսական ակտիվների՝ սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքի միջև:

Գ32. Երբ կազմակերպությունը կիրառում է Գ29 պարագրաֆը, ապա տվյալ տարեկան հաշվետու ժամանակաշրջանում, ըստ այդ ֆինանսական ակտիվների դասերի, պետք է բացահայտի՝

- ա) Գ29(ա) պարագրաֆի կիրառման դեպքում՝ համապատասխանող ֆինանսական ակտիվի որոշման հիմքերը,
- բ) Գ29(ա)-Գ29(ե) պարագրաֆներից ցանկացածի կիրառման դեպքում՝
 - (i) ազդեցություն կրած ֆինանսական ակտիվների չափման կատեգորիան և հաշվեկշռային արժեքը, որոնք որոշվել են անմիջապես մինչև ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ամսաթիվը, և
 - (ii) ազդեցություն կրած ֆինանսական ակտիվների նոր չափման կատեգորիան և հաշվեկշռային արժեքը, որոնք որոշվել են Գ29 պարագրաֆի կիրառումից հետո.
- գ) Գ29(բ) պարագրաֆի կիրառման դեպքում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը, որոնք նախկինում նախորոշվել են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ կիրառելով ՖՀՄՍ 9-ի 4.1.5 պարագրաֆը, սակայն այլևս չեն նախորոշվում որպես այդպիսին:

Գ33. Երբ կազմակերպությունը կիրառում է Գ29 պարագրաֆը, պետք է այդ տարեկան հաշվետու ժամանակաշրջանում բացահայտի որակական տեղեկատվություն՝ հնարավորություն տալու ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հասկանալ՝

- ա) ինչպես է կազմակերպությունը կիրառել Գ29 պարագրաֆը այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնց դասակարգումը փոխվել է ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման արդյունքում,
- բ) ՖՀՄՍ 9-ի 4.1.5 պարագրաֆի կիրառմամբ՝ ֆինանսական ակտիվները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախորոշելու կամ ապանախորոշելու պատճառները, և
- գ) ինչու է կազմակերպությունը ՖՀՄՍ 9-ի 4.1.2(ա) կամ 4.1.2Ա(ա) պարագրաֆների կիրառմամբ նոր գնահատման արդյունքում հանգել տարբեր եզրակացությունների:

Այլ ՖՀՄՍ-ների գործողության դադարեցումը

Գ34. ՖՀՄՍ 17-ը փոխարինում է 2016 թվականին փոփոխված *«Ապահովագրության պայմանագրեր»* ՖՀՄՍ 4-ին: